

Ltn
1469

1999

ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒԹԻՒՆ

ՈՒՍՈՒՑԻՉ

ԵՐԵՐՈՐԴ ՏԱՐՈՒՅՑ

ԴԱՍԱԳԻՐՔ

ԵՐԵՐՈՐԴ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

(Փակում է Անդրեաս Հայոց)

ՅՈՐԻՆԵՑ

ՅՈՎՀԱՆՆԻՍ ՆԱԶԱՐԵԱՆՑ:

Դուք քո լիզուն՝ որ իստակ խօսա,
 ի՞նչ վնասունի. Ի՞նչն զիտումնս, խելք
 ծեռիցդ կ'առնեն, թէ՝ սովորած իմաս-
 տութիւնդ ջուրը կը թափի:

Խ. Առողեանց.

ԳԻՆՆԵ 40 ԿՈՂ.

ՏՓՂԻՄ
ՏՊԱՐԱՆ Լ. Գ. ԿՐԱՄԱՐԵՆԿՈՅԻ.

1885

43875 - 6. 9.

1000

Հ Ա Յ Ո Ւ Ժ Ա

Յ Ա Կ Ո Գ Յ Տ Պ Ա Ր Ա Ր Ե

Հ Ա Յ Ո Ւ Ժ Ա

Մ Ա Գ Ա Վ Ա Ր Ա Ր Ե

(Հ Ա Յ Ո Ւ Ժ Ա Ր Ա Ր Ե)

Ց Ա Յ Ո Ւ Ժ Ա

Յ Ա Յ Ո Ւ Ժ Ա Ր Ա Ր Ե

Доз. цензурою Тифлисъ, 29-го Ноября 1884 года.

Типогр. Л. Г. Крамаренко на Мухранской улицѣ, въ домѣ
Демурова, № 13.

Հ Ա Յ Ո Ւ Ժ Ա

91469 - 60

29 Դ Ի Լ

Ց Ա Յ Ո Ւ Ժ Ա

Ս Պ Բ Փ Ը

1884 Հ Ա Յ Ո Ւ Ժ Ա Ր Ա Ր Ե

28248 - 62

Ց Ա Յ Ո Ւ Ժ Ա

ՆՈՐԻՆ ՍՈԲԱԶՆՈՒԹԵԱՆ

Վ Ր Ա Մ Մ Ա Ն Ի և Խ Ա Բ Ք Ե Ժ Ի Ժ Ե Մ Ի

Հ Ա Յ Ո Ւ Ժ Ա Ր Ա Ր Ե

Ա Ր Ի Ս Ա Կ Ե Ս Ե Պ Ի Ս Կ Ո Պ Ո Ս Ի Ն

Ի ւ ր Փ ոք Բ ի կ Վ ա ս տ ա կ ը

Ն Ո Ւ Ի Ր Ո Ւ Կ Ե

Ց Ա Յ Ո Ւ Ժ Ա

සුජ්‍යම්පූරුණ සිතුව

Digitized by Google

УЧЕБНОЕ ПОСОБИЕ

զիստանի քնոցուի ու ու

ପ୍ରମାଣନ୍ଦା

സിന്ദിനം

Երբեմն յառաջաբան զերծ ու պահանջ առնեցաւ վերը է. Ա-
շի դաստիք զմեն լուսաւոր աշխատական պահանջ առնեցաւ
առ այս ուժ (առաջաւոր) չէ և ուշագ ան ան ամ ուժի պահանջ
փորձ զմոյ և առաջ ընկած պահանջ (առաջաւոր) չէ և
ինչ ուղար առաջ պահանջ պահանջ ուղար ան մեջնուուց ըստ
ամեն զմոյ պահանջ առաջ պահանջ ուղար ան մեջնուուց
փորձ զմոյ պահանջ առաջ պահանջ ուղար ան մեջնուուց
չ մեջնուուց պահանջ պահանջ առաջ պահանջ ուղար ան մեջնուուց
Զեռք զարկելով գրքիս երրորդ տպագրութեանը՝ մենք
պարեւոր համարեցինք ներկայացնել հայ մանկանը հայաբնակ
ու կերպ և նոցա մէջ ապօռող հայեցինք.

Սակայն հարկաւոր ենք դատում մի երկու խօսք ասել:

Ա. Որովհետեւ բովանդակութիւնը ծառայում է լեզուի ուսուցմանը, ուստի նորա ամենահարկաւոր, տարրական ու մեր ընտրած հասակին մատչելի լինելու չափ օրէնքների մատակարարելը անհրաժեշտ ենք համարում սկզբեց իսկ սկսել: Այս նպատակով մենք այդ սկսում ենք ուղղակի առաջին դասից: Ամէն դասում, ինչպէս առաջնորդում է մեզ գէպքը՝ ուշք ենք դարձնում լեզուի տարրական կանոնները բացատրող որ և եցէ բառի վերայ, և մեր կողմէց էլ մի քանի օրէնակներ յատելացնելով՝ թողում ենք, որ մանուկը ինքը իւր ոյժերով մի յայտնի օրէնք եղակացնէ իւր համար: Եւ այդ երկու մասն ենք բաժանում: I. մասնում մըտնում են բուն լեզուին և II.ում նորա ուղղագրութեանը վերաբերեալ հարկաւոր գիտելիքները, որ մանուկները ուսուցչի օգնութեամբ իւրացնում են: Բուն լեզուին վերաբերեալ բացատրութիւններից շատերի մասին մեր խօսքը շատ չերկարացնելու համար ոչինչ չենք ասել: Այդ բոլորը հարկաւոր դէպքում ուսուցիչն ինքը առանց դժուարութեան կ'անէ ու կը լրացնէ: Ուղղագրութեան կանոնների բացառութիւններն էլ, որ դրուած են փակագծերում, այնքան են բերուած միայն, ուրքան ներում է մանկան հասկացողութեան աստիճանը:

Բ. Լեզուի ուսուցման համար մե՛ր թէև փոքրիկ, բայց
սկզբնական պաշտը ամբարելու նպատակով մենք դասերի վեր-
ջերումը բերել ենք նաև նոյնանիշ (synonyme) ու հակա-
նիշ (antonyme) բառերը: Հականիշը բառերը, որոնք լեզուի
աղքատութիւնն են ցոյց տալիս՝ բացատրուած են. բայց որով-
հեաւ դասագիրքը շատ չծանրաբեռնելու համար նոյնը չենք
արել նաև նոյնանիշների վերաբերութեամբ, որոնք լեզուի
հարստութիւնն են ցոյց տալիս, ուստի դարձեալ ուսուցչին է
մնում որ նորքան հնարաւոր է, լնիքը բացատրէ մանուկներին:
յաճախաց ցմայման լայն վաճառապետութեամբ գմբչիցանաց անգայի-
չաց լայն քայլու մին արու և յաճախաց

շատ զառյա արդիք վե նաուար գմբ զարթիսած պայման
-ու փորձ չ նաղաւած զմաժեռովարմախոց Առաջինու մ
ծաղանց ուն առ մայ աղջատ, զարթիսած ամենա ուրա զարթիսած
ու մայամատան փառմաժից փոց առաջմայ վերան միջաւը
խթանարա ալ զնուխ լոյ ընկրի նաղաւած գմբ ոչինարդմ
նաուար մինչ պատր միջաւա հիարքը գմբ նաուխ լոյ գմբն
փորձ նաուածուր գմբ ~~գումար ուղարկած~~ ուն չ նարքոնցուա սիրուն
և լուցմի ։ Պատր չոյ և ու բազուացա զդմմունի մայամայն
ոյ, գմբ նարօն խոյմայալայ զմմաժից մաս վե չէ ընկրու զնն
ոյ քմայտացը գմբց վերան մի խոյմեր ույ զգմի զիւնան
-ուն նաուածն ։ Նաուածն գմբ մասի արդիք րա ոյ ուրանը
-ու որ արքա աղու նաու և միւորձ մասու մն նաու
ցմմայունան ոյ զ զմմաժից զարթիսած ամենա զից զմբ
ամենա զից միարձ մաս մն նաուայալ զնումմունի զերանը
ուղամից ուր զգույ զնն միսան փյուսաց զդմմաժինուուացա
նաուայի զարթիսած զույո քլ յան գմբ չմից զանաշ առանց
միջաւը զի առ չմայք մամենուարդ զնուն զոյի միջաւան
ոյ ու ու զոյմ մայիս ու ու զանաշ զդմմունի մամենուացա
միջաւը նաուայ մն մայմայ նարդ նքայի մն նաուայ
մամենուարդ ու ու ու ու մայմայ չ նաուամ մա զ ու ու

ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒԻ ՈՒՍՈՒՑԻՉ
ՀԱՅԱՍՏԱՆ ԱԴՐԱՎՈՐԱՆ ՊՐԵՄԻՆ

Ա. ԲՆՈՒԹԵԱՆ ՊԱՏԿԵՐՆԵՐ

1. Աղաւոտեան արշալոյսը

Դեռ մութնոէրը ալիք լոյսին հետ պատերազմող մութը,
որ ժողովուրդը կոչումաէն Ադամայ մութ»։ աստղերը շող-
շողում էին երկնքից. իսկ Արուսեակը, երկնքի այդ
սիգաճեմ հարսիկը^(*), դեռ նոր իւր նազելի դէմքը ցոյց
էր տալիս հորիզոնի ետևից։ Երբեմն թփերի միջից լսելի
էր լինում նոր զարթած թռչունների շրկ չըկոցը, որպէս մի
նախերգանք, որով պատրաստում էին վառարանել տւըն-
ջեան լուսատուի գալուստը։ Ամէն կողմից շնչում էր ուրա-
խութիւն, ամէն տեղ զարթում էր կեանքը։

Թանձը մ առախուղին սկսեց փոքր առ փոքր նոսրանալ և կապուտ երկինքը տեղ տէղ բացուեցաւ. արեգակի ճառագայթները սկսեցին շողալ ալիք բացուածքներից, որպէս սպիտակ վրանի պատառուած ճեղքերից: Չնայելով որ ամառն էր, բայց վաղորդեան արեգակը դեռ անզօր էր ջերմացնելու լեռն ային օդի ցըտութիւնը: Առաւօտեան ցողը մանր գոհարների նման դեռ փաղում էր խոտաբոյսերի վերայ:

መርመራው ማኅይወጥነትኩብ ብዚያቸው
በቅርቡ የሆኑ ክፍል በመጠወቻ

(*) Առուսեակ պարսկերէն նշանակում է «Հարսն»:

ՆՈՑՆԱՆԻՇ ԲԱՐԵՐ.—Մառախուղ, մէկ:

I. ա.—Հարսնելի կ, թռչնելի, մանկելի, աստղելի.—Տն ա կ, նաւակ, գետակ, լճակ.—գառնուկ, ձագուկ.—գըքուկ:

բ.—Լեռնային օդ, ձմեռալին օր, մարդկային բնակարան, անձլեւային ամառ, պիշերային ժամերգութիւն, հանգային ջուր:

ବ୍ୟାକ୍ସନ୍ସିମ୍ବାର୍ଡ୍ ପାଇଁ ଆମେ ଏହିପରିଚାଯିତା ଦିଲାମି ।

2. Երշալոյս

Աղեղելքէն արշալուս,

Ծագեց մայլուն կարմիր լուս, ուն ամէ
Գուշ զզմբաս գունեղ զարդով շողացին զըստ զս
Թէ կանաչներ և թէ բոյս միջ և արց
Սըեգն յերկնից նազելով, միւս աշ նձնարին
Իւր բիւրագեղ ճածանչով, մարդին սիլառ զը
Մն սժբար, Արարատալ գագաթէն
Յուլայ ողջոյն ձօնելով; առարջայան
Ճերմակ շուշան, սարերան մասոյ մամէ

Բացեց թերթեց իւր սիրուն, մշևա ,մայնըրայ
աղսում զցով Ուրախ զըւարժ ակնարկեց առան զձմա՞ն
հիւարդյա . իւր բոլորի բոյսերունք ալոյալ մ յան
դու քիցդմց ծա Խոխով ջ ին ջ առուակ, մնիւարառած
զո խոյման Սարէն սահի դէպ ձորակ, վասդի թառիս սշա
զշ դօրմա Թաւալելով հետ ընթաց, այ ըստ զշ մոռնա
մահմառառ Թողու մեղմիկ աղաղակ: մոռ մշմանցանց
-լողառոս զշ ծոռողելով թռչուններ՝ յահար զման զրօն
Գարնան սիրուն երգի չներ՝ լայնի միա
Պղջուննեցին զառաւօտ,

ՆՈՅՆԱՆԻՇ. — Խոխողալ, կարկածել. — մաքուս, լստակ,
ջինջ. — սաւառնել, սլանալ, ճախըել:

І. а. **Фауна** ւն, սիրուն, փխրուն, թռչուն, սողուն, մածուն:
բ:—Գուն ե զ, ուժեղ, գօրեղ, համեղ: Խաղաղ և անդժման
գ:—Երք ե չ, քարոզել, ուսուցել, նկարել, գրել, պատարաց
ծայս պետ, Առաջարթեց: Եղմացմայս պայման շրջապատ
աշար վայել յարել սյուր ուժից զայ խցիւյան որու ուրու
ուղիւնան և այսմաց պահ կատարել ու կը ներբերէ Հ

3. Առաւոտը Վանայ գիւղերում.

Համացգալ մանջյոց յու չ յըրսնքանց ջէն զդմիաց
Նորմայոց չ օլոպ դն յանուա՞ Այս միջազգին պահ ունեմ պատ
լախ» դրի ի ոյ մ Ծ ք ա ջ դ մ ի պատահած դղարան վրային դու
նաթիւղացիները արդէն սթափել են այն փոքրիկ թռչնիկի
ձայնից, որ գալիս նստում է երդիկների վերայ ու կանչում.
«Լծէ, լծէ»։ Նոքա արդէն պատրաստել են իրանց արօրներն
ու լուծերը, երկերը բաւական հերկել են։ Տների մէջ մա-
տակներն ու կրովերը կիթել են։ Ոչխարի հօտը՝ գիշերուայ
ցօղով թրջուած մատղաշ արօտներից արդէն մի քաղցը նա-
խաճաշ է արել։ Մանտիկինն էլ նախիրն ու որթիկներն է
գուրս հանում։

Գիւղի աղջկերքն էլ մեզարներ կապած խումբ խումբ
գնում են դեպի մարդահովիտները, ծաղկները կոխելով,
ծաղկներ քաղելով և իրար վերալ ցանելով, ծիծաղելով,
խալտալով։ Հանդիպում են կաքաւների երամին, լորին, ար-
տուտիկին, որոնք իրանց ձագերով գըւգըւում են և խոտերի
տակից թռչոտում են թփից թուփ, տերևից տերև. ուզենալով
իրար նմանել. դու ասա թէ աղջկերքը թևաւոր թռչուն-
ներին, թէ թռչունները ոտնաթռչիկ աղջկանց։ Նոքա անց-
նում գնում են առաջ՝ բանջարներ ժողովելու, կանչելու.
աղջկերքը «քա՛, քա՛», կաքաւները՝ «գա՛ւ, գա՛ւ»։

բարեկամութեան է կազմել սլաքաձեւ, օդի բարձր
տեղերում անցնում է «կռու, կռու» կամչելով.—ծառայ եմ
ձախինքնաւում. շին հայոց հայուաց և քաջ—ք

Արագիւլը երկայն սրունքները քշտած, կտուցը սրած,
«Հօդ, հօդ» ձայնելով իւր բոյնից դուրս եկել դէպի դաշտ
է վազում՝ ջրի ու ցամաքի օձերը բռնելու և սպանելու,
իբրև ոստիկան և իբրև դատաւոր:

Զորթան—բարեւէլ կսղի պէս կիւղի տանիքները վերա! և
բակերի մէջ թագնուել է, որ չորթան յափշտակէ:

Կոյլ Բռն- ալս միջոցին իւր համար մի բոյն է որոնում,
որ ծածկուի ծուարի այստեղ, վերջացնելով իւր «վայ»,
«վայ» ձայնը, որ հնչեցնում էր մի չպացած ծառի կամ
գերեզմանաքարի վերայ նստած:

Յի՞ վեր ու վայր է սլանում, սուր ձայնով «ցիննինինի» կամչելով. և ջնշուր գետերի ափերն է վազում ու «ձըկ ձըկ» ձախ հանելով ձուկ մուկ է որոնում իռլ տալու:

Սանրակատար Յօպոսը անհանգիստ սատրստմէ և անդադար աղաղակում «յօպ, յօպ»:

Դէշտորբութէվ փափուկ ու մաքուր շդարձներ հագած,
ճերմակ ու դեղին և հարսների նման իւր աչքերը թուխ
դեղով ծարուրած՝ փոքրիկ մացառների միջից կամ խիտ
խոտերից իւր ձայնն է լսեցնում, իւր դէմքը ցոլց է տալիս
ու թալցնում և սոխակ չտեսած մարդկանց մօտ սոխակ է
ձեանում:

Սրբակն ձայնն էլ լսում է բոլոր երգողների ձայնի հետ.
նորա շունչը բնութեան բոլոր երաժշտական գեղգեղանքի
զսպանակն է։

Բարբարոս Բագդադի որոտընդուստ ձախով և շեշտակի սաւառմունքով վեր ու վայր է սլանում մի անմեղ ու անզգոյշ

աղաւանի կամ տատրակլ պատառուելու։ Ասկէ աշխատավորած քիչ աղաւանի կամ տատրակլ պատառուելու։ Ասկէ աշխատավորած քիչ աղաւանի կամ տատրակլ պատառուելու։ Ասկէ աշխատավորած քիչ աղաւանի կամ տատրակլ պատառուելու։

4. $\Psi^{wJ\bar{t}w}$

Ս. ԲՆՈՒԹԵԱՆ ԿԵՆԴԱՆԱՆԱԼԸ
Մայիս ամիսն է. գարունը իւր բոլոր փառաւորութիւնով ամէն շնչաւորների վերայ իւր հըաշաւէ տպաւորութիւնն է ներշնչել։ Վարդահատը բարակ զեփիւոի շնորհիւ ամէն կողմը հետդ ման է գալիս. լեռ ու դաշտ կանաչներով, սէզերով և «սիրի սիրի» համեստ երեքտերնեան խոտերով գարդարուել են, հազաւոր գոյնզգոյն ծաղկները երեսիդ ծիծաղում խնդում են և առհասարակ մի բուռը հող եղած տեղը բուսական թագաւորութիւնը իւր գահն է դրել։
Քարափների ծերպերիցն էլ կեանք է արտադրուում. մի կտոր կոշտ ընկած տեղն էլ կանաչի գլուխէ դուրս ցցուել. Էլ ապաւաժ ու մերկ գետին չէ մնացել։ Սքանչելի՛ է Մայիսը։ Թուչունները իրանց աղուամազ ձագերի համար կերակուրներ են տանում։ Ուր է վազվըզում օդի մէջ ծըւծըւան ծիծեռնակը։ Նալիք ալն ճնճղուկի կամ կտցահարի բոյներին։ Ի՞նչ-

պէս քնքուշիկ ձագուկները՝ դեղին երիզը կտուցի չորս կողմը
բաց են անում իրանց բերանները և լեզուիկները հանած,
ճիշ ու ծուոց բարձրացրած՝ կերակուր են խնդրում իրանց
մօրից. ի՞նչ քաղցր ճռուողիւն են բարձրացրել նոքա:

Սակայն այնպէս չէ կարգադրել բնութեան ամենագէտ
Արարիւը. թող ինչքան ուզում են, սիրուն ճռուտիկները
միմեանց առաջը կտրեն, մայրը իւր կարգը լաւ գիտէ. նա
երթը չէ կորցնում, նա իւր հաշուի մէջ չէ սխալում: Նա
լաւ գիտէ, թէ առաջ կերակուրը որի բերանն է դրել. նա
դեռ այն էլ է հասկանում, թէ իւր ընկեր արուն որին է
կերակրել: Նա ուրախանում է իւր նախշունիկների վերալ.
մի երկու ըոպէ էլ կանգ է առնում բոյնի մօտ, քըքրում է
իւր կտուցիկով ձագերի դեղին, փափուկ բուրդը, փափկա-
ցնում է նոցա անկողինը ու լետ է թռչում կրկին դէպի
դաշտը:

Բ. ԿԵԱՆՔԻ

Աչքդ միւս կողմը դարձրու. և ահա ծառերի ճղնիկների
վերալ երջանկագոյն ծտերը հպարտ հպարտ ոստէոստ թըլու-
կոտում են ու ցոյց տալիս իրանց կողքներին դողալով կանգ-
նած զաւակներին թռչելու ձեր: Մի քանի անգամ այս
կողմից այն կողմն են անց կենում, սիրտ են տալիս առա-
ջին անգամ բոյնից դուրս թողած ձագին, որ հետևէ իրանց
օրինակին, չվախենալով իրանց առաջեր բացուած անհուն
տարածութիւնից, որտեղից մայրիկը անսահ թևերը շարժելով՝
այնպէս վստահ լողում է:

Փոքրիկ միամիտ ճռտերը չգիտենալով իրանց թևերի
ոլժը, սկզբումը մի քանի ըոպէ զարհուրական ծուոցներ են
բարձրացնում, լալիս են մօր ետևից, աղաչում են որ իրանց
մենակ չթողնէ. զգիկները ներս են քաշում և ալդպիսով
ուզում են իրանց սիրող ծնողների գութը շարժել: Բայց
ոչ. ամենօրեալ խնամոտ մայրը այսօր փոխուել է, նա

քարասրտացել է, նա թռել գնացել է միւս ծառի վերալ
կանգնել, բոնել է կտուցի մէջ անուշահամ կերակուրը և
խոստանում է նորա բերանը գնել, ով որ սիրտ կանէ իւր
մօտ գալ: Ի՞նչ պէտք է անել. եթէ մայրիկը կ'անջում է,
ուրեմն մի բան գիտէ, ուրեմն հեշտ է այս փոքր տեղն անց
կենալը, պէտք է սիրտ անել ու բաց ընկնել օդի մէջ:

Ո՛հ, ի՞նչ ուրախութիւն, ի՞նչ հեշտ բան է. իրանք էլ
միմեանց ետևից թե շարժեցին. այժմ իրանք էլ կանգնած
են մայրիկի մօտ: Մի քանի անգամ ձագերը մօր հետ արին
այդ փորձը, միւս անգամին էլ նորա խօսքը չեն լսում. նոքա
այժմ աւելի մեծ տարածութիւն կտրեցին: Այժմ նոքա նոր
խաղ ու պարապմունք են գտել, հիմա իրանք էլ կատարե-
լահասակ են:

Մի այլ տեղում՝ անտառում ու ձորակներում առողջակ-
ների խոխոջիւնն ու ծառերի շառաչիւնն են միմեանց ետևից
ներդաշնակօրէն միանում: Միւս կողմը, ձորահովտի թմբին,
ուր երեկ այցելուն ծարաւ պապակում էր, այսօր մի պարզ
ու սառնորակ աղբիւրակ ծիծաղելով վազում ու սահում է
փոքրիկ ձորի մացառուտների ու թփերի միջով: Խոկ այդ
առուակների և կարկաչող աղբիւրների ափերին բուստ հա-
զարերանգ ծաղկների վերալ թևերը շարժելով՝ աչքերը
խըտդարձնող թիթեռնիկները երկնալին գեղեցկութիւն են
տալիս այս հրաշալի երեսիթին: Մանաւանդ, երբ դոցա հետ
միանում է աշխատասէր մեղուն, որ ծաղկէ ծաղիկ թևա-
ծելով, իւր համար մեղրի պաշար է պատրաստում:

Ի՞նչ ախորժալուր է հովուական սրնգի ձախը Մալիս
ամսին, երբ նա մի քարի վերալ նստած, կամ լերան գլխին
թեկնած՝ սուլում է ինքնազոհ: Դուք չկարծէք թէ նա միայն
իւր սրտի ուրախութեան համար է ածում. ոչ, նա դորանով
հասկացրեց իւր սիրելի հօտին, թէ ժամանակ է ժողովուիլ
իւր չորս կողմը և գնացքն ուղղել գէպի փարախը, ուր սի-
րունիկ գառները սպասում են լսելու իրանց սիրելի մայրիկ-

Աների մալիւնը: Եղբայր յաջո՞ւ ամ կը պատշաճաց
Ո՞հ, ի՞նչ հրաշալի տեսարան, ի՞նչ քաղցր ըռպէէ է:
Գառները լառմ են հեռուից մօր ձայնը և անհամբերու-
թիւնից ուզում են կոտրատել գլուկի դուռը, դուրս թա-
փաւիլ գիմաւորելու ամենթանկագին մօրը, որ իրանց համար
կուրծքը լիքը ախորժահամ կաթն է բերում: Մինչև որ
հովիւր բաց կ'անէ գլուկի դուռը, ուկերը՝ այն ճարպիկ,
պատիկ սատանաները քեզ է մնում, որ բարձրանան նորա-
ռուսերը: Պօն ցցերած նարձաւ զմազ ջ՛Ս : Պօն վիշյան մը
ացում . նրայ մէջ զցուու առու ու մէնարձաւ ուցի, ցցզուի քա-
ղաւ ացու ներիւ : Գ. Ճ. ՀՕՏԻ ՎԵՐՍ. ԴԱ. ՐՁԼ Յն կը ան ենիւ
մկանու ու զմացը անէ, յամը մէ զմաներացը, ու բայց

Նախանձելի է հովուի դրութիւնը հօտի վերագառնալու
ժամանակ: Գառն ու ուլի մկրկոցը, այծ ու ոչխարի հարալ
հրցը նորա սրտի վերալ անպատճելի տպաւորութիւն են
գործում: Ոչ ոք չէ կարող բոլոր ցաւերը չմոռանալ այն
միջոցին, եթե գառնուկները իրանց փափլիկ դմակները շաբ-
ժելալ՝ և ուլերը իրանց անհանդիսա պաշտուկները խաղա-
ցնելով իրար գլխով են դիպում:

Գառն ու ոչխար իրար են՝ խառնւում և նոցանից իւ-
րաքանչիւրը աշխատում է գտնել իւր մօրը կամ ձագին։
Բաւական է, որ մագի ոչխարը մի փոքր հոտոտէ, իսկոյն
յետ է խփում իրան մօտեցող օտար գառանը և հոտոտելիքը
դէպի վեր բռնած՝ ցատքում է դէպի ալն կողմը, ուր իւր
սիրելի հարազատն է։ Մօր անոյշ մայիւնը և խանդաղա-
տական ակնարկը թափանցում է անմեղ գառնուկի սիրտը
և վստահութեան է տալիս նորան վագելու դէպի ինքը եկաղ
ոչխարի կուրծքը. իսկ վերջինս իսկոյն ոտքերը յետ է բաց
անում և թոյլ է տալիս իւր ամենասիրելի զաւակին փեշփ-
չալով ծծել իւր պատւկները. Եւ իւր սրտի ուրախութիւնն
ու մայրական գդուանքը աւելացնելու համար՝ նա անդադար
լիզում է փոքրիկ գառնուկի թաւշանման մորթը։

Անխիզն են այդ միջոցին մարդկեւ նոքա իրանց կենսական պիտուքը հավթհայթելու համար՝ խլում են խեղճ գառան բերանից նորա մօր պտուկը և կաթնի մեծ մասը իրանք կթում։ Անբան անասունը, իհարկ է, լաւ գիտէ մարդկանց աներաւութիւնը, ինչքան էլ նոքա կթեն, նա իւր զաւակի բաժինը թագցնում է իւր կրծքի մէջ։

Աւշագրութեան արժանի է նաև կմողների իրարանցումը:
Գալիս են մանկահաս հարսները և մատաղահաս աղջկերքը:
Նոքա շատ լաւ գետեն ճաշուայ կթի ժամանակը: Գիւղական
փարախները պոհասաբակ շինուած են լինում գիւղից ոչ
հեռու, մի ձորամիջում կամ բլրի ստորոտում, քամուց և
տօթակեզաքրեգակից ապահով: Եւ ահա մեր ամօթխածները
յուսում կամ շալակում են կովկիթն ու կծուճները, գըլ-
խըներին դնում են կաթքամիչը, մաղը ու գիւղից միասին
դուրս գալիս՝ երեք երեք, չորս չորս, բոլորակ բոլորակ եղած՝
խնդալով, կատակներ անելով գալիս են փարախը և սպա-
սուման արօտից Հօտի վերագառնալուն: Ուստամ
շաբ զմ՛ այժմ մը քամ ան ջնի զյանուարայք առցանց
այս թիրամ թիրամ իւրամա զյանու զայն Պ. Պառշեանց մազ
միխոյոց, և այս մասնաւուացնայ և նացնաւոյց և և և
ու միշտա. — Հըալամի, սքանչելի, զմակելի, հեանալի, երեկելի,
սերելի (ի).
թ. — Հաւը կ մարսեկ, քորմեկ, սանեկ, դստրեկ:
առաջ իւրաքանչ մար մար մար մար մար մար
մը քիրամ սասու մասնաւուացնայ գայոց
և առաջնու ՀԱԿԱՆԻԾ ԲԱՌԵՐԻ. — Մեր պարտիզում շատ անուշահու
եւ այս նարց զյանուց ու թիկ կար: — Մեր երեխակի ձառ զեկը
ւաս մձ նարդաս զյանու կուրեցնք: —
առաջ զյանուց ու թիկը Ափոս՞ս. լաւ տղայ էք. իսեղչը ծագ զեկը
հասակում մեռաւ:

5. Անտառ դոյջ մասն պահանջ ունեած
է և նորախ եւուման վայր մաս փոյտած
առի ցղմմբրած ըզմմա ճիշտաբաց ազնու գովիս Մ թե
եւում երբեմն մը լուսամուկ կը մակրաց մի կիշտ, բուշքու
մաս Մի կիշտ հոգեմաշ, ծանրր ու յամառ.

Ապա մարդկանցից խուսափիր դու միշտ,
Ուղղել քո գնացքը դէպի մութ անտառ:
Սնտառ ու ժայռերն էլ են ընդունակ
Նոյնպէս բառերով վիշտ արտայատել.
Զէ որ շատ անգամ մըրրիկն ու կայծակ
Նոյցա կուրծքն ու սիրան են պատառոտել:
Նոքա մարդկանց պէս չեն խօսի քեզ հետ,
Որ լոկ բառերով տան մխիթարանք.
Ալ ցաւակցելով՝ քո գանգատներին առաջ ացու
Չայնակից կլինի նոյցա արձագանք։ ցղմայակի

6. Ψ_{wJ} $\hbar \omega$

Ահաւասիկ հասաւ մեղրակաթ Մայիսը, տարուալ
տասերկու հարազատների մէջ ամենագեղեցիկը։ Մեր հայ-
րենիքում այս ամիսը Մարերի անունով հեզիկ նազիկ պա-
րում է բլուրներում և բարձրաւանդակներում, բոլորովին
կանաչ ու դալարազգեստ։ Ճեռքն ու ծոցը, գլուխն ու
գօտին՝ փունջ փունջ գոյն գոյն) ծալկներով լցուած,
որոնք կարծես իւր թեթև գարշապարների կոխած տեղիցն
են դուրս բղիսում։ արծաթալիք աղբերակները կանչում
կրկընում են, ծաղկափետուր թռչնիկները երգում պարում
են. թեթևաթիկ ուլերն ու այծեամները սահում են սու-
րում։ հոտաւոր հովիկներն ու զով զեփիւռիկները ծածա-
նում են իրանց ծոպ ծոպ ծամերը, երբ հովտից հովիտ ցա-
ծանալով, բլրէ բլուր ցատքելով՝ անցնում վազում է գեղե-
ցիկ Մայիսը։ Նորա շաղակաթ շնչից ծաղկները վառ վառ
շողշողում են, պառաջները խայծ խայծ կարմրում։

ՀԱԿԱՆԻՇ.—Զ ԵՌ.Ք Ս ՊԱՏՈՒՄ Է:—Այս քո գըսածն է. Ես քո
Ճ ԵՌ.Ք Ճ ՃԱՆԱՀՈՒՄ ԷՄ:—Եղբօրս համար մի
Ճ ԵՌ.Ք ՀՇՐ Առայ: I. ար—ՓՈՒՆՉ ՓՈՒՆՉ, ԳԾՅՆ ԳԾՅՆ, ՈՒՐԱԽ ՈՒՐԱԽ, ԱՉՈՒՄ ՀՉՈՒՄ
Վ ՄԵՂԱՄԵԾ ՄԵԾ, ԿԱՅԵՒԼ ԿԱՅԵՒԼ: ՀՆ ԳԲՕ : ԲՈՐԱԿՈՒԱՆԱ
II. ար.—Մ ԵՂՅ, ԳԵՂ, ՄԵՂ, ՆԵՂ. ԳԵՂԵցիկ, ՀԵՂՈՎԿ, ՄԵՂԱՆՈՐ,
ՍԵՂԱՆ, ՍԵՂՃԵԼ:

7. Վայիսուայ առաւօտ

Երկինքը պարզ, օրը մայիսեան,
Ես ճեմում եմ բուրաստանուն այսուհետ
Սիրտս ուրախ է. ես ժպտալով,
Վարդ եմ քաղում, փունջ եմ հիւսում:
Թեթև զեփիւռ. կանաչ ափեր
Անուշութեան հոտ են փըշում,
Եւ սոխակի դայլալիկը
Քաղցր ականջիս է հասանում:

Նա մի վարդից դէպի միւսը

Օստոստում է ուրախալ

Նա հնչում է դաշնակաձայն.-

ի վեհական իւրաքանչյան է ցոյց տալիք: — Ա վ մ ա լ լ լ :

Եղած վարչութեան ներ—հայոց է հելլենոց միա

Ա. Տահարդիկունը.

J. *Int. Organiz. Stud.* 2005, 26(2), 1–11

Պ. Հ. — Առաջանայի առ առ, Տաճկաստան, Հայաստան, Վրաստան,
Պարսկաստան, Հնումանան, Թէհանան և այլն.

տան, այգեստան, բուրաստան, անդաստան։

II. *Изучение* 8

Ա. ա.՝ վարդ, սարդ, սարդ, յարդ. բուրդ, ժրդալուրդ.

(Համեմություն, կարգը, հողաբարձություն, մասնաբարձություն):

8. Գարնանային առաւտ

Հայելու պէս պայծառ, փերուզայի պէս կապուտ երկնքի
վերայ ամպի մի կտոր անգամ չէ երևում. միայն հեռաւոր
սարերի կատարները դեռ պատաժ են սպիտակի, փոշենման
մառախուղով: Օդի մէջ ծաւալւում է գարնանալին խիստ
ախորժ, անուշահոտ թարմութիւն: Սպիտակի գեղին, կա-
պոյտ ձնծաղիկը, համեստ մանիշակը՝ նոր հալուած ձիւնի
տակից ազատուելով, պատել են կանաչազարդ ձորերի, բլուր-
ների երեսը:

Ս.լութեր գիւղական աղջիկները տղմկալի խումբերով
ման են գալիս, ծաղիկներ են հաւաքում: Ա.լութեր, նոր
հալուած ձիւնից առաջացած հարիւրաւոր վտակների ավելի
մօտ նոցա մալրերը քաղում են զանազան բանջարեղիններ
աղցանի համար: Մի փոքր հեռու արածում են ոչխարները և
հովիւների ազգարար ձայնի արձագանքը երբեմն խուլ հնչիւն-
ներով տարածում է բլուրների մէջ: Ա.լդ. բոլորը, լուսա-
ւորուած վաղորդեան արեգակի տաք, վափուկ ճառագալիթ-
ներով, շնչում է գիւղական կեանքի խաղաղ պարզութեամբ:

۱۰۷

ՆՈՅՆԱՆԻՇ.—Խոնարհ, հետ, սլաքիելու, համեստ:

Ա.՝ Կողման, բոլոր, սալու, խոշու, խոր, նոր, ձոր, ենձոր,
և մասը լսմար, գոյծ, գոյտ, մորեիս:

Արօտ դալար ուսելին,

Ամերեակ, Ֆինանսը բարին:

Յլստակ տղբիւր, պարզ առուակ,

Հազար ու բիւր սպիր, ձորակ,

Հովիտ, անտառ, դաշտ և մարգ

Զուր ցանէին սառնորակ:

Հովհաննես սարիւթարձը լանջին, |

Ոչսարքն դաշտի բազ սրբակին,

Առաջ Սրբութիւնը համափիւռ առանցքաւ խան),
առաջ դեռ և Խօսայն սրբնգին պարէին լի . աճ շնչար առէ
ողք և պատ մատանցաց առ սահմանքաւ մատառած ըզը
ողք պատառ ըմայչ զերով առջ իրականացայի առանցքան
առանցքան ամփանեցարս մն ծառութեա խրզաւ եռացիւն
II. ա — Սար հակ, սենեակ, մանեակ, տասնեակ, գիպայտա-
նեան, Մարիածեան, Նեռսիեան, Ցինկեան .

10.9

Հալածուած գարնան ճառագայթներով՝ շըրջակայ լերանց
ձիւնը դէպի ցած՝ փախչում է պըղտոր առուակներով՝ թափ-
ւում դաշտերը—ջըրերով պատաժ։ Եւ դեռ բնութիւնը
քընից հազիւ հազ՝ աչքերը բացած, ժըպիտով մի պարզ՝
ողջունում է նորան ջինչ առաւօտք։ Կապոյտ փայլում է պար-
ծառ երկինքը՝ և դեռ թափանցիկ մօտիկ անտառ քը՝ կանաչին
են տալիս որպէս գմբուխար։ Մեղուն դէպի դաշտ հարկի

յետելից՝ թըռչում է իրա մոմ եղէն տընից։ Յամաքում չըրնում են հովիտները՝ և կիսադալար փալլում բոյսերը։ Մուընչում են խաշինք, բայց և սոխակը՝ արդէն երգել էր լուռ գիշերները։

Ա. Ստիպեանց.

- I. ա. — Մոմ եղէն, կանաչեղէն, քաղցրեղէն, ոսկեղէն։
II. ա. — Պատաձ, պառկած, կանքնած, հասած։
բ. — Ծով, կով, սով, սովորել, մօտենալով, ժալտալով։

11. Վանայ այգեստանքը

Վանայ ալգեստանքը վայելչագեղ զարդարած երանաւէտ վայրեր են. ալնտեղ իւրաքանչիւր տուն իւր համար կից ծառաստան, ալգեստան ու բուրաստան ունի. և դրան առաջեւի փողոցի երկու կողմը ջրալից առուներ, որոնց ափերում կարգով տնկուած են սաղարթախիտ մանրատերեւութիւներ, տեղատեղ էլ բարդին, կաղամախը, հաց են ին։ Ընդարձակ ճանապարհի վերայ այս ու այն կողմից ճղազարդ ծառերի թեւերն ու տերեւները իրար գրկուած ու խոնուած, մի սքանչելի հովանոց են կազմում անցորդների համար։ Ալդ ճիւղերի միջից Արևի ճառագալթները մանր մանր հողմածիիկ աստղերի նման ծագում են գետնի վերայ, անցնողի կամ նստողի դլիին ու երեսի վերայ ծածանուելով, ինչ սալես խաղաղ գիշերուայ մէջ զեփիւոը լուսնի հով ճամանչները փալիցնում է ծովի ափերի մօտ եղած նոսր ջրերի ծոցում։ Եւ ալդ ծառերը, որոնց կանաչ ու դալար վարելը օծւում են օդի ցօղով և Արևի ջերմութիւնով, ուռճանում են իրանց արմատներով ջրերի ընթացքի մէջ։ Ինկ ջրերը խոխոջալով, գլուխըլալով անցնում են, լզելով

ալդ ծառերի ոտքերը, ոռոգելով ալգիները, պարտէզներն ու բուրաստանները և խմելու, լուացուելու և ամէն պէտքերի համար գործ ածելու ջուր մատակարարելով տներին։

Գ. Վ. Արուանչառեանց.

I. ա. — Հացենի, տանձենի, խնձորենի. — Խոզենի, ոչխարենի։

12. Մարգագետնի տեսքը

Որքան հաճոյական է մարգագետնի տեսքը, երբ առաւօտեան խոնաւութիւնը սկսում է ցամաքել, և գետնատարած մէգը պատառ պատառ լետ է քաշւում, հայածուելով առաւօտեան արեագալի շողերից։ Հազարաւոր անուշահոտ վայրի ծաղկունք ամէն քալափոխում հրապուրում են աչքերդ. որովհետեւ իրանց հիանալի ներդաշնակութեամբ մի ալնպիսի գեղեցիկ կենդանի, զորգեր են ձեակերպում, որ միայն վառվուուն երևակաւութիւնը կարող է ստեղծել։ Յանկարծ պատահում են խոտեր, որոնց հալքենիքը սառնամանեաց հիւսիսն է. ան ինչ մի փոքր խոր փոսում տեսնուում է հարաւալին կլիմաչի ներկայացուցիչը իւր ամենայն շքեղաշուք գրութեան մէջ։

Աննկարագրելի պալճառ են և հեռաւոր լեռների շարքերը։ Սոցա ետեսի կողմից վեր բարձրացով նոսր ու թանձր ամպերը հազար ու մի կերպ փոփոխուելով և հիանալի տեսարաններ ստեղծելով, վերջ ի վերջոյ մի գիւմժական զօրութեամբ ցնդում են և կրոչում երենակամարի վերայ, հիացնելով ու մեծ զուարճութիւն պատճառելով ճանապարհորդներ։ Անտառների մէջ խօսուն թռչունները իրանց արկադալի երգն են երգում և ուրախ ուրախ սատոստում։

Ամառը այս լեռնական դաշտերն ու խոտանեղերը են տաւարներով ու ոչխարներով. և ուր որ գնաս, ամէն

տեղ տեսնում եմ Ազգուական կեանք։ Մարդ ու կով, շուն
ու ոչխար և ձիաներ, ամենքը միասին են բնակում և գլեթէ
մի տանքի տակ և ամենքը բաղդաւոր են։

U. Բաղրամյան

շնորհածքը վեճությունների պատճենությունը — այսպիսի վեճությունները կազմում են այս գործը — ու .

I. աւ—կերպ, եղանակ,—ձև, տեսակ:

13. Գալնան ջրերը

գցմ այս ժամանական և նպատակն անց է
ամբողջարկ եկաւ, Մասեաց ալեոր գագաթի ստորոտը
երիտասարդացաւ, ձիւներն ու սառուցները պարզորակ աղ-
բիւներ ու առուակներ գարձան և զահավիժուելով ձո-
րերի միջերով ապրուստի ճանապարհ խոստացան հաւ-
քակիչներին:

Ել որ քարովն ասես, որ ձորով, որ գետակովը, որ
վտակովը՝ ջրերը կատաղած ահեղաղէզ փրփրաւորուած ներքե-
նն վագում։ Ա. Խ., ինչքան գեղեցիկ են այս տեսարանները.
այդ փոքրիկ առուակները աւելի զմալեցուցիչ են, քան թէ
շատ մեծամեծ նաւագնազ գետեր։

Մօտ գնա և զմալլեր բնութեան ալս խաղերի վերայ.
մի քաղի տակից մի փոքրիկ աղբբակ է ըղխում և ջարդու-

Ելով ընկած քարի վերայ, յետ է խփում իւր կաթիլները և
մշտահոս անձրև կազմում, ու այդ մի կտոր տեղը քարերի
միջիցն էլ խոտեր յառաջ բերում. ապա կրկին միանալով մի
ձորակի միջում, կրկին առուականում և գալար մալար գա-
լով՝ ներքե վագում ու աւելի չքնաղ պատկեր ներկայացնում:

I. ա.—Ուսումնարան, տպարան, լիտովամ, պահարան, դատարան, տեսարան, նույագարան, երգարան, բառարան:

բ.—Արծաթեալ և այս, ոտիկեալ, Երկաթեալ, կապաթեալ, ապա-
կեալ, փայտեալ; Վյա օսպ զմուցք վասիալ

II. ա.—ձանապարհ, աշխարհ, խոնարհ, շոռմոյաբ

բ. — Լաւ, նաւ, չաւ, եկաւ, աւելի, աւերել, խաւար,
աւազ, աւազան, գաւազան. — Հետանդ, հաշիւ: — Աթիւն,
աղբիւր, անկիւն, բիւր, հիւր, սիւն:

գ.—Արձակ, համարձակ, բացարձակ, արձան, դարձան, բարձ, սարձը. (Հառնելու).

Դ.—Այս պէս, այդպէս, այնպէս, նոյնպէս. իսկամեյս, կէս,
հանդէս, աղուէս. Ներսէս, Աըլստակէս, Վըթանէս,
(Երես, հանդիսատես, տնտես, չեռատես, կարձատես):
«Էս»-ով լերջացող յատուի անուանց մէջ սեռա-
կան հոլովը կարելի է վերջացնել նաև ե ս ի.-Ներս ե սի,
Մոմեսի:

Ե.—գնա, ասա, լուս, կարգա:

ՀԱՅՈՒՆ մ. ըամել սցուծ

— իցմաշաք զմռոշ ջառմԱ
մշղասիւր ոստի նար նար

զայլ թիշտամարտ սմ

• բիբած իյ մարզվամ սզբուն

14. Հօրուտ—Մօրուտ

Ա զբանյան դայ նորոյ և ուս պարզ մաս ճախաց իսկ
ԳԱՐՈՒՆ ԱՐԱՐԱՏԵԱՆ ՆԱՀԱՆԴԻ
Յելոյանաւին աղջկը արա ։ Կայոց հառով յէ մքիջին
ար զայտն զայտ և նուածաւուռա միջիդ ։ Նորին զյայզ և
Նորմայալցին զմիաբ բաւար ու նորափ մզդմ ։ Խոյ

Ես Հօրուտիկ—Մօրուտիկ,

Դրախտի հիւսած նարօտիկ,

Նախշուն սիրուն խատուտիկ,

Կանաչ դաշտաց գիցուհիկ:

Ես Հօրուտիկ—գարնան դիք,

Զեռքումս դրախտի բանալիք:

Դրախտի դըռներ բաց արի,

Դարուն տամ ձեր աշխարհի:

Ես նախշունիկ սիրունիկ,

Ծոցըս նախշուն լի թըռչնիկ.

Գարնան դըռնով դուրս ելի—

Երգ տամ բոլոր աշխարհի:

Ես խատուտիկ մատուտիկ,

Ծոցըս խալոխալտ մեղողիկ,

Գարնան թւեռվ ես եկի—

Տամ մեղոր բոլոր աշխարհի:

Ես գեղեցիկ քընքուշիկ,

Ծոցըս քաղցըը լի պըտիկ,

Հալոց սիրուն ես եկի—

Միրգ տամ բոլոր աշխարհի:

Ես անուշիկ մանուշիկ,

Ծոցըս կենաց լի հովիկ.

Անուշ հոտեր դաշտերի—

Գամ տամ բոլոր աշխարհի:

Ես կանաչիկ կարմըրիկ,

Ծոցըս նախշուն լի ծաղիկ.

Պէս պէս գոյներ սարերի—

Գամ տամ բոլոր աշխարհի:

Ես արծաթիկ ու ոսկիկ,

Տաք ծոցըս լի ձընծաղիկ.

Ծաղիկըս շաղ տամ—շուտ հալուկի—մացրու

Չիւնը բոլոր աշխարհի:

Ես արօտիկ նարօտիկ,

Ծոցըս կանաչ գորգ մախմրիկ.

Գորգըս փըռեմ նախ ծածկի—

Գետին բոլոր աշխարհի:

Վըրէն ցանեմ մանուշակ,

Շորերը մոյտ կապուտակ.

Գաղեմ թագչի խոտի տակ,

Զանի հոտ գոյն Արեգակ,

Մէջերք վարեմ Ես նար գէս,

Չիւնից աւելի սպիտակ.

Սէքը կարմիր զերթ նարինջ,

Հոտը մարդու տալ նոր կեանք:

Բոլորք շարեմ ես յակինթ,

Սպիտակ, կարմիր և կապուտ.

Գոյն գոյն ակնի պէս շողալ,

Անուշ հոտից քէֆրդ գալ:

Զորս կողմ սրփուեմ անթառածածոր

Թերքըն դեղին փունջ ոսկի.

Ամառ ձըմեռ անթարշամ,

Գարուն բերի ողջ տարի:

Եղերք պատեմ նունուֆար,

Կարմիր շեփոր ու կապուտ.

Մէջքը բարակ ոնց ձիգ լար,

Ծառերն ելի առանց ոտ:

Սարերն վարեմ մոյտ շուշան,

Շորերն կարմիր բաղիմջան.

Լեզուն հանած իւր երկալն,
 Սպիտակ՝ գեղին մազուլան:
 Չորս կողմ շարեմ էլ շուշան—
 Շուշան հովտաց փունջ շարան,
 Մաքուր սպիտակ ձեան նըման,
 Բերանն անուշ իւր կաման:
 Բոլոր սըփուեմ շահոքըամ,
 Թագւորի տան հոտն արժան,
 Աչք-ոնք քաշած պատկերհան,
 Մըկրատ նըխշած իւր կապան:
 Դաշտեր շաղ տամ շահապը բայ դժուն
 Անուշահոտ համ ասպը բամ. յասի վար նմրամ
 Ով հոտն առնի, հիացած—
 Թագւոր կոչի ողջ ծաղկանց:
 Մէջերք ցանեմ փունջ քըրքում,
 Թելեր գեղին անուշակ:
 Երես կարմիր մախմրուկ,
 Աստառ կապոյտ մանուշակ:
 Չորս կողմ սըփուեմ փեգենայ, յժնեղայ մասիս
 Սպիտակ, գեղին մոյգ, ոսկի. սէս յմբա մյոք մյոք
 Տեսնող—թաւիշ է—ասիշաք քիֆէց յժուն շուն
 Գործած դրախտի մեքենայ:
 Մէջտեղ վարեմ լի մեծ տուրտ,
 Սպիտակ, կարմիր և կապոյտ:
 Համ—հոտ նըման մոլոշի,
 Երկուքըն էլ գեղ հազի: նժամայ գյույշ
 Բոլորք շարեմ արեգակնայ որ դոփէց յժնեղայ
 Ոսկի ափսէ բոլորակ.
 Սև աչք ձրդած արեին, որ բառա դյոյ մդման
 Միշտ նախի իւր երեսին: նժամայ մդման
 Սար ձոր սըփուեմ համ մասփիւռ
 Գեղին աչքին սև ծարիր.

Սպիտակ ձիւնի պէս ն արդուս
 Շնչէ անուշ հոտ մազուլաս:
 Մէջտեղ վարեմ վարդ կարմիր, մայրէ մանդէն
 Ծալծալ հոգին ծիրանի.
 Բերան բացած կենսաթեր, նաշանա ուշ զայ չգործ
 Կեանք տայ բոլոր աշխարհի:
 Բոլորք շարեմ հարսնեմ ատա,
 Անքան փափուկ հարսի մատ.
 Որ հէնց ծագի Արեգակ, քայլով
 Թոռմի մեռնի արետակ:
 Մէջերքը ցանեմ ոսկեակ կայրու յներաց շամաբ
 Դեղին որպէս ոսկեհանք.
 Նախշուն աչքով սեղորակ, նարանա յնայ մշնա
 Արտեանունք սև բարակ:
 Սար դաշտ լըցնեմ ես կակաչ
 Կարմիր գինու ոնց բաժակ:
 Ասես մէջը լի լաւակ,
 Վառւում է ոնց բոյ-կըրակ:
 Մէջտեղ ծաղիկ ալ նըռան—
 Մազեր ոսկի, շոր՝ խարայ.
 Մըրտից կաթի շիթ արեան,
 Ամուլ անպըտուղ միշտ մընալ:
 Բոլորք վարեմ—մեկոն տալ,
 Թելթքը թափի՝ ծիծ գուրս գալ.
 Ծիծը կըտրեն, կաթ գուրս գալ,
 Կաթը երեսին խոր քուն տալ:
 Չորս կողմ ցանեմ—մեխակ տալ,
 Նախշուն թենով թիթեռան.
 Թուչի անուշ հոգ գընալ,
 Արձակ աշխարհ ամենալն:
 Անտառք լըցնեմ մշկուռի,
 Խիտ խիտ շարուեն իւր ճիւղի.

Բոլոր գեղին թաւ մազոտ,
 Ծաղիկները մըշկահոտ:
 Մէջերք վարեմ ես յա մի կ,
 Ճերմակ, գեղին, կապուտակ.
 Ծառից կախ կախ շատ փընջիկ,
 Բուրէ իւր հոտ անուշակ:
 Ներսէր վարեմ ան անուխ,
 Զըրի ափին կանաչ թուխ.
 Հոտն անուշ ու կըծու,
 Փորացտի գեղ ազդու:
 Կողքին ցանեմ ես ո ե հան,
 Կանաչ բազմի ի սեղան.
 Անուշ հոտըն և իւր համ
 Ամէն բանի համադամ:
 Ծաղիկ վարեմ մարսական,
 Անուշ հոտ տալ ի բերան.
 Սամիթ, կարոս, գինձ, լախուր,
 Ծոթրին, թարխուն, դազ, նեխուր:

Բ.

Բանջար վարեմ, խաւարծիլ,
 Հազար, պլրաս, ծըմել.
 Կոտեմ, փըփրեմ, ծըներուկ,
 Ու ազատքեղ, թըրթընջուկ:
 Խաւարտ ցանեմ, սունկ, սմբուկ,
 Կաղամբ, դըդում և վարունկ.
 Սոխ ու սըխտոր ու պըզպեղ,
 Կըբակ ու բոց կըծու գեղ:
 Տակեր վարեմ ճակընդեղ,
 Շաղգամ և բողի, ըստեպիին.
 Իրանք փոքըր՝ գըլուխ մեծ,

Սպիտակ, կարմիր, սեղեղին:
 Ունդեր ցանեմ սոսկ, որիզ, ամցու — մաշ
 Սիսեռ, ոլոռ, մաշ, լոբիալայոց մարու
 Կընճիթ, կտաւատ, ձիթհատիկ,
 Արեի պէս ձեզ լոյս տայ:
 Գարի ցանեմ՝ կանաչ տայ,
 Կանաչ փոխեմ, գեղին տամ.
 Դեղին սպիտակ գարի տայ, այսոյնչ նիմուն-թիրան
 Զիելն ուտեն, շուտ վազ տամ:
 Կորեկ ցանեմ՝ սոկի տան-մայիծ լատ զը
 Հաւերն ուտեն կըշտանան, այ շատի գը
 Ոսկի ձուեր ածեն տան:
 Մարգիկ ուտեն լիանան:
 Ցորեն ցանեմ, քուն ձըմբան,
 Քոսոտ միրուք նա աշնան,
 Կանաչ մախմուր գորգ գարնան, նատ ու թիրան
 Ոսկու ծովեր ամարան:
 Մէջերք շաղ տամ եռ հարսնակընդի
 Կարմիր շորեր իւր հագում.
 Հարսի նըման զարդարուն,
 Պար դայ կանաչ արտերում:
 Բոլոր սըփուեմ կապուտակ, յանցու
 Կոթ խատուտիկ մի գընդակ, քառիսն
 Կապոյտ աչքեր պըսպըղան,
 Ցորենի մէջ-շափիւղան:
 Ժիշըն ըմա քրասի լատ զը
 Փ. թիշտափ առջի ին մէն

Ծաղիկ ես տամ ելակի, քառի
 Փըշփըշուտ մորեւ մոշի. քմէն
 Տան սկ, կարմիր մարսական,
 Պըտուղ նըման սկ թըթի:

Ծաղիկ ես տամ և թըթի,
Պրտուղ շաքար, ջուրն օղի.
Տերև—սընունդ շերամի,
Նողուն շորեր տայ մարդի:

Ծաղիկ ունիմ ըսպիտակ,
Նարան տափակ մարդարիտ,
Նաղ տամ ծառին ոնց վեղմակ,
Բալ տայ կարմիր թըթուաշիկ:

Ծաղիկ ունիմ բոլորակ,
Յառաջ կարմիր, լետ սպիտակ.
Կը տայ ծիրան անուշակ,
Մի թուշ կարմիր, միւս ոսկեակ:

Ծաղիկ ունիմ էլ ճերմակ,
Խիտ խիտ շարած անհամար.
Սալոր կը տայ կարմրորակ:
Քաղցըր, չըրոտ, ոնց շաքար:

Ծաղիկ ես տամ բաց կարմիր,
Մէջտեղ սսկի փունջ թելեր.
Դեղձ տայ անուշ թըթուաշիկ,
Կարմրաթըշիկ թաւիշիկ:

Ծաղիկ ես տամ խընձորի,
Խառն կարմիր ու ճերմակ.
Խընձոր ձեզ տայ նոյն գոյնի,
Սպիտակ, կարմիր անուշակ:

Ծաղիկ ունիմ փունջ մի խիտ,
Մանըր մանըր մարդարիտ.
Կը տայ խաղող, ոնց մեղրիկ,
Մէն մի գինու փոքրիկ տիկ:

Ծաղիկ ունիմ մոլու կարմիր,
Պտուղն խաւոտ քար է պինդ.
Հէնց որդեղեղնեցն իմացիր
Էլ սերկելու չէ տըտիպ:

Ծաղիկ ունիմ նըռան է,
Կարմիր բարակ բաժակ է.
Մէջ կայ կարմիր շարակներ,
Արիւն կաթում երակներ:

Ծաղիկ ես տամ փունջ սպիտակ,
Տունձ տայ գեղին զուտ ոսկի.
Քաղցըր, ոնց մեղր ու կարագ,
Հալուի բերնումն ուտողի:

Ծաղիկ ես տամ զուտ արծաթ,
Պրտուղ քարից էլ պինդ փակտ.
Կոտրիր կեր մէջը, դա նուշ է,
Միջուկը լի կաթն ու իւղ է:

Ծաղիկ ունիմ զըկեռ է,
Պտուղն չուտես մինչ խակի է.
Բերանը բաց կը մնայիր մազ մոյցի
Բերնիդ ջըերը կը գնայիս քամա—ցմ.

Մի ծառ էլ տամ անծաղիկ, մոյց դյուչա դյուչ
Ուռած աչքի մէն մի բիեցի առ ըլաշ
Դառնայ կանաչ մե՛ թըթիկ ուցը լի մի
Մէն մի մեղրի փոքրիկ տիկ: և ոչ առ
Ուդիշու ծրա մասմ զանց
Այս գոյու առաջու առ առ
Դէ, լետ ելէք, թըթունիկներ, ոչ առ
Երգէք շինէք ձեր բոյներ. նյոց քափաՓ
Քանի ես չեմ գընացել, միջուշա դյուչ
Տամ ձեզ նախշուն ձագուկներ:

Դէ, շնուտ մողվէք մեղուկներ, ոչ առ
Կերէք տալէք ծաղիկներ. մյութ մի լազ
Քանի ես չեմ գընացել, միջուշա դյուչ
Լըցնեմ փեթակ, մոմ ու մեղր սանցմի առ առ
Եկէք և զուք, կոկ զաւներ, ոչ առ
Կերէք, լըցնեմ ձեր ծըծեր. մյութ մի սանցու
ըլդյար մաս մաս զանց զանց

Քանի ես չեմ գընացել,
Տամ կաթ, պանիր, իւղ և սեր:
Իէ, շուտ վարեք և դուք էլ,
Բոլոր աշխրի մըշակ ժիրք.
Քանի ես չեմ գընացել,
Ծաղկեցնեմ ձեր քրրտինքեր:
Ու ես գընամ, տեղըս զալ—
Նըստի Աստղիկն—Վարդավառ: Ա թիրա՛
Նա էլ գընալ, տեղը զալ—
Տօն նոր պըտդոց—Նաւասարդ: Դիմում
Եթ առ միջաք դի ցըւոջ՛ն

Ե.

Խսկ դու, Հօրուտ—Մօրուտիկ, մքառոթ
Սիրուն քան ողջ վարդ—ծաղիկ զայդ:
Աչք—ունքդ նախշուն խատուտիկ մայդ:
Բոլոր աշխրի գարունիկ: Խառնա յէ առծ դ՛Ա
Բայց դու բերիր մեզ բարիքնա ծառալ
Ու կը գընաս շուտ երկինքնափ լամուար
Դու չես բացում քու ակրնիկ մն ժ՛Ա
Երեսդ, տեսնի ողջ աշխրիկ:
Բա դու Հօրուտ—Մօրուտիկ,
Դու չես տալ քո վար թըշիկ: ամէ քար
Փափուկ շըրթամբն համբուրի գէքոյ
Հովիկ բոլոր աշխրիկ: նէ սն դմադ:
Խսկ դու Հօրուտ—Մօրուտիկ
Դու չես բացում քո ծոցիկ: առն քար
Տայ մի կաթ, մեղք պետմովիկ առ քշդմ
Բոլոր աշխրին քո ծըծիկ: նէ սն դմադ:
Բա դու կ'երթաս ծարաւիկ, նոն քանիսի նմըց:
Ու չես բանայ քո բերնիկ: ա գէքոյ
Խըմես մի կաթ ջուր քաղցլիկ: գէքոյ
Բարձր լեռան սառն աղըրից:

— Ձ վիսքը մա Բացուիր, կաց դու մի պահիկ, միմը մըլլ
մմանու տակ առ Ա՛յ Հօրուտիկ—Մօրուտիկ.
Բացուիր դու էլ սիրունիկ,
Մեր դաշտերի բաղդ ծաղիկ:
Բացուիր ծաղիկ սէլ—սիրիկ,
Բացուիր, քաղի քեզ մատիկ:
Վիճակ ձրգի իւր բաղդիկ
Մեր գեղերի խեղճ աղջիկ:

Ջ

Սահաւէլ Գիւլըտեանց,
Խըմայ մն դմանա լոցըցից այսան
անց առ տանց տախ
անցա հիման ցըմբան առ ԱՄ

15. Ա մարային առաւօտ

Արեգակը ալժմ թափում է իւր լայր և ջերմութիւնը
լեռնային աշխարհում: Բնութիւնը ժպտում է գեղա-
ծիծաղ պայծառութեամբ: Գիշերալին խաւարի մէջ մըրափած
անտառը, զարթելով իւր հսկալական քնից, ալժմ օրօրում է,
ծփում է կանաչաղարդ ծովի նման: Ծառերը, ծաղկները,
շարժուելով մեղմ զեփիւռի հրապուրանքից, կարծես,
գրկում են, համբուրում են, ողջունում են միմեանց
առաւօտը: պատփանց մզման նրան քանաքաման մինան

Օրուայ այս խոր հրդաւոր ժամուն սքանչելի ընու-
թեան հետ զարթում է և մարդկալին կեանքը: Հովիւը իւր
հօտերը քշում է գէպի լեռների զառիվերը: Մշակը դաշտում
կամ հերկում է, կամ հնձում է աձորերի և ծմակների մէջ
նախշուն թիթեռնիկների նմանավիզը դում են գիւղացի
աղջիկները: Մարդը սկսում է սգործել: իս քաց զուալ

Ր Ա Ք Ք Ե.

ՀԱԿԱՆԻՇ.—Հայոց աշխարհ հը դրախտի նման գեղեցիկ է:—
Աշխարհում ս մարդուա լաւ ու վատ անունն
է մնում:

Ամբողջ աշխարհը լցուել էր ուսումնազանում:
II. ա.—Ծիծեռնակ, թէթեռնիկ, առնել, խառնել, բռնել,
դառնալ, մեռնել, մռնչալ:
«Ն» տառից առաջ «ո» է գրւում միշտ:

16. Ա մ ա լ ե ր

Կապուտ երկընքով ամպեր են վազում
Խիստ քամու ձեռքից.

Սև սև ամպերը սարերի նըման
Անցնում արտերից:

«Կացէք, այ ամպեր, ինչու էք փախչում,
Անձրև չէք թափում.

Մեր ծարաւ արտեր օրեր են համրում
Ու ձեզ լսպատում:

Քամի, դու քամի, խըզճա արտերին,
Թող այդ ամպերին
Կանգնեն ու թափեն անձրևի շիթեր,
Զըրեն մեր արտեր»:

Քամին հանդարտեց. մեղմ անձրև թափուեց,
Արտերը ջըրեց.

Արտը բարձրացաւ, ցօղուն արձակեց լին մասն
Ու հասկեր ըլունեց: Գիշեց ու լուսաց
Գիւղացին գընաց, տեսաւ ու խընդաց,
Խընդաց ու ասաց,
«Փառք քեզ, ով Աստուած, որ տըւիր մեզ հաց,
Զենք մընալ քաղցած»:

17. Ամարային միջօրէ

Ա. ը և ե եկել երկնքի կէս տեղը ցից է եղել, ոտքը
գէմ տուել. իւր տաքուժիւնը աշխարհիս վերալ թափում է,
ալրում խորովում: Ալգեհատ գիւղի ձորի ծառերը շոգից
նեղացած՝ տերևները թառ են տըւել, գլուխները կախ
ձգել, իրանց օրը լալիս, գլխներին վայ տալիս սգում են:
Քարերի հալը հո Աստուած ցոլց չտայ, այնպէս են տաքա-
ցել, շեկացել, կարմրել, որ փոքր է մնում միջից տրաքու-
են ջարդուիշուր լինեն. շատ քաջ մարդ պէտք է լինի,
որ ոտքը կամ ձեռքը մի քարի դիպցնի. իսկոյնեթ վերան
կը կպչի, կը թխուի:

Թուզունների մէջ հո էլ ոլժ չէ մնացել, շոգից նեղա-
ցած՝ թևերնիս չուած, բերանները օխտը գազ բաց
արած, որը այս քարի տակն է խցկուել, որը այն թփի
տակը մտել, իրան ստուեր արել, որ ազատուին Արևի այդ
անտանելի շոգիցը. շատի ոլժն էլ սպառուել, տեղն ի
տեղը վայր է ընկել, շունը տուել. որն էլ մի քարի ծակ
կամ մի ծառի խոռոչ է մտել, էլ չէ կարողացել դուրս
գալ, ու թագնուած տեղը չորացել է:

Եակնըրէտնան.

II. ա.—Ար և, տերև, անձրև, թև, թեթև, (լէոն, գէորգ):
բ.—Բերան, գերան, գերձան, բերդ, բերել.

գ.—Գոզ, դոզ, սոզ, շոզ, կոզ, հոզ, ձոզ.—(ցօզ, քօզ).

18. ♪ թ ե լ լ

Զրերը ականակիտ, արծաթափալ՝ կարկաջաձալին իշնում
են, գիլ քարերի հետ համբուլը համբուրի տալով, իրար դա-
ւակ թռչելով, ծիծաղելով ծաւալուելով։ Իջնում են մերթ
ամպաձրար, մերթ լուսաժայիտ դագաթներից վայր, կանգ
առնում հանգստանում դարեանդների վերայ, լճեր կտզմում,
գեղեցիկ լողարաններ, և ապա դարձեալ իշնում։ դաշտ ու
հոգտի մէջ ընկնում և Արեի հետ հողի ծոցում դրկուելով
կեանք ու կենդանութիւն ամենուրէք սփոռում։

Ա. Եղեկան.

19. Յուլիսի շողը

Յուլիսի Արեգակը սաստիկ ալրում է. կարծես մթնո-
լորաի ամբողջ տարածութիւնը լցուած լինի հրեղեն ասեղ-
ներով, որոնք կայծերի փոշու նման շողշողում կիզում են
և մեղմ ալիքներով սփոռում են դէպի ամէն կողմ։ Տօթը
անտանելի է։ Թոշունները լոգնած, թուլացած, ծածկուել
են ծառերի թաւուտներում, որոնց վերայ մի տերե անգամ
չէ շարժուամ մեռած քամուց։ Միայն ճանճերը, մոծակ-
ները և մանը մժեղները անամօթաբար ասպարէզ են
մտել. և միլիոնաւոր խումբերով վժվրժում են, ծւծըւում
են, շնչառութեան հետ մտնում են մարդու բերանը,
քիթը, ականջները, կամ իրանց թունաւոր խաթթոց-
ներով աւելի են ալրում մարդու մարմնի բաց տեղերը,
քան թէ Արեգակի հրեղէն ճառագալթները։

Ր ա Ք Ք է.

I.ա. — Աղբանոց, հեւանդանոց, ապհեստանոց. օրօրոց, բազ-
մոց, սփռոց, գոգնոց, թիկնոց, ակնոց, ձեռնոց,
խայթոց։

Բ. — Զիաւոր, զօրաւոր, թագաւոր, բաղտաւոր, հազարա-
ւոր, թունաւոր։

II.ա. — Ծանօթ, ամօթ, անօթ, թնդանօթ, վառող; առա-
ւոտ, տօն, պաշտօն, աղօթել, կարօտել։ Օդ, օձ,
օթոց, օժիտ, օթևան, օրհնել, օծել։ (Ով, ով-
կիանոս, Ովսաննա)։

20. Պարտիզան

Ամառն է։ Կարծես կրակ է բարձրանում

Գետնի երեսից և հուրհըրատում,

Ո՛չ շունն է հաջում, ոչ ճըմին երգում,

Գորտն էլ է լըռել, էլ չի կըրկըռում։

Ամենքն էլ փախել, հով տեղ են դըտել,
իրանց բըներում լըռել, պապանձուել.

Միայն մի հատիկ մարդ է երեսում
Խորընկած դաշտում, առուի եզերքում։

Կանգնած է մարդը Արեի տակին,

Ոտն ու ծունկը բաց, բահը դրած ուսին։

Մի շապիկ միայն ունի նա հագին

Եւ մի ըսպիտակ թասակ կայ գըլիսին։

Բայց ինչ մարդ է նա և ինչ է շինում,

Արեի տակին ինչո՞ւ է ալրում.

— Նա պարտիզանն է, պարտէզ է ջըրում,

Սեին ու ձմերուկը նա է հասցընում։

Ղ. Աղայեան.

21. Շինականի երդ

Լուսնակն անուշ, հովն անուշ,
Շինականի քունն անուշ.
Ծագեց լուսնակը երկնքից,
Հովը փող նէր անուշ:
Հօտաղը եզն է արածեցնում:
Մաճկալը պառկել է, քունն անուշ:
Զըզզը զուն քամին փըչում է,
Ծովալին հովն է անուշ:
Դաշտեր, ձորեր մնջուել են,
Զըեր գըլգըլան, ձայնն անուշ:
Հաւերը մըտան իրանց բունը,
Սոխակի տաղն է անուշ.
Անմահական հոտ է բուրում,
Կարմիր վարդի հոտն անուշ:
. Դաստիարակ անուշ Գլուխ. Սրուանչառաց.

ՆՈՅՆԱՆԻՇ.—Անուշ, քաղցր.—հով, զով.—տաղ, երգ:

ՀԱԿԱՆԻՇ.—Փողասէր, փողապաշտ.—չնչափող, երկայնափող,
փողապատ:—Փողահազը վչում է իւր փողը, որ երան
փող տան:

22. Աշուն

Աշունը եկաւ, շուք քուքը անցաւ. արօրն ու ցաքանը,
պատրաստ կան դրանը. միմեանցով գիպան, սերմը գուրս
տարան. գիւղացին վարեց, իւր ցելը սերմեց, բերանը
բացեց, երկու խօսք ասեց. «Թէ պարտքակոխ լինեմ, թէ
հորերս լցնեմ, իմ յուն ես գու, բաժին ես հոգու»:

Ծըլիր, կանաչիր, խղճա տընանկիս, աչք դ բաց, նայիր,
տըկլոր խիզանիս. վերև ու ներքեւ, երկիր ու երկին, ծարաւ
միք թողնի, իմ յուս ցանածին»:

Ա. Արտադրեաց.

ՀԱԿԱՆԻՇ.—ա.—Մարդս ունի հոգի և մարմին:—Աջէն բան,
ինչ որ տեղ է բռնութեած և ծանրութեւն ունի,
մարմին է:—Արեգակը լուսաւոր մարմին է:
բ.—Մարդս ունի հոգի և մարմին:—Այսօր հինգ
հոգի չեն եկել մեր ընկերներեց:—Հ ո գ ե ս,
ինչո՞ւ մեր տուն չես գալիս:

գ.—Ի՞նչ փոքրեկ բերան ունի այս երեխան:—
Դանակի բերանը սուց է:—Այս գետի բե-
րանը շատ հեռու է:—Լուսակը ժողովրդե
բերանն է:

դ.—Ա. չքս ցաւում է:—Խանութներիս մի աչք
վարձու հմ տուել:—Պարկի մի աչքում ը
հացն հմ գրել, միւսութը գինին:

լ. ա.—Գիւղացի, քաղաքացի, տփղիսեցի, եվլանցի,
վանեցի:

23. Աշուն

Ամառն անցաւ վերըստին.
Անցաւ զեփիւռն էլ նախշուն.
Եւ թըփերի թարմ հոտին
Շուտ, յաջորդեց յուրտ աշուն:
Կանաչազուրկ ու դեղին միւն
Են դաշտօրակը ու լերինք.
Արդէն հովիւք էլ թողին
Իրանց մախաղն ու սըրինգ:

Ամպերի մէջ՝ զիմասքօղ՝
Լուսակորուս է Սըռէ.
Զը կան զըւարժ ու երգող ծաւաց ույլ և վարծի, գին
Թըռչունք ծառոց ըստորև:

Զը կան թիթունք գունազարդ
Որ թըրթըռան սիրագին.

Զը կան շուշան. չը կալ վարդ
Որ նախանձին մեխակին:

Զը կան բուրմունք անուշակ,
Ո՛չ լասմիկ, ոչ շահոքրամ.

Օչ էլ գողարիկ մանիշակ
Եւ ոչ ճըճեաց խօլ երամ:

Եւ ոչ ճըպուռ որ հեղու
Թւր ճը ճըռն եր ոստոց տակ.

Եւ ոչ փութկոտ ժիր մեղու
Որ բերէ մեղը ի փեթակ:

Վեհ կաղնիներն անտերև,
Գլուխնին ուղղեն դէպի վեր,

Ուստի կարկուտ և անձրև
Թափին՝ երկրիս տալ աւեր:

Գիշերներն էլ՝ անմըռունչ՝
Չունին ո՛չ աստղ, ոչ լուսին.

—Մի քանի բու մահաշունչ
Իրարու հետ կը խօսին:

Ծովն՝ ալեկոծ, կատաղի.

Մուընչելով մոլեգին,

Փըրփըրապարար մի ուղի

Ցոլց տայ նաւուց ընթացքին:

Մերթ ընդ մերթ շանթ ու կայծակ՝
Մըթին յերկնուստ վալը ի թափ՝

Կարծես քանալ գան մի ծակ,
Ուստի տեղալ մահ, սարսափ...

Ա. Փանոսէտն.

ՆՈՅՆԱՆԻՇ.—Վերստին, դարձեալ, կրկեն:

II. ա.—Կըկուալ, մըրմուալ, թրթուալ, ձրձուալ, գրգուել:

24. Աշնան պատկերը

Աշունքացաւ: Աշտարակալ կանաչ այգիները, որ մարդու սիրտ էին ուրախացնում իրանց անուշ հոտերովը, Աստծու սփուած կանաչ գորգելովը, հազար տեսակ ծաղկներովը,— Հիմա այնպէս են դարձել, որ մարդ չէ ուզում երկրորդ անգամ վերաները նայել: Խաղողի որթերը, որոնք գլուխ գլխի կողցրած՝ իրանց քեահրիբար ողկոլներովը մարդուս բերանի ջուրն էին բերում ու երեսին ծիծաղում, Հիմա բոլորովին մեռած են երևում, հողը գլխներին տուած: Ծառերը, որոնք մի փոքր հով ընկած ժամանակ՝ իրանց տերևների սօսափիւնով՝ որքան տիրած սիրտ լինէր, բաց կ'անէին, Հիմա կնտացած՝ մի տերև էլ չես գտնում վերաները, միայն չոր չոր չոփերն են երևում բիզ բիզ: Ա. Փիները, որ իրանց սիրի սիրի խոտերի ծաղկներովը, վերաները նստողի, սեղան բաց անողի ախորժակը բաց էին անում, Հիմա կարծես մեռած մարդու երես են դարձել, ծառերից թափուած դեղնած տերևներովը: Ա. մէն բան էլ փոխուած, մի տիրուր տեսարան է ներկալացնում:

Պ. Պատշեանց.

I. ա.—Մարդ ս բանական կենդանի է: =Մէնք, որ մարդ ենք, բանական կենդանիներ ենք: Մարդուս բերանի ջուրն էին բերում: =Մէնք որ մարդ ենք, մեր բերանի ջուրն էին բերում:

25. Աշնան տերևներ

Աշնան ըսկըզբին մի բարակ քամի
Սարիցը եկաւ դաշտերը իջաւ,
Վըսսաց, վըսկըսաց մի բան ամենքին
Ու անցաւ գընաց անտառը մըտաւ:
Խոտը չորացաւ, հողը ցամաքեց,
Այնտեղ ու այնտեղ բացուեցին ճեղքեր,
Անտառը դողաց ու վախից իսկոյն
Դեղին գոյն առան կանաչ տերևներ:
Շատ օր չէր անցել, ահա նոյն քամին
Սըլսըլաց նորից, մըտաւ մերկ դաշտեր, ծաղրայի ժոյը
Բերեց հաւաքեց, դէպ երկինք քըշեց մշոյ դմացմաց
Աւազն ու փոշին ու չորաց խոտեր: ծոռն մժարոյոց
Մըտաւ անտառը, շաղհարեց ծառեր,
Թափեց տերևեր, աջ ու ձախ փըռեց,
Փըչեց ու ձըզեց թէ սար և թէ ձոր
Ու իրանց բուսած տեղիցը զըրկեց:
Բայց ինչքան արեց, չը կարաց քամին
Պոկել մի տերև եղեին ծառից,
Որ ժայռի միջից նայում էր կանաչ.
Նոր ոստ, նոր տերև բուսած կողքերից:
Կ.: Կ. Մ. Շահնշահեանց.

ՆՅՅԱՆԻՇ.—Բոյս, տունկ.—ոստ, ձիւզ:

Ա. ա.—Նայել, խնայել, հըամայել.

Բ.—Ոստ, ոսկի, որդիք, ոտք, ոչխար, ոզնի, ողիոյզ:
մշոյ դմացմաց սարունակ մայած
մշոյ հմայմաց սարունակ մայած

26. Փոթորիկ

Մութը գետինն առաւ. մատդ օր մարդու աչքը կոխէր՝ չէր տեսնի: Ամպերը սարերիցը գլխները բարձրացըին,

ոտքները կտրեցին. մուալլ ու մառախուղ սար ու ձոր բըռ-նեց: Կարծում ես թէ հազար վիշտապ բերանները բաց արած գալիս են՝ որ սար ու ձոր կուլ տան: Կալծակը ախտեղ ու այնտեղ որ չախմախին չտուեց, սարըցիք իմացան թէ ինչ պէտք է գալ իրանց գլխին. տաւար, ոչխար փարախի մէջն արին, հըացաններն առան, շները բաց թողին, որովհետեւ լաւ գիտեն՝ որ գողի ու աւազակի որսալու ժամանակն է: Հէնց որ ամպերը թոփ ու թոփիանէն սարքեցին, ով ոտք ունէր՝ փախաւ, ով աչք ունէր՝ փակեց, ընտանիքը մի ծածկովթի տակ արեց, ոտքի վերալ մի կտոր հաց առան, ալն էլ գոտիկը դրին, չկերան, որ տեսնեն՝ թէ վերջները ինչ կը լինի, ինչպէս կը լուսանալ: Մէկ բարակ կարկուտ անձրեսի հետ խառը եկաւ, վերաներովն անց կացաւ. երկինք, գետինք սկսեց կրակուիլ: Կալծակը որ չէր մտրակում սարերի գլխին, ուղում էին՝ թէ հազար գազ խորը գնան: Ամպը որ թոփի բերանը չէր բաց անում, գետինն ուղում էր հազար կտոր լինել ու հոգին աւանդել:

Խ. Ա. բանանց.

ՆՈՅՆԱՆԻՇ.—Ընտանիք, գերգաստան:

ՀԱԿԱՆԻՇ.—Հետանդը հոգին աւանդեց:—Հայրը այս ուստի մութիւնը աւանդեց իւր որդուն:—Ուսուցելը պատ և աւանդում:

27. Փոթորիկը անտառապային ձորում.

Անդունդի մէջ եռ եկող ջուրը ափերը փորելով և զլորելով ահագին քարեր՝ դղրդեցնում է չորս կողմը. իսկ նեղ ու ահաբեր ափերը սարսեցնում են նորա վերալ նայողին: Զարհուրելի է սորա միջով ճանապարհորդելը անձրեա-

լին եղանակին։ Երկարատև փայլակն ու որոտումը այս-
տեղ այնտեղ արտաքսելով՝ մառախլապատ մութը՝ դողդո-
ղացնում է ձօրի բուրը լեռնական շինութիւնները, և ահ
ու դող է ձգում այս անհիւրընկալ խորքում, որտեղ այդ
ժամանակ տեսարանը կատարեալ գժոխալին է։

Տակն ու վերալ որստալով, կայծակի պէծն ու փալլը
մի վալրկեան լուսաւորելով շուրջդ՝ նկատելի է անում զար-
հուրելի տագնապը։ Հարիւրամեալ վիթխարի ծառերը
կատարից մինչև արմատը մի ակնթարթում ածուխ են վե-
րափոխուում, շանթահարուելով զարհուրելի հարուածից, և
կամ անդունդն են գլուրւում կամ կեանքից զրկուելով մնում
են կանգնած իբրև վկալք։ Ամեն վալրկեան մահը առաջդ է
կանգնած և փրկութեանդ լուսը միայն Աստուած է։

U. Ռազմիկնեանց.

I. ա. — Ալ ա մ ե ա լ, տասնամեալ, հալլւրամեալ, հազարա-
մեալ:

բ.—Երկարա տես, կարճատես, մշտատես, տեսիլ, տեսողական:

28. Փոթորկից յետոյ

Մի քանի օր սաստիկ որոտներից, կալծակներից, մըրեկներից և ողողներից վերջը՝ յանկարծ սեւադէմ թուխպերը ծուէն ծուէն պատառուեցան և գեղածիծաղ Արևի շողերը եօթնգունեան գոտուց, անուշագեղ Անեղնակից, երկրի վերայ կաթեցին։ Վարդն ու շուղանը, ծառն ու թփիկը սկսան փալիլ ու շողչողալ մարգարիտներով, աղամանդներով և ամենազան գոհարներով։ Օդն անապակ էր ու թափանցիկ՝ որպէս ոչ մի աննման բիւրեղ։ Անձաւներից գուրս վազեցին եղնիկներն ու եղնորթիկները վագելով ու վարգելով, այծեամներն ու այծեմնիկները ժայռերի ու վախերի վերան

դիւաբար սստոստալով։ Առիւծը վերջապէս իւր մութ ալը թողնելով ելաւ լոյս աշխարհը և ամենի բաշը թօթուելով մոռնչ հանեց, որից անտառը դողաց և քարանձաւները զարհուրագին որոտմունքներ արձակեցին. և այդ ահեղ ձայնից բնութիւնը՝ կարծես սարսափելով՝ իւր բոլոր խորքեց ու խորշերից գուրս վիժեցը անասնոց թագաւորութիւնը։ Զբերը կարկաջելով ու գըլգըլալով վագում էին, թռչուններն ու հաւերը գալլալիկներ ասում ու կը ու կը ու ձայներ հանում։ Աղաւնիները թողին իրանց թառն ու բները, գուրս թռան երդիքից և օդի մէջ սաւառնում ու ճախրում են։ Եզն ու ձին էլ արդէն գոմում չեն. գառը անուշահամ սէզ խոտի մէջ խայտում ու կալտում է։ Խնչ հիանալի տեսարան, երկինք։

Սարսափելի է ծովը..

Ս.Հաղին մոլով կանաչ ալիքները, խառնուած սպիտակ փրփուրով, երբեմն բարձրանում են, երբեմն ցածանում... Կարմրագոյն ամպիկները փախչում են որոտալիր երկնքի վերալով: Չմեռալին գունաթափ Արեը դանդաղ բարձրանալով մեծ մեծ ամպերի ետևից, արձակում է իւր թեք ճառագալթները կատաղի ծովի վերայ և տեղ տեղ ոսկեզօծում է ամենաբարձր ալիքների թափանցիկ կատարները: Չիւնի գոյն փրփուրը եփւում է և պտտւում է ստորջրեալ քարերի մօտով, որոնցով լցուած է վտանգաւոր ծովեզրը:

Մի մեծ նաւ, ջարդուած մեքենաներով, գնալով միմի-
այն առագաստների ուժով, որոնք դեռ ևս բռնուած են
կալմերի բեկորների վերալ, քշւում է դէպի ծովեղը: Եր-

բեմն բարձրանում է նա ալլանդակ ալիքների կատարների վերալ և երեմն անդունդք է իջնում նոցա հետ միասին։ Փալլակը փալլակեց... Խոկոյն նորանից յետոյ լսուեցաւ մի խուլ դրնդիւն, որ հազիւ էր լսում մըրկի աղաղակից... ալդ թնդանօթի արձակումն էր—վերջին նշանը, կորչող նաւի վերջին օգնութիւն կանչելը։

«Հիւլուսիայ».

30. Չմեռը գիւղում

Այժմ էլ ձմեռը, կապուած է աշխարհը, լցուեցին գոմերը, եզն ու կովերը։ Գրւղում լոռութիւն, չկալ ձեն ու ձուն։ Մի մուժ գոմ-օդից, լսում են ձայներ, մտած են այնտեղ, պարապ մարդիկներ, ասում են պունդլներ։

— Կոնի, գուռ ասա. իմ պունդլն բնչ է.

Հայրն ուղիղ, մայրը կեռ.

Տղան խելօք, թոռը գիժ։

— Վաղան ցիցը—հայրն ուղիղ,

Վաղն ինքը—մայրը կեռ.

Խաղողն օր հն ած—տղան խելօք,

Գինի, օդի—թոռները գիժ։

Ես ախալիսի պունդլ ասեմ, որ ձեր պապերն էլ չգըտնեն։ Էն բնչ է։ «Սարի ծերին վսկըսում է,

Սև ամպերին փախցնում է,

Հնձուորներին հովցնում է»։

— Քամին է, պատասխանեց Յակոբը։

Ա. Աղարքառեանց.

II. ա.—Յակոբ, Յովսէփ, Յովհաննէս, Ալմէն, Մուլսէս։
բ.—Բաղաձայն տառից և ու երկբարառից յետոյ և չէ
կարելի գրել։—Ա ը հ եստ, Ճանապարհ, օրհնել,
արհամարհել. Յովհաննէս, որովհետեւ—Լոյս, բոյս
(և ոչ՝ լուս, բուս)։

գ.—Հայր, մայր, եղբայր. գալ, քալ, սալ։

31. Չմերային առաւօտ

Երիտասարդ՝ տան տղերքը՝ ամառուալ պէս խոտ հնձելու, կալ կալսելու, ալգի փորելու, յօտելու, թաղելու, դարման կըելու հոգս չունենալով՝ ճլըմկոտալով, աչքները տրորում են ու քնաթաթախ մտնում գոմը՝ որ տաւարին, ձիաներին խոտ տան, տակըները մաքրեն, ջուրը տանեն, ձիաները թիմարեն ու հետք երգ ասելով՝ կրկին կապեն ու գնան տուն։

Յարգեոր հարսները՝ ասղարովը գիւլաբաթնի օշմաղը մինչև քթըների կէսը խոր գցած, քօլ ու լաշակի ծալը աչքների տակը խոր քաշած՝ այնպէս որ երեսները չէ երեւում։ մէկ դարավի կամ զադաք մինթանալ հագներին, մովի կամ կտաւի շապկով զարդարած՝ մէկ մեծ գօտկով մէջքըները չորս տակ, հինգ տակ կապած՝ թռչունի պէս կուփ կուփ վեր թռան երեսներին մի քիչ չուր քսեցին՝ փեշով սրբեցին ու որն սկսում է տունն աւելել, որը գուռը սրբել, որն էլ կրակ է անում որ թռնիբը վառի ու տան պատրաստութիւնը տեսնի, պղնձները վերան գնի ու կերակուըներն եփի, պատրաստի։

Տան երիտասարդ աղջկերքն էլ՝ գլխները սանրում են, մազըները հիւսած, թիկունքին գցած՝ ականջները կսպում, շուշտակը ուսըներին գցում, կուժը վերան դնում, բերանը կալնում ու գնում են՝ որ տան համար ջուր բերեն. և

Երկար ժամանակ ջրի վերալ միմեանց հետ զ ը ո յ ց անելուց
յետոյ՝ կրկին միմեանց հետ խօսելով, ծիծաղելով գնում են
իրանց տները:

Խ. Ա. Ա. Ա. Ա.

ՆՈՅՆԱՆԻՇ. — Կուժ, սակառ. — Խօսակցութիւն, գլուց:

Լ. ա. — Երիտասարդ, մանուկ, պատանի, ծերունի, պառաւ:
ՀԱԿԱՆԻՇ. — Մեր գոմումը շատ դարձան չկայ. արդեօք
այս ցաւի դարձանն լինչ է:

Խ. Ա. Ա. Ա. Ա.

32. Չմերային դիշեր

Զիւնը երկինքը պատում է, պարզիկալ գիշերը երկըն-
քումը ամպի կտոր չէ երևում. Լուսինը իւր բոլոր շնորհքը
կարծես կամենում է ցուց տալ. նորա փալլը սփռուելով ձեան
թերթիկների վերալ, գիշերուան մթութեան մէջ էլ կալծերը
մարդու աչք են խտղբառում: Լուսթիւնը ամբողջ աշխարհը
բոնում է. ամէն շունչ — կենդանի իւր համ ար մի ապաս-
տաբան է գտնում՝ մէջը մտնում. ոչինչ շշուկ չէ խանդա-
րում բնութեան մեռելութեանը: Գիւղերին մօտենալիս եր-
բեմն ալս միակերպութիւնը ընդհատում է գիւղական գամ-
փըռների ոռոցներով, որոնք աւելի աննպատակ են հաշում,
քան թէ մի որոշ նպատակվ:

ՀԱԿԱՆԻՇ. ա. — Շոնը հաւատաբիմ կենդանի է: — Զեր
դրացին մեռամւ: — Ոչ, ուռ կենդանի է:

Բ. — « Հայրեկ, ասաց դուստը հօրը,
կապոյտ երկնքի վերայ
Ռեքան առաջեր փալլում են վառ,
Ասես համար, թէ ի ը կայ:
Ասում են, որ ամենայն մարդու ուժանց
Աստղիկ ունի երկընքում. »

Ճշշմարիտ է, ասա, հայրեկ,
իմը հրտեղ է փալլում»:

— «Այս, գըստընկ, այդ ասողեցը
Ունին հաշիւռ ու համար.
Եւ մեզանից իւրաքանչիւր

Մի աստղ ունի իւր համար»:

Խնդրեմ վաղը բերէք ինձ համար „Սեղուլ“ հինգեթորդ
համարը: Զմոռաննաք, մեր տան համարը 3 է: — Սկսէք մէ-
կեց և համարեր մինչև 100-ը: — Ես աւելի լաւ եմ համա-
րում գասս սովորել, քան թէ պարապ ման գալ. և եթէ այս
ըստէիս սկսեմ, համար են իչս ժամում բոլորը կը պատրաս-
տեմ:

II. — Ամբողջ, ամբարեցտ, քամբախտ, համբաւ, համբոյք,
ամբիոն, ամբարտաւան, ամբար, թումբ, թմբուկ, սեպ-
տեմբեր, աշխատութեամբ, քաջութեամբ:

33. Չիւն

Զիւնը որ կու գալ երկընքէն ի վար,
իմացիր, մեծ բաղտ է մարդուս համար,
Վերմակի պէս տաք կը ծածկէ գետին.

Նա հողին կու տայ հիւթ, պարարտութիւն,
Դաշտին ու արտին մեծ առատութիւն:
Մի տըրտընջալ, մարդ, դու բընութենէն,
Թէ տաք և թէ ցուրտ՝ մեզ միշտ օգուտ են:

Գայնաւ — Քայլիպա.

I. ա. — Զմեռը ողջ բնութիւնը քնած է: — Այս մարդը
շատ լաւ բնաւորութեան տէր է:

Բ. — Թէ տաք և թէ ցուրտ: — Կամ տաք, կամ
ցուրտ: — Ոչ տաք, ոչ ցուրտ. մերթ ցուրտ, մերթ
տաք:

34. Զմերային գիշեր

Կէս գիշեր է: Հիւսիսիցը, ձիւսախառն սառ քամին՝
մերթ վալենի գազանի պէս, գոռում գոչում է ուժգին:
Մերթ պէս օտար ճանապարհորդ, ցըրտից սառած փոլթ
ընդ փոլթ՝ որպէս թէ իւր ձեռնափալով, ծեծում է տան
լուսամուտ: Պառաւ պապը տարածել է, արծաթաղ ատ
իւր թէեր՝ և միակերպ ծածկել սար, ձոր, անտառ, դաշտեր
և տըներ: Դուրսը տեսար ըուպէի մէջ, մի ձիւնի սար գո-
յացաւ՝ մէկ էլ քամին օձապլատուտ վրչեց—կըրկին չըքացաւ:
Չիւնի փոշին աչք է ծակում, առատ թափում արտասուք՝
ցուրտը սաստիկ անտանելի, չորջընում է բերնում թուք:
Բակի շունը մերթ խաղալով, ձիւնուում է իւր մուշտակ՝
մերթ գաղում է կնծին տալով, պատըստարւում սրահի
տակ: Ագաղաղը մոռացել է, սովորական իրա երգ՝ հաւա-
բընում կուճ է եկել՝ հաւքած գլխին իւր ընկերք: Ոչ
մարդու ձախ, ոչ կենդանու, մինչ շան հաջոց չէ լսում՝
կըրակ, ճըրագ, լոյսի նշով, ոչ մի տեղ չէ երևում:

Ա. Սականական:

ՆՈՅՆԱՐԴ.—Գոռալ, գոչել, աղաղակել.—տարածել, որի-
ուել.—Լուսամուտ, պատուհան.—Հաւաքել, ժո-
ղովել, զեզել, կուտակել:

ՀԱԿԱՆԻՇ.—Մեր տան բակում ը մի խոր ջրհոր կայ:—
«Հապա ախ ինչ աստղ է հայրեկ,
Այ այնակս պարզ վառւում է.
Նորա մաքուր, մրաւծառ, լոյսը
Զորս կողմը բակ բըռնել է»:

I. ա.—Մարդու բնակարան, աղուէսի ոքջ, թռչունի
բոյն, ծառի բուն, մարդու բուն (երան):
բ.—Ճանապարհորդ, նաւորդ, լուղորդ, որսորդ:

II. ա.—Բուկէ, կեւրակէ.—Մանէ, նունէ, չեղնէ.—արծաթէ,
—ուկէ:

Ոչ մի բառ չէ վերջանում «ե» տառով:

35. Տարուայ չորս եղանակներ

Ա.

Գալիս է Գարուն, նոր կեանք է բերում.
Վարդ և շուշանը բացւում են, բուրում,
Թարմ և ծաղկազարդ վալում է տերե,
Մանուկ զօրութեամբ ծագում է Արե:
Ենում է անտառ: Երգում է ծիծառ:
Վաղորդեան ցողը սըփուում է դոհար,
Կանաչ հովիտը վառւում է պայծառ:
Զարթեց բընութիւն կուտական խանդով:
Դէպ՝ գործ մեղուներ դիմեն եռանդով:

Բ.

Գալիս է Ամառ, —կրակուտ եղանակ,
Սնխոնջ վաստակի, պըտղի ժամանակ:
Իւր աստուածեղէն չերմութեան հողին
Կենսատու շընչով ծաւալէ արփին:
Հասել է ծիրան, տանձը մեղրածոր,
Մանկան թըշի պէս վառւում է խընձոր,
Սաթանման դեղին կախուած է ողկուզ,
Մանկտին գըաւում է և շըլոր և թուզ.
Սեխով, ձըմերկով լիքըն է բոստան,
Ոսկեալ հոսանքով ծըփի անդաստան,

Եւ արտօրալքի ծանրացած հասկեր՝
Խիստ հիանալի նըկարեն պատկեր։
Յետ երից անգամ երգը խօսնակին
Զարթնում է խսկոյն հնձուորի հոգին։
Փալլում է մանգաղ։ Գործում է մըշակ։
Բարձած սալլակի ճըռինչն անուշակ
Հընչում է հեռու, հեռու դաշտերէն,
Բերում դէպի կալ հունձքը արտերէն։
Կասում է իւր կալ, մաքրում է ցորեան։

Պ.

Գալիս է Ա. շուն։ Թափւում է տերեւ,
Սոխակն իւր վարդին տոյ վերջին բարեւ,
Եւ տարափոխիկ արագիլ, կըռունկ՝
Գաղթեն դէպի տաք երկըրներ խորունկ։
Ուժ գին, ցըրտաբեր վըզում է հիւսիս,
Սև ու թուխպերով պատւում է Մասիս։
Մահուան դեղնութեամբ ծածկում են դաշտեր,
Զուարճասէր սըրտից չեն ցըրւում վշտեր։
Լիքն է հունտերով մըրջիմին ամբար,
Թէւ չը ցանեց, չը կասեց իւր կալ,
Եւ իւր մոմեղէն տանը շար ի շար
Մեղուն կազմել է ձըմեռուալ պաշար։

Պ.

Գալիս է Զըմեռ, — ալեոր ծերուկ,
Խոժոռած դէմքով, ըսպիտակ մօրուք,
Զըկալ մի ժրպիտ նորա աչքերում,
Դառնաշշունչ ձայնով սարսափ է բերում,
Սառած է արիւն ողջ երակներում,
Սիրոյ ջերմութիւն՝ չկալ նորա սըրտում։
Մահաբեր ձեռքով ձիւնեղէն պատառ

Տարածում է նա։ Սար, դաշտ և անտառ,
Ողջ ծածկում են սպիտակ պատանով...
Լըռում է թըռչնիկ. մեռնում է ծաղիկ.
Սառց ապատ գետակ մընչում է լըռիկ։

Բ ա ք ք ի.

I. ա. — Ուժ գին, մոլեգին։

բ. — Սառցապ ատ, ցօղապատ, թաւշապատ, արծաթապատ

36. Տամերկու ամիսները

1. ՅՈՒՆՈՒԱՐ.

Այս ամիսը տարուայ առաջին ամիսն է։ Ամսի Յին
միշտ կատարւում է Քրիստոսի մկրտութեան տօնը։ Եկեղե-
ցիներում ջուր են օրհնում. այս պատճառով տօնը Զրօրհ-
նէք էլ է կոչւում։ Նատ քաղաքներում ու գիւղերում ժո-
ղովուրդը գնում է գետի կամ առուի վերայ, և այնտեղ
հոգեսորականների գասը հանդիսաւոր կերպով օրհնում է
ջուրը։ — Այս ամսում արտերում աշխատելը շատ դժուար
է. ուստի երկրագործը տանը պատրաստում է մշակութեան
գործիքները և տնային տնտեսութեան մասին սկսում է
հոգս քաշել։

2. ՓԵՏՐՈՒԱՐ.

Այս ամսում արեն սկսում է բարձրանալ և օդը տա-
քանում է. բայց շատ անգամ սաստիկ սառնամանիք է լի-
նում և գետնի երեսը ծածկուած է լինում ձիւնով։ Այս
ամսում կարելի է նաև ծառերը յօտել։ Այս ժամանակ կա-
րելի է ամէն տեսակ պտուղ տնկել, մանաւանդ խօնաւ
հողի մէջ։ — Ցերեկուայ երկարելը փոքր առ փոքր զգալի է

գառնում: Ամսիս 14 ին միշտ Տեառն—ընդ—առաջի տօնն
է կատարում: Այս առնի նախընթաց երեկոյին տների բակե-
րում խարոյկներ են վառում, ինչպէս սովոր էլին հին հա-
յերը: Ամիսների մէջ Փետրուարը ամենակարճն է: Երեք
տարի շաբունակ 28 օր է ունենում. իսկ չորրորդ տարին՝
29 օր: Այն տարին, երբ Փետրուարը 28 օր ունի, ասւում
է հասարակ տարի. իսկ այն տարին, երբ այդ ամիսը 29
օր ունի, կոչւում է նահանջ տարի: Հասարակ տարին
365 օր ունի. իսկ նահանջ տարին՝ 366 օր:

3. Մ Ա Ր Տ.

Այս ամսին օրերը շուտ շուտ երկ արանում են. արևն սկսում
է տաքանալ. գետնի երեսն էլ սաստիկ հովերից ցածաքում
է, բոյսերն էլ սկսում են ծլիլ ու ծաղկիլ: Երկրագործը գե-
տինը պարարտացնում է: Այս ամսին եղանակը սաստիկ փո-
փոխական է դառնում. միւնոյն օրը երեմն քամի է փշում,
փոշի բարձրացնում, երեմն ձիւն է գալիս, երեմն բոլոր
երկինքը ծածկւում է ամպերով և յանկարծ ալդ ամպերի տա-
կից գուրք է հանում իւր գլուխը կարմիր ու փալլուն արել:

4. Ա Պ Ի Ւ Լ.

Սաստիկ հովերը դադարում են և բարակ ու մեղմ քա-
մին փչում է: Սարերի վերայից ձիւնը հալում է ու գետերն
է թափւում: Գետերն էլ վարարելով՝ դաշտերն են մտնում:
Այն բլուրները, որոնք առաջ հեռուից քարոտ անապատի
պէս էին երևում, այժմ կանաչով ծածկւում են: Ծառերը
կանաչում և ծաղկներով զարդարւում են: Մինչ անգամ
թփերն ու փշերն էլ են արթնանում: Բոլոր բնութիւնը կեն-
դանանում է և ամէն արարածները ողջունում են գարնանը:
Գառնուկները ցատքըտելով գնում են իրանց մալրերի կող-
քից: Կովն ու եղը մոռանալով իրանց դանդաղութիւնը՝

Ժրանում են: Մանը թռչնիկները մեծ ուրախութեամբ ան-
դադար ծլվըլում ու ծըգծըլում են:— Այս ամսին անձրեները
երկարատեւ չեն լինում. երբ մի կողմը անձրեւ է գալիս,
միւս կողմը երկինքը ծիծաղում է. և երկնքումը տարած-
ում է գոյնզգոյն ծիածանը:— Մշակն ուրախանում է, տես-
նելով որ աշխատանքի ժամանակը մօտենում է: Եկեղեցին
էլ է զուարձանում Յիսուսի սուրբ Յարդիւնովը: Երեխա-
ներն էլ կարմիր հաւկիթներ են կատարատում: Այսից ուստի
այս աշխատանքը ան նայու յանձնա՞լ ան նարդումաց
հանցանց և մերը 5-ր ցը Ա Յ Ա Ս ա յ ա շ ա մ և յ ո

Զարթեցէք. այսուհետեւ ամօթ է ուշ վերկենալը: Բաց
արէք լուսամուտն ու տեսէք, Ո ղեռ Սըւել չէ ծագել. բայց
արշալուսը ներկուել է ծիրանի գոյնով: Ի՞նչպէս երկարացել
Են օրերը. ղեռ ժամը 4½ է: Ի՞նչպէս ջինջ ու պալծառ է
օդն ու երկինքը: Մայիսը ամիսների մէջ ամենադեղցիկն է.
գաշտեր, պարտէզներ ու այգիներ այս ամսին աւելի զուար-
ճալի են դառնում: Ահա Ա.ըւել ծագում է և իւր սակեգոյն
ճառագալթները խփում է սարերի գագաթներին ու բարձր
ծառերի կատարներին: Անուշ հովը օրօրում է թփերը և
շարժում է ծառերի տերևները, Ի՞նչպէս աշխատմութեամբ
երգում են սոխակներն ու ծիծեռնակները: Ամէն ծառ ու
ծաղիկ իւր հոտն է բուրում և բուրմունքները միա-
սին խառնուած՝ մարդուս սիրտը զմայլեցնում են: Մանուկ-
ները զանազան տեսակ ծաղկներից փնջեր են կապում: Ծառ
ու ծաղիկ, դաշտ ու երկինք՝ ամենքն էլ պալծառացել են: Թու-
չոչունը ծառերի խոռոչներում բոյն է հիւսում.

6. Յ Ո Ւ Ի Ա Վ.

Զերմութիւնը օրեցօր սաստիկանում է, թէպէտ երեմն
երեմն անձրեները մի փոքր ցուրտ են բերում, բայց շուտ

Են դադարում։ Ամառը վերայ է հասնում։ ցորենը հասունացել է, հնձող է կանչում։

7. ՅՈՒԼԻՅՈՒ.

Դաշտերում մշակները եռանդով հնձում են հասունացած արտերը։ մանր տղալքն էլ հնձած հասկերից խրձել են կապում։ Ամէն մարդ իւր որոշ չափը հնձելուց յետոյ՝ ամենքը ժողովում են միասին ու պառկում են ստուերներում, և համեստ կերակրով նախաճաշելուց յետոյ՝ ոլժերը կրկին վերանորոգում են։ Դարձեալ սկսում են աշխատել մինչև կէսօր, և ճաշելուց յետոյ ամէն մէկը մի կողմն է քաշում, ականջը ճպուռի ձայնին տուած։

8. ՕԳՈՍՏՈՒ.

Այս ամիսը պտղաւէտ ամիս է։ Դաշտալին աշխատութիւնը դեռ այս ամսին էլ չէ վերջանում։ ժողովում են սիսերը, լոբին ու բակլան։ Այս ամսին օրը պայծառ է, օդը տաք։ բայց թէ պայծառութիւնը և թէ տաքութիւնը ամսուայ հետ նուազում է։ և տարուայ վերջին, զօրաւոր օրեն են համարում։

9. ՍԵՊՏԵՄԲԵՐ.

Այս ամսին ամառուայ տաքը իջնում է։ աշունը վերայ է հասնում, գիշերն ու ցերեկը հաւասարում են։ Ուսումնարանները բացուում են։ Զմեռուալ համար բանջարեղէններ են յանում։ Պահելու դդումները ժողովում են և արեգունի տեղում պահում։

10. ՀՈԿՏԵՄԲԵՐ.

Այս ամիսը ալգեկութի ամիսն է։ որովհետև խաղողը

լաւ հասունացած է լինում։ Ամսիս վերջը հերկած ու պատրաստած արտերում ցանում են ցորենը։ ծաղիկ պահողը ժողովում է հունարեր՝ չորացնելու և պահելու համար։

11. ՆՈՅԵՄԲԵՐ.

Դաշտերը մերկանում են իրանց գեղեցկութիւնից, ծառերը կորցրել են իրանց զարդերը, թափուած տերևները դեղնում են։ մերկացած ճիւղերը չորանում են։—Էլ չեն երևում ծիծեռնակները. լուսաբացին չեն լսում թռչունների երգերը. ճնճղուկների ծըլվըլոցը դադարում է։ Դաշտերում գըռգըռում են ագռանները. օդի մէջ լսումէ չընող թռչունների սուր ձայնը։—Մէգն ու անձրել շատ անգամ արգելում են արևի լոյսը։ Արևմտքից սառը քամիներ են փչում։ և ձիւն է գալիս։

12. ԳԵԿԾԵՄԲԵՐ.

Ցուրտը հետզհետէ սաստկանում է. ցերեկը կարճանում է, և հէնց որ երևում է Արևի երեսը, իսկոյն կրկին ծածկը ըստում է։ Մինչեւ ամսիս 10-ը ցերեկը կարճանում է, գիշերը երկարանում։ Կովերը, եզներն ու ոչխարները փակւում են տաք գոմերում. գիւղացիքն էլ գիշերները այստեղ ժողովուած՝ իրանց տնալին գործքերն են շինում։ Նոքա գարմանում են իրանց անսասւնները և պատրաստում են մշակութեան հարկաւոր գործիքները։ Կանալք մանում, հիւսում ու կարում են։ Շուտով պէտք է գալ նար ծարին։

—

տար առ ծարելու զնդիմ սիսև և ծաղկմասամ առ առ պուշտ քիրած զամաց մմ նաև նազար նազար ծառապ արևած արդար և արվածառ զգամանը և նախոր

Բ. ՏՈՒՆ ԵՒ ԸՆՏԱՆԻՔ

առ զարդար զարդար զարդար մմ նաև նազար զարդար զարդար զարդար 37. Օ ջ ա ղի մմ յաջաբ զարդար մմ է մմ նաև նազար զարդար զարդար համար կազմակերպութեամբ ասւում էր օջաղ: Օջաղ քանդելը, նորանից հեռանալը, և որա վերայ խթ աչքով նալելը գիւղացոց համար մեղք էր համարուում: Օջաղը սուբբ էր, պաշտելի և համբուրելի: Մէկը միւսին եթէ մի զգալի վնաս էր լինում տուած, հակառակորդի օջաղն էր ընկնում և անմիջապէս թողութիւն ստանում: Եօթը եղբարներ, թոռների տէր՝ երարից չէին բաժանուում և բաժանուելիս օջաղը մեծինն էր: Գիւղացու տան շինութեան և հարստութեան մի պատճառն էլ «դովլաթ բաժանողն» էր. դա կեանքի և մահու հրեշտակն է, որ դժուում է օջաղի գլխին և ամէն երեկոյեան պահուն ծերունու կերպարնքով պարտում է գոմի մէջ: Նորան միայն տանու արդարները կարող էին տեսնել: Օջաղին ծուռ նայողը դովլաթին է քացով տալիս: Այսպիսի դէպքերում դովլաթ բաժանողը խռովում հեռանում էր այն տնից:

Օջաղի առաջին ծնուռմ, սնուռմ, զարգանում և միշտ խրատում էր տան զուակը: Մարդիկ երգուում, պար ծենում ու հպարտանում էին օջաղի անունով: Նոցա բոլոր սրտնեղութիւնները կորչում էին, երբ նոքա արտաքին նեղութիւններից ճնշուած, աշխատանքից լոգնած, մտնում էին իրանց լարկի տակ: Օջաղի առաջին ինքնիշխան են մարդիկը. օջաղը նոցա միիթարանն է, աչ ու ձախ նոքա իրանց սե փականը տեսնելով, զաւակների հետ շուրջ բոլորած «փառք քեզ, Տէր են կանչում»:

Տան մանը երեխաները ամէն կիրակնամտին արդար մոմ էին վառում օջաղի գլխաքարի վերալ: Երբ որ մալը խունկ էր ծխում, ամենքն էլ քարերը համբուրելով ծունը էին կրկնում մօր հետ, որ օջաղը բարեխօս լինի տիրամալը Աստուածածնին, սա էլ Աստծուն, Աստուած էլ կանգուն պահէր իրանց տունը միշտ և հանապազ: «Ա՛սա, բալալ ջան, իմ աղօթքը դու էլ ասա. քո արդար բերանիցը Աստուած շուտ կը լսի»: Այսպէս էր լորդորում մալը որդոցը աղօթելիս: Կիրակնամտին օջաղիցը կրակ դուրս տալը մեղք է համարուում. ոչ մի տուն այդ օրը չէ հանգցնում օջաղի կրակը:

Ա. Արարագիւացանց.

Ա. Արարագիւացանց.

ՆՈՅՆԱՆԻԾ.—Քանդել, աւերել, կործանել, խորտակել:

ՀԱԿԱՆԻԾ.—Տունը կոչւում է օջաղ:—Այս ուսանաւորի իւրաքանչիւր տօւն չորս տողից է բաղկացած:

Բ.—Օջաղի առաջին էր սնուռմ երեխան:—Ցունուալի մէկը մէկը տարտուալ առաջին օրն է:

I. ա.—Ներքին, արտաքին.—Վերին, ստորին.—Վերել, ներքել:

II. ա.—Սա, զա, նա. սորա, գորա, նորա.

Ա. ա.—Սոքա, գոքա, նոքա, սոցա, գոցա, նոցա:

բ.—Սուրբ, նուրբ, ուրբաթ, երբ:

38. Դ Ր Ի Ջ ա կ

Դա մի փոքրիկ թափանցիկ պատուհան էր՝ երկու հարևանների միջնապատումը շինած: Ոչ վարագոլին էր ծածկում այդ պատուհանը և ոչ էլ մի բան արդելք էր լինում ականատես լինելու միմեանց տան գաղտնիքին: Ամէն մարդ սուրբ պարտականութիւն էր համարում դրիջակը գործ դնել

կարևոր ժամանակը. ճրագ ուզել միմեանցից, կերակրի բաժին տալ իրար, քաղցր զրոյցներ անել պարապ միջոցները, միմեանց նեղութեանը օդնութիւն հասնել.—ահա ինչ էր դրիջակի նշանակութիւնը:

Ընդհակառակն՝ աններելի լանցանք էր, եթէ մէկը չարդիտաւութեամբ քաղաքէր իւրդրիջակից դրացու տան գաղտնիքն իմանալ: Եթէ որպիսի և իցէ դիպուածով նա տեղեկանար դրիջակովը հարևանի տան որևէ իցէ ընաանեկան խորհրդին, նա պատրաստ էր իւր լեզուն բնիցը պոկ տալ, քան թէ մեղանչել դրացութեան սուրբ պարտականութեան դէմ:

Ալսչափ մեծ էր այն նուիրական փոքրիկ պատուհանի սրբութիւնը մեր պարզ և առաքինի պապերի համար:

Պ. Պառշետնց.

ՆՈՅՆԱՆԻՇ.—Դիտաւորութիւն, մտադրութիւն:

ՀԱԿԱՆԻՇ.—Մեր և ձեր տան միջոցը այնքան երկար է, որ իս միջոց չունէի ձեր տուն գալու—Այս երկու սիւնի միջոցը (միջի տարածութիւնը) շատ երկայն է:—Այն միջոցին (այն ժամանակը), երբ մէկը խօսում է, միւսները պէտք է ականջ դնեն: Նա այնքան ժլատ է, որ դու ոչ միջոցով (հնարքով) չես կարող նորանից փող առնել:

I. ա.—Դրիջակակից, հասակակից, ընկերակից, խօսակից, ձայնակից, սրտակից, հոգեկից:

Բ.—Անհոտ, անհամ, անմահ, անօգուտ, անխելք. անդադար, անհանգիստ, անհամբեր, անշարժ. աններելի, անտեսանելի, աննկատելի:

39. Վարաք

Գիւղի վերին թաղումը, Աղբաձորի գլխին, սևերես մարդու պէս՝ կանգնած էր մեր մարաքը: Դա նշանաւոր էր իւր հնութիւնով: Նըջապատող կալերից մղեղն ու դարմանը այնքան էին կուտուել նորա ծղօտեալ եռակիւնաձև կատարին, որ տեղ տեղ կանաչել էր: Նորա պատերը պոխի ծառի ճիւղերից հիւսուածք լինելով, արևի ու անձրւի ներգործիւնից փառել խարխալել էին: Քամին վըսվըսում էր ծակերից. այնտեղ ծտերը թառում էին, դժվըժում, ծլվըժում ու ճռուղում: Առաստաղը այդ պատերի վերալ էր կախ ընկած. վեց հատ կեռ ու մեռ սիւներ պահում էին հինօրեալ շէնքը փլուելուց: Հիւսիսային քամին դողդողացն ուժ էր նորան, այնպէս որ՝ առաստաղի՝ օձաբների նման ծակերից հողը ցած էր մաղում: Մարաքի ներսի մի կողմում կուտուած էր հողաց եալ դարմանը, որ տէրտէրակինը թողել էր հաւերի քջուշ անելու և ձուածելու համար: Այդ հողացեալ մարմնից գուրս էին սողում զանազան նամածճիներ: Այս ու այն կողմում նամասունկեր էին բսել՝ բարակ արմատով, լայն ու տափակ գըլխարկով: Մարաքի դրան համար մէկ ձեղք էր թողած, ցած ու նեղլիկ, որին փակում էր մէկ կապ փուշ:

Ա. Արարաբետնց.

ՆՈՅՆԱՆԻՇ.—Ներգործութիւն, ազգեցութիւն:

ՀԱԿԱՆԻՇ.—ա. Ագաղաղեկատար, ծառի կատար, սարեկատար:

բ.—Քոյս ջուր է ածում:—Հովլիք սրինգ է ածում:—Հաւը հակեթ է ածում:

I. ա.—Վազվըզել, ծակծըկել, դողդողալ:

բ.—Հանգուց եալ, ննջեցեալ, հողացեալ, սառուցեալ, բանտարկեալ, հետեհեալ, անցեալ, դարձեալ:

40. Երկրագործական գործիքներ

Երեանայ հայերը հողը վարում են գութանով, որ
թէպէտ մեծ պակասութիւններ ունի, բայց ունի և իւր
յարմարութիւններ. յարմարութիւնն այն է, որ գիւղացիք
հեշտութեամբ նորոգում են գութանը, երբ հարկը պահան-
ջում է:

Գութանի մասները սոքա են. խոփ, որ կտրում է
մալր հողը. թե, որ վեր է պառկեցնում հողը. սա փա-
տիցն է. ձե ի չ, որ կողմնակի է կտրում հողը. մաճ, որով
հողագործը ուղղութիւն է տալիս գործին. է շ, որի
վերայ պնդացրած է ամբողջ գութանը: Գութանը ունի
երկու ակն՝ մեծ և փոքր ստ: Մեծ ակը բանում է ճեղքած
հողի մէջը: Պնդութեան և ծանրութեան պատճառով հողը
քանդում են 2—6 եզներով, որոնք քաշում են գութանը
բնադէնով: Լուծի սամիքը—եզան պարանոցի կողմ-
նակի փայտերը—երբեմն լինում են երկաթից: Սամիքը
տակից կապում են սմողէնով:

Արօրը կամ չութը հողագործները գործ են դնում
աշնանը՝ հողը մանբացնելու: Նորա մասերն են խոփ, մաճ
և ուլամտի, որ մի կոկած փայտ է և որով բարձրացնում
ու վալը են թողնում խոփը: Ուլամտն կապում են լծան
հետ կղանով, որ կաշուէ չուան է:

Փոցխը գործ են ածում ցանքը հողով ծածկելու.
շատ անգամ նորա ետևեց ցախ են կապում, որ կոչում է
տափան: Տափանը լցնում է սերմած փոսերը և հարթում
արտը:

Ա. Ռաբինեանց.

41. Բարկենի հունձը.

Ա.

Տեսէք ինչպէս՝ ուժեղ զօրեղ ինչ ուժ քայլ
Կերթան կուզան եզինքն ահեղ, առաջ մար
Տեսէք ինչպէս՝ արօր գութան:

Կը պատառեն հողը խոպան:

Տեսէք ինչպէս՝ կըտրէճ Բաբկէն
Բըռնած մաճէն ու գութանէն,
Գեռքը մտրակ Վարդգէս որդին
Խիստ կը տանջէ, խիստ եզներին:

Տեսէք ինչպէս գուղձ գուղձ պատառ

Կը պատառի հողն անզագար,

Ուղիղ գըծով վերէն ի վայր

Բացուած ակօն է հաւասար:

Տեսէք ահա և Բաբկենին

Ծերունի հայրը քովերնին

Կ'օրհնէ որդիոյն քիրտն ու վաստակ,

Անձրե կ'ուզէ և Արեգակ:

Բ.

Հազարաւոր և անհտմար

Սերմ սերմանիք, ցորեան հաճար

Առատ առատ քաջ սերմացան

Ցանեց Բաբկենը գանազան:

Աստուած տիսաւ ջանքն ու քրտինք,

Օրհնեց աճին բիւրապատիկ.

Ամպը կաթեց ցօղ ու տնձը,

Երկինք ծագեց պալծառ Արեւած գանձ

Փ.

Գարունն եկաւ առատ տարի

Կը խոստանար շատ բարելի,

Գունդ գունդ ամպերը հողմավար

Անցան գնացին հեռու աշխարհ:

Ծառը պըտկունք, դաշտը ծաղիկ

Հովիտն արօտ ու դալարիք,

Տեսակ տեսակ և գունագոյն

Բողբոջեցան բազմաբեղուն:

Տեսէք ինչպէս և Բաբկենին

Արտն է ծաղկել բոլորովին,

Կանաչագեղ կանգուն հասակ

Բարձրացել է ամէն միակ:

Գեղապըսակ և բեղմնաւոր

Մէն մի գըլուխն հազարաւոր

Աշխատանացն մըշակին

Առատ բարիք կ'աւետէին:

Սերմնացանն արտին վերայ

Աչքը ձըգած կ'ուրախանալ.

Եւ կը դառնայ բեւր բարութիւն

Կը խոստանալ իւր ամուսնոյն:

Փ.

Տեսէք ինչպէս՝ ոսկեգոյն հասկը

Ատոք լեցուն և վալրահակ

Հողմին հանդէպ բարձրագագաթ

Կ'երերցընեն իւրեանց ճակատ:

Տեսէք ինչպէս՝ առւր գերանդին

Նորմն Կը պառկեցնէ նոյսագետին, Հոգած ա ծն չի ըստանի
Նորմն Հօրը հընձածն իրար վերայ ու ո ծնոր ծառուած բայ
Թիզեց Վարդգէս շեղ շեղ որալ:

Տեսէք ինչպէս՝ աշխորժ արագ

Աջ և ահեակ միշտ բոլորակ

Կամին լծուած զոյտ կալոտին

Յոգնած յոգնած կը պըտըտին:

Կամնասալին վերալ Բարկէն

Զի դադարիլ մըտրակելէն,

Մինչև կասեց ցորեանն, հաճար,

Թիզեց, լեցուց մարաքն, համբար:

Մ. Պալէտն.

I. ա.—Կը ինապ ա տ ի կ, Երկապատիկ, Եռապատիկ, քառա-
պատիկ, հնգապատիկ, տասնապատիկ, հավերապա-
տիկ, բիւրապատիկ:

42. Վալոցը

Զառամեալ ծերերից սկսած մինչև երեք չորս տարե-
կան երեխան կալերի մէջ գործում են: Մէկը կամն է
քշում, միւսը կալը շուր տալիս, երրորդը ծեծուած օրանը
եղում եղանում, չորրորդը թեղ անում: Սա մաղում է, նա
ծանծը քարմաղում:

Յան կարծ ամպերը թխպեցին. գիւղացին ամէն բան
թողած՝ շտապում է միմիայն կալը ժողովել և իւր դառը
քրտինքով ձեռք բերած հայահատիկները պահել պատսպա-
րել անձրեց: Դադարում է անձրել. մի քանի ժամից
կամ մի երկու օրից չորանում է գետինը և կալերը նոր ի ց
փուլում են. ըոպէական հանգստութիւնը չքանում է:

Ամենքը, թէ մեծ և թէ փոքր, նորից ձեռք են առնում
ընդհատուած գործը. նոր եռանդ, նոր աջխոյժ է ընկնում
ամենքի սիրտը. գործունէութիւնը տիրում է կալերում։

Յ. Գէղամէտն.

- I. ա.—Հայրս օրական երկու ոռւբլի է ստանում. Եղբայրս՝
շաբաթական հինգ ոռւբլի։
- բ.—Փոլս մի տարեկան է. Եղբայրս երկու ամսական։
- գ.—Նոր շոք, նոր գերք. — նոր հասկացալ, նոր գուցել.
նոր կարդացել, նորեց արտագրեցել։
- II. Յ.—անկարծ, յ—աջողել, յ-արձակել, յ-արգել, յուղար-
կաւորել, յ-իրաւի, յ-ետե, յ-առաջարան, յ-առաջա-
ռէմ, յ-աւելուած, յ-ուշարար։

43. Կալի երգ.

Եղը ջան, կալ արա, կալիդ ման արա,
Հասկերը Փըշը, ցորեն դուրս արա,
Հաշանը արորիք, լաւ գարման արա։
Ես ու դու մին ենք, իրար եղբայր ենք,
Մինչև երեկոյ իրար հետ տանջուինք.
Ես երեկոյեան կալը կը թեղեմ,
Դէպի կանաչ խոստ քեզ բաց կը թողեմ.
Լուսնակ գիշերին թեղը կը քամեմ,
Դարմանից ցորենը մեղմով կը ջոկեմ.
Դարմանը մղանով մարաքը կ'ածեմ,
Ցորենը ջուալով ամբարը լցնեմ.
Երբ որ ձըմեռը կը գալ, կը մըսենք,
Դուք դարման կ'ուտէք, մենք ցորնով կ'ապրենք.
Եղը ջան, կալ արա,
Կալիդ ման արա...

Եղը ջան, եղբայր, դու իմ աջ կուռն ես,
Իմ թէ ու թիկունք, դու իմ տան դուռն ես.
Քեզ որ չունենամ, արտ չեմ ունենայ,
Կալ էլ չեմ կալսի, ցորեն ըստանալ։
Փողի պարտք ունիմ՝ ցորեն եմ տալիս,
Տան կարիքները ցորնով եմ հոգում,
Տէրտէրի հարկը ցորեն վըճարում։
Աղքատ անճարին ցորեն եմ բախշում,
Աշըղի, որբի՝ ցորնից մաս հանում.
Խօսքով, ցորենը մեր բոլոր լուսն է,
Մեր շունչ պահողը, մեր աչքի լուսն է.
Ման տուր, իմ եղը՝
Ապրի քո վեղը...

Ա. Արաբութեանց.

- I. ա.—Պահող, երգող, գուղ, նկարող։

44. Երկրագործ

Ա.

ՈՇ, երկրագործ, երկրագործ,
Քանի սիրուն է քո գործ.
Արել չելած՝ մածն է քո ձեռքիդ,
Եօթ զոյգ գոմէշներ լըծած գութանիդ,
Ծըրում ես պատում դու կոշտ ու խոպան—
Լեռներ ու ձորեր, հանդ ու անդաստան։
Ցանում ես ցորեն, կորեկ ու գարի,
Բամբակ ու բըրինձ ամենալն տարի.
Ծըրում են ծաղկում ճակտիդ քրտինքով
Քո վարած դաշտեր, որ լի էր փըշով։

Անցնում է գարուն, ոսկեզօծ հասկեր
Լըցւում ծածկում են քո սիրուն արտեր:

Բ.

Հասնում է ամառ, մանգաղը ձեռքիդ
Հընձում ես հնձում, խուրձեր կապոտում.
Խուրձերը բարդ բարդ սալով ու ձիով
Քըշում ու բերում կալը համցընում:
Կալում կալսում ես, թեղում ու քամում,
Մաքուր ցորենը քո տունը կըրում,
Իսկ չոր գարմանը անասնոց համար
Չըմեռուան պաշար՝ մարաքը լըցնում:
Եւ երբ փրչում է դառնաշունչ ձըմեռ,
Նըստած խըրճիթում քո խոփն ես սըրում,
Սարքում պատրաստում արօր ու գութան,
Եւ գարնան գալուն նորից ըսպասում:

Կ. Կ. Մ. Շահապարհանց.

I. ա.—կապել, —կապուտել, թռչել—թռչլուտել. կոտըել,
կոտուտել, կտըել, կտրտել, փշել, փշտել, նստել
նստուտել.
Երբ ուսուցիը նստեց, աշակերտներն էլ նստուտեցին:
բ.—Երկրագործ, հողագործ, ատաղձագործ, ձեռա-
գործ, ժամագործ, բարեգործ:

45. Հովուական կեանք.

Օգոստոս ամսի գուարթալուս և ջերմասիւգ օրերից
մէկն էր. և արեգակը բաւական բարձրացած լինելով,
կարծես տուարածների դասը հրաւիրում էր հանգստանալու
թաւոստ կաղնիների և կաղամախների լայնասփիւռ հովի
մէջ: Այն ժամանակ հայ հօտաղները, որոնք իրանց հօտերը
արածեցնում էին Վանանդայ և Երակայ պարարտարօտ հովիտ-
ների թանձրախիտ սիզումը, թողնելով կաթնարուխ մար-
մանդները և քշելով իրանց խաշինքը՝ գնացին տարածուե-
ցան անտառակի սաղարթուն վարագուրի տակը, որտեղ նոցա
համար հանգստաւէտ ապաստան էր պատրաստուած:

Ամենքը մոռանալով այնտեղ իրանց մտքի տաղտուկը,
և մի փոքր հանգստանալուց ու իրանց անդամները ան-
վրդով պարզելուց յետոյ՝ յուշիկ լուիկ նայում էին իրանց
ոտքերի տակը արածող հօտերին և ամբողջ գիւղական տե-
սարանին: Կենդանիների որոճալու և փնչացնելու ձաները
հետզհետէ գադարել էին, և շուտով մի կատարեալ լուու-
թիւն ու հանգստութիւն էր տիրում թէ հովտի, թէ արա-
ծեցնողների վերայ, այլև քամիներից տատանուող վարսա-
ւոր ոստերի մէջ. երբեմն երբեմն լսելի էին լինում սա-
րեակների կարկաչոցը, և տեղ տեղ ճնճղուկների ճըռ ու ու-
ղիւնը. միայն բիւրակնեան լեռների եղեմական կողերովը
դարիւ դարիւ իջնող և Ալրաբատայ հազարաւոր հովիտնե-
րովը վազող Երասխ մեծ գետի մի ակնակիտ առուտակ՝
կարկաջում էր մարմանդների միջովը, և համբոյր տալով
ծաղկներին՝ սոլոսկում թագնուում էր մութ շամբերումը
և շուտով ճանապարհ բաց անելով իրան՝ նոյն կերպով ծա-
ւալուում էր ծաղկաւէտ ափ ներումը:

Հ. Պ. Աշշան.

ՆՈՅՆԱՆԻՇ.—Ալեկ, արեգ, արեգակ.—վճիտ, ականակիտ.—
մութ, խաւար.—ափ, եղու.

ՀԱԿԱՆԻՇ. ա.—Աշակերտը սովորում է իւր դասը:—Հոգեռա-
կանների դասը շարական էր երգում:—Աշակերտ-
ները պէտք է ժողովրդեց հեռանան ու դասումը
կանգնեն:—Միջին և բարձր դասի մարդեկ թատ-
րոն են յաճախում:—

բ.—Գետի ափ, ձեռքի ափ:

I. ա.—Ծաղկաւ է տ, հոտաւէտ, պտղաւէտ, գինաւէտ, ար-
դիւնաւէտ, օգտաւէտ:

բ.—Ճռուողել—Ճռուողեւն, մայել—մայեն. մռնչալ—
մռնչեն, գոշել—գոշեն, թնդալ—թնդեն, զնչել—
զնչեն, կարկածել—կարկածեն, խոխոջալ—խոխոջեն,
շառաչել—շառաչեն, ոստնուլ—ոստեն:

II. ա.—Պետրոս, Պօղոս, Մարտիրոս, Փելպակոս, Մարկոս,
Քրիստոս. Էպիսկոպոս, Օգոստոս:

46. Հովոփի երգը

Ես Արարատ սուբք սարի վերալ
Արածեցնում եմ, Տէր իմ հօտերը,
Գիշեր ու ցերեկ Քո տեսոյն կարօտ
Քեզ սպասում են իմ ոչխար, իմ հօտ:
Արդեօք կը լինի, որ Քեզի մի օր
Տեսնեմ ու սիրեմ, որպէս գըթոտ հօր.
Արդեօք Դու մի օր կը լինի որ դաս,
Իմ վրանումը բարի հիւր դառնաս:
Երբ, Տէր, Դու մի օր ինձ մօտ հիւր կը դաս,
Եւ բարի ողջոյն սիրով ինձ կը տաս,
Ոտքերդ կը լրւանամ ջըրով պաղ, լըստակ,
Քեզ հանգիստ կը տամ իմ վըրանի տակ:
Որպէս Աբրահամ ծերունի հայրիկ,
Կը հիւր ասիրեմ Քեզ, Տէր իմ քաղցրիկ.

Քեզ համար կզոհեմ գառըն անարատ,
Կը խընկեմ բուրումն ամբողջ Արարատ:
Կաթ, սեր, կարագով կը կազմեմ սեղան,
Եւ ծաղկըներով կզարդարեմ նորան.
Քեզ կը խըմեցնեմ մեղրի օշարակ,
Կ'ածեմ իմ սրինդով երգ քաղցրանըւագ:

Ինձնից կհեռանաս, Տէր, Դու կոհ սըրտիւ,
«Դու բարեաւ մընաս, կ'ասես, Հեզ հովիւ».
Քեզ կ'առաջնորդեմ մինչ լերան կատար,
Եւ համբուրելով կը դնեմ ճանապարհ:

Բագաչ:

I. Հիւր ասիրել, սըտաշարժուել, գունաթափուել, չարախո-
սել, բարեխօս ել:

47. Երկրագործի երգ

Վարի գութան, դէ վարի,
Կոշտ գետինը դու փորի,
Եւ սուր խոփըդ անտըրտունջ
Բըլբակները թող ճըղի:
Վարի գութան, համարձակ,
Ներքին շերտը շուր ածա,
Մի ծուլանար բընաւին,
Գործից խոփըդ պըսպըղայ:
Իսկ դուք եղներ, քաշեցէք
Հողում թաղուած գութանին,
Որ նա կըտրի արմատը
Վընասակար փըշերին:

Եղներ, եղներ, ձեզ մտաղ,
Տարէք լուծը գութանի.
Մի վախենաք—ամառը
Կ'առնէք վարձը ձեր ուսի:
Անգին գութան, սուր գութան,
Հարթիր դաշտեր ու խոպան,
Քեզնով ապրի—շունչ առնի
Ամէն անդամ մարդկութեան:
Սրբն.

ՀԱԿԱՆԻՇ. ա.—Լուծը գնում են եղների պարանոցին:—Գետինը վարում են ուժ լուծ եղնեսով:—Ինձ յանձնել են այստեղ եկեղեցի շնել. չգտեմ, կարող եմ տանել այս ծանը լուծը:

բ.—Զեռքերն ու ոտքերը մարդուս անդամն են:—Ես բարեգործական ընկերութեան անդամ եմ:—Ամէն մարդ իւր հասարակութեան անդամն է:—Մեզնից իւրաքանչիւրը մարդկութեան անդամն է:

գ.—Սուր խոփ, սուր աչք, սուր լսելիք:

48. Զկների մասին

Հալ գիւղացին ձիների բոլոր տեսակներն էլ գործ է ածում ինչպէս թաժայ թաժայ, նոյնպէս և աղած. աղի մէջ տեղի լաւանում է իշխանը. բայց աշտարակցին նախապատում է կողակը, որի գլուխը աւելի լարգի է: Աղը դրած ձուկը աւելի լարմարւում է հաճարէ փլաւի հետ: Համարեա թէ բոլոր ձիները կարելի է արևի դէմ չորացնել: Բացի նորանից, որ ձիները խաշում են ու խորովում, նոցանից պատրաստում են նաև համեղ խաշու, համեմներով ու հաւիթով, պատրաստում են քութալ, որ ծեծած մսի գնդակ է:

Խելօք տանտիկինները իրանց տարեկան վառելու ձէթը հանում են ձկնից. նորա փորոտիքը հաւաքում են մի ամանի մէջ, վերան մի քիչ ջուր են ածում և դնում են թոնրի վերալ. գուրս տուած իւղը ժողովում են ու վառում: Երբեմն որսի ժամանակ ձկնորսին հանդիպում է մի հազուագիւտ ձուկ, որին ոսկե ձուկ կամ ձկան թագաւոր են ասում: Այդ ձուկը ոսկեձուկ կամ ձկան թագաւոր կոչուելու բոլոր արժանաւորութիւններն ունի. նորա փայլը խիստ դեղին է և Արևի ճառագալթների տակը անկարելի է լինում նայել նորա վերալ: Երբ նա հանդիպում է ձկնորսին, այս վերջինը երեք անդամ համբուրում է նորան ու բաց է թողում ջրի մէջ, երկար միջոց նորա ետևից ապշած նայելով: Ոսկէ ձկան մասին շատ առասպելական հրաշքներ են պատմում, և այդ է պատճառը, որ ձկնորսը նորան երկեղածութեամբ համբուրում է ու բաց թողում:

Եշ... Պ... էանց.

49. Ռաշի սովորութիւն

Հազիւ մեր հեւըերը իրար բոթբոթելով, համեցէք անելով, կռնից, թեկից քաշելով, տուն ընկան: Օրհնեալ է Առտուած, փառք լաւիտեանս չամիչ. սրտներն ընկաւ տեղը, մատներն ընկաւ եղը. ու կուզը կուզ անելով մտան տաք տեղը:

Արի հիմա գոմի գռանը կանգնենք ու նայենք մեր քեթիսուդաններին: Բայց ինչ անես, որ չեն թողում. որքան էլ օտար ու ալլազդի լինես, առանց քեզ բերանները պատառ չեն դնի. չգնաս՝ կը խուզիւն ու ամէն մարդ իւր տունը կը գնալ: Տարով միջըներումը մնաս, քեզ տնէտուն ման կ'ածեն, պատիւ կը տան: Մտնենք գոմը. տեսնենք համը, ուբանք փլաւը:

Մեր երկրումը առաջ ձեռքըները լուանում, սրբում
են (այն էլ նստած տեղն է ծառան՝ սրբիչն ուսին, ջրա-
մանն ու կոնքը ձեռքին՝ ամէն մէկի առաջը խոնարհում
կամ չոքում, ձեռքին ջուր ածում.) յետոյ են սփոռցը քա-
շում, աղամանը, պանրամանը, ձկնամանը մէջտեղը շարում
ապա հացը քաշում, ամենքի առաջին կիտում. երբեմն
կանաչի էլ է լինում: Դգալի, պատառաքաղի, դանակի ոտ-
քը դեռ մեր աշխարհը չէ մտել: Մատներն եղած տեղը
էնչ հարկաւոր է գանակ, պատառաքաղ: Կերակրներն էլ
մէկսինիով ներս են բերում ու մէկ սպասաւոր (նոքար)
փեշն ու թևերը վեր քաշած ուսին գցած՝ կուզրկուզ անե-
լով՝ երկուսի առաջին մէկ աման է դնում: Հացից յետոյ
էլի ջրով որ ձեռք ու բերան չողողեն, չլուանան, անկա-
րելի է: Դտակ վերցնել սեղանի վերալ, կամ գլուխ տալ՝
օրէնք չէ: Երկրի ծէսն այսպէս է:

Խ. Աբովյանց.

ՀԱԿԱՆԻՇ.—Ամէն հերի առաջը դրուած է իւր սպասը:
Գահանան տիրացուին ասաց. «Գրիգոր, սպաս-
ն եր ձաքըիր, դիր սեղանի վերալ»:—Այսօք
մենք լաւ սպաս ենք եփել:—Հայրը բարկանա-
լով որդու վերալ, ասաց. «Սպասիր. այս գիշեր ես
քո սպասը կ'եփեմ»,—մեր սպասաւորը
շատ հաւատարիմ մարդ է.

50. Հացթուխ Մրտոն

Աղամալ—մութը նոր էր կոխել: Ագաղաղը իւր ծուղ-
բուղուն դեռ առաջին անգամն էր կանչում: Հացթուխ

Մրտոն տեղիցը վեր կացաւ, մի երկու ափ ջուր երեսը սըրս-
կեց, սրբուցաւ ու խաչակնքուեցաւ: Յետոյ ձիթի կան-
թեղը պատից վեր առաւ և «Հայր մեր» ասելով փռն ա-
տն ի ց ցած իջաւ: Թեերը վեր քաշեց Մրտոն, ալիւրի տոպ-
րակը բաց արեց, մաղը պատիցը վեր բերեց և սկսեց ա-
լիւրը մաղել. մաղել և իւր սովորական երգը երգել:

Մաղը պատէն իջուցի, իջուցի,

Ալիւր, եկ. մաղեմ քեզի, ես քեզի.

Թըքըլը, փըթըլը, թըքըլը փըթըլը:

Մշու գաշտի ցորնի հատ—սկեհատ,

Ծնած, սընած նիւրակնի ջուրը առատ.

Թըքըլը, փըթըլը, թըքըլը, փըթըլը:

Գոչգոչանի (1) սառը ջըրովը շաղում,

Տաշտի դիր վերալ ես զիմ մուշտակ կը ձգեմ.

Օխխայ, օխխայ, փափուկ, փափուկ:

Խըմորը կ'աճի. հայ հոյ, տաշտ կը կոտրի,

Ծովը կ'ելնի չիւր, հայ, հոյ, ափ կը պատռի.

Փըշ-Փըշ-2, Փըշ-Փըշ-2, Փըշ-Փըշ-2:

Թիակ, մը ոտ թիակներդդ հասներ,

Տաս մատներէդ առագաստներ կախ տուր.

Շափ-շըշի, շափ-շըշի, շափ-շըշի:

Բասենի մեծ մեծ գերաններ կըչկըչան,

Սոմին, բուլուճ (2) զիմ փըրուիմէջ պար կուգան.

Փըժ-դըժ, փըս-տըս, Փըշ-Փուշ-շտ:

Կարմիր թըշիկ, սիրուն տըղալ, հայ, հայ,

Ցիսուն փարի հացը արի ինձմէն առ.

Առ, առ, բալամ, ինձմէն առ:

Յ. Գեղանյանց.

(1) Մեջ ջրվէժ է կըզըումի մօտ: (2) Հացի տեսակներ են:

ՀԱԿԱՆԻԾ.—Խմբորի տաշտ, գետի տաշտ: Խմբորի տաշտ: Ս
Ի ա.—Վարժատ ուն, դասատուն, աղօթատուն,
գինետուն, հացատուն, սեղանատուն, փռնա-
տուն, դեղատուն, մաքսատուն:
Բ.—Մսոտ, փշոտ, բըդոտ, մազոտ, աղտոտ,
ցելսոտ:—Վախկոտ, երկչոտ, գթոտ, խնամոտ:

51. Առաւօտեան աշխատանք

Դեռ նոր է զարթել ծերունի հայրը,
Գոմն է աւելում Սառի ժիր մայրը:
Յոդնած խաղերից, անուշ երազում
Քնած է եղբայրը, զարթել չէ ուզում:
Լուացուեց ծերունին դստեր բերած ջրով,
Ալեզարդ մօրուքը սանրեց սանըրով,
Նա խաչակընքեց դէմքն երեք անդամ,
Առաւ վերարկուն, դիմեց դէպի ժամ:
Կինը սովոր էր տան մէջ աղօթել,
Սկսեց նա յետոյ կովերը կըթել,
Փրիբադէզ կաթնի անուշհոտ շոգին
Բերկրանք էր բերում տանտիկնոջ սըրտին:
Բըռնել էր Սառան հորթեր նորածին,
Որ չը խանգարեն նոքա մօր գործին.
Զար էին նոքա և խիստ անըզգամ,
Ծըծում էին ամբողջ կաթը շատ անդամ:
Մէկին աւելի սկրում էր Սառան,
«Շուշանիկ» անուն դըրել են նորան,
Ներկել հինալով խալտերը ճերմակ
Եւ պարանոցէն կախել էր զանգակ:
Դեռ նոր նախիրը քըշում են գիւղից,
Խըրխինջ, բըռբըռոց են ամէն տեղից,

« բայտ մախի խառըն բառաչմունք, աղաղակ ճըշիւն
Կազմում են ուրախ ներդաշնակութիւն: Ա մ
մը կանաչին է տալիս ընդարձակ արօտ, ու մը մըմսուն
Դալար խոտերին անձկանօք կարօտ
Վազում են հօտեր, տալով ճոխ տրտինկը զայդեան
Առաջնորդում է նոցա հովուի սրինդ: Առան
Սառան տաւարը հասցրեց նախիրին,
Հանեց թոնիրից վառուցքը մոխրին,
Լըցրեց կըթոցում, տարաւ գուրս ածել,
Ծուլութեան վերալ նա չէր մըտածել: Ռաքքի.

ՆՈՅՆԱՆԻԾ.—Աշխատասէր, ջանասէր, ժրաշան, արիաշան:—
Դուստը, աղջեկ:—Ցնծութիւն, ինդութիւն, բերկ-
ըանք, ուրախութիւն:

ՀՕՏ.—Ուխարների հօտ, ձիաների ջոկ, եզների ան-
դեայ, խոզերի երածակ, այծերի հօռան,
գայլերի ու չների ոհմակ, թռչունների պար
կամ երամ, ագռաւների ջուեր, կուռնիների
տարմ, ձիների վտառ, աստղերի հոյլ,
ծաղկների բոյլ, խոտերի գէզ, յարդի շեղջ,
ջեւ շեզ:

52. Աստղերը՝ իբրև ժամանակի չափ:

Կուզես իմանալ թէ մեր նախնիքը գիշերն ինչպէս
էին չափում ժամանակը: Ամէն մի գիւղացի ընական աս-
տեղագ էտ էր, աստղերի համակարգութիւնները և փալուն
աստղերը մեր գիւղացուն ժամերի տեղ են ծառայել. դոցա
ամէն մէկին նա իւր կեանքից տուած անուններ է ստեղծել
ու գործ ածում: Կարելի է դու կեանքումդ չես էլ լսել—
«Բազումք», «Շամփուր-Կշուք», «Խաչ Աստղ», «Խեչանենց

Աստղ», «Լուսաստղ», «Թարմանագող», «Քարվան կտրող» և այլ այսպիսի անուններ. սոքա երկնալին գիշերուան-լուսաւորներն են. սոքա գիւղացու գիշերուան ժամացոյցն են: — «Տես Բազումքը դժւրս է եկել, կամ Խեչանենց Աստղը Շամփուր կշեռքին մօտեցել է, ոչխարներն արօտ քշենք», ասում է ու դուրս ուղարկում մի աւերակ վանքի միջից մի հովիւ իւր ընկերոջը:

Պ. Պառշևանց.

I. ա.—Աստեղագէտ, լեզուագէտ, հնարագէտ, ամենագէտ
(տգէտ):
բ.—Ժամացոյց, օրացոյց, տօնացոյց, լսողորացոյց:

53. Աստղ եր

Հայլիկ, ախ, ինչ գեղեցիկ է
Պարզ երկինքը գիշերով,
Ինչպէս սիրուն զարդարած է
Նա անհամար աստղերով:

Թէ ուղիղ է, որ ամէն մարդ
Մի աստղ ունի երկնքում,
Ինչի՞ ապա բոլոր աստղեր
Միատեսակ չեն փայլում:

Ինչի՞ համար միայն տեղ տեղ
Վառւում են լոյս աստեղներ,
Իսկ մեծ մասը այնպէս մանր են,
Ասես թէ են միայն կայծեր:

Ի՞նչ լաւ կլինէր, որ բոլորն էլ
Ալիքէս պայծառ փայլին,
Ինչպէս ահա, տես, ախ աստղը,
Որ վառւում է մեր գըլիխն:

Հա, իմ որդի, գեղեցիկ է
Պարզ երկինքը գիշերով
Նորան այդպէս զարդարել է
Աստուած կարող իւր ձեռքով:
Ճըշմարիտ է, ամէն մարդ էլ
Մի աստղ ունի երկնքում.
Եւ քեզ կ'ասեմ, ինչի՞ ողջ էլ
Միատեսակ չեն փայլում:
Ինչպէս ալստեղ, երկրի վերայ
Մարդիկ միմեանց չեն նըման.
Ինչի՞ գործով, գործով, վարք ու բարքով
Են միմեանցից զանազան,—

Ահա այդպէս էլ երկնքում
Բոլոր մարդկանց աստղերը
Հայելու պէս ցոյց են տալիս
Իրանց տիրոջ պատկերը:
Բայց մի կարծիք, որդեակ քաղցրիկ,
Որ ախ վառ վառ աստղերը,
Որոնք իրանց պայծառ լուսով
Զարդարում են երկիրը,
Հարուստներին են պատկանում
Կամ աշխարհիս մեծերին:
Չէ, ոսկին, իշխանութիւնն
Ալնտեղ ոչինչ չունին գին:

Շատ իշխան կայ, որի աստղը
Հազիւ հազ է պլսպըզում.
Աղքատ էլ կայ, որի աստղը
Գոհարի պէս է փայլում:
Ինչ մարդ ալստեղ զարդարած է
Առաքինի գործերով,
Նորա աստղն էլ միշտ վառած է
Գեղեցիկ, պայծառ լուսով:

Հայրիկ, ախ, տես այն գեղեցիկ
Մեծ աստղը թռաւ իւր տեղից,
Թռաւ ու հանգաւ և մի պայծառ
Գիծ թռղեց իւր ետևից:

Ասա, հայրիկ, այն ում աստղն էր.
Ափսոս, ինչք նա հանգաւ.
Տես, երևնքի այն մի կողմը
Ինչպէս լանկարծ մըթնեցաւ:

Ալո, մըդեակ, հազար ափսօս,
Որ պակասեց երկընքից
Այն վառ աստղը, որ գեղեցիկ
Լուս էր տալիս վերևից:

— Այս բոպէիս մի ազնիւ մարդ
Աստծուն տըւեց իւր հոգին.
Մի ազնիւ մարդ, որ միշտ անկեղծ
ծառայել է աշխարհին....
Գ. Բարինութարեանն.

54. Կուաւոտեան երդ շինականաց

Ա՛յ մարդ, այսօր շատ քըն եցար, նընջեցիր,
Առաւոտեան հով ժամանակն անցուցիր.
Արեգակը ծովի ծալրէն ծագեցաւ,
Զերմութիւնը ձորն ու դաշտը փոռուցաւ:

Ընկերներդ վաղ արտերը գընացին,
Ցորեն, գարի գերանդիով հընձեցին,
Խուրձ կապեցին, բարդ բարդեցին դաշտումը,
Նրստան հանգչիլ կաղնիների հովումը:
Ա՛յ մարդ, զեր կաց, սառը ջըրով լըւացուիր,
Գոտիդ կապէ, գերանդիով առ, դաշտ հասիր.

Քանի հով է, հունձդ արա արտումըդ,
Հունձդ ձըդ հընձէ, մի ծուլանար գործումըդ:
Հունձդըդ հընձէ, բարդըդ բարդէ, տուն արի,
Քանդըստացիր, երբ քո հունձդըդ կատարի.
Ինչ գերանդիով, կախէ պատին քո տանը,
Ես իրիկուան կը պատրաստեմ սեղանը:
Ա՛յ մարդ, հերիք, ինչ որ այսօր քընեցար,
Աչքըդ մէկ բաց, տես թէ որքան ուշացար.
Մեր գըրացին վաղ անց կացաւ կամուրջէն,
Վաղ լըւել է մեր գըրկիրը ձախնելէն:
Ենչ ես պառկել, ինչ ես քընել, սիրական,
Սիրական շողը հասաւ մեր գըրան,
Մի ծուլանար, ժամանակըդ խընալէ,
Այն պիտի մեզ բոլոր ձեմեռ կերակըլ:
Նուն ինձ ինձ անցուց ու անձ զրուս գանձուս—Քահան—Քալիկան.
Նուն սանից—Քնել, ննջել:
I.—ա.—գուծ—գուծ ել, երգ—երգել, պատ—պատել:
բ.—գեր—գըել, գիծ—գծել, վճռ—վճռել, կը-
նեք—կնքել.
գ.—շունձ—հնձել, տունկ—տնկել, սուրբ—սրբել,
շման խորայ զի շուրբ—շըել.
գ.—ցէն—շնել, մէր—սերել, տէր—տերել, վէճ—
վէճել.
ե.—լոյս—լուսանալ, լոյս—լուսալ, ծոյլ—ծուլանալ,
թոյլ—թուլանալ, զգոյլ—զգուշանալ, համ-
շել և անծայր շուրբ—համբուրել.
քան ս ոչ ոչ զի զ—ձաշիւ—հաշուել, կոփւ—կոռուել, հովիւ—հո-
նուսմ յէ ծուռաս վուել.
կ.—խօսել—խօսք, հնարել—հնարք, լուանալ—
տանջել—տանջանք,

55. Փողի նշանակութիւնը

«Փողն էնչ է, ասում է հայ գիւղացին. այսօր գրպանդ լցնես, վաղը պէտք է մատդ լստես: Փողը ժանդ է, ձեռքի աղտ է. այսօր կայ, վաղը՝ Աստուծով մխիթարուես: Մարդարն էլ է մեր գուռը գալիս, փողատէրն էլ: Օջախս լեքը լինի, գինին կարասներով շարած, ամբարը՝ հացով լիքը, կթան կովն ու գոմէշները, հոր թ ու ձագը տակըներին՝ գոմումը պահած, նժոյգ ձին ախոռումը կապած, գութանը գրանը լծած, մառանը մրգով, կախանով, տանձ ու խնձորով խլթխըլթալիս և մտնողին հոտը տեղնիտեղը բըռնելիս լինի. տանս լիութիւն, որդիքս ողջ առողջ լինեն. թող օրը հազար մարդ մտնի, հազար մարդ գուրս գայտ էնչ վնաս: Հայը Աստուծունն է, ես էլ հետը: Ո՞վ հասնի, թող ուտի: Որդիքս առողջ լինեն. ես ապրեմ: Ո՞վ ծոյլ է, թող նա տրտմի: Իւր տնկած ծառի տակը քնելը, իւր մեծացրած պտղի ուտելը՝ աշխարհք արժէ: Նո՞ր չեմ հագնի, հին կը հագնեմ. ձեռքս ովկ է բռնում. ովկ է գլուխս ջարդում. ես չեմ իմ գլխի տէրը:

Քաղաք մտնելիս այնպէս է թւում, որ կարծես աշխարհք սով է ընկել: Հացն ու ջուրն էլ որ փողով լինեն ծախելիս ու առնելիս, էլ ում գուռը գնաս, ումը ձեռքք պարզես: Շատ անդամ հարուստ մարդը իւր առաջնը կիտած ուռբլիքը այնպէս վախենալով է համարում, որ՝ կարծես հոգին հետը դուրս է գալիս. այնպէս է կարծում, թէ իւր դանձը կը թեսաւորուի ու առաջնեց կը թոչի: Մարդինքը պէտք է լաւութիւն անի, որ Աստուած էլ նորագործը լաջողէ: Էլի Աստուած օրհնէ մեր հողն ու մեր ջուրը: Էլի եթէ հոգի, հաւատ կայ՝ մեր մէջն է»:

Խ. Աբովյան.

I. ա.—«Մինչեւ չերը կը թոջե, հւանդի հոգին կը թոչէ: Առած:

ԶԱԳԵՐ.— Ոչխարի գառը, այծի ու լի կովի հորթ, ձիու քուռակ, մտ ու կ, շան ւակոտ, կորնակ, արջի քոթոթ, առիւծի կորեւն, կատուի ձագ, հաւե ձուտ, վառեկ, եղի աւանակ, նոզի խոզուկ, ուղտի կոզո, գայլի գայլակուն, եղնիկի եղնութ, բազէկ գաւազ:

56. Հողը փող, փողը հող.

Մեր գիւղացիք հպարտ էին: Հէնց որ մի օտարականի հետ խօսելիս լինեին, խսկոյն կասէին. «Սիրելիս, փողը հող ա, ամա մեր հողը փող ա»: Ինչ ասես, որ չէր ճարում այս գիւղում: Բնական անտառներն ու երկրի պարարտութիւնը առաջ տարածութիւնը տալիս էին գիւղացուն իւր սրտի ուղածը: Տարուան երեք եղանակում աշխատում—ձմբան դրամուտը տուն էին ածում. ծակ աման չէր մնում, ծակ տոպրակ—լցնում էին: Տանձ, մեղրատանձ, ծտատանձ խնձոր, ծաղկախնձոր, թթու խնձոր, գկեռ, սիզ, սալոր և սորա տեսակները. հոն, աճար, կաղին, կոծոխուր, գեղձ, սերկելի, ընկոյզ, բալ, կեռաս և այլ ալդպիսի պտուղները ուրիշ գիւղերում փողով էին ստացւում, այստեղ սալերով ժողովում, ոչ թէ միայն ալգիներից, ալլև անտարից, որտեղ ամէն օտար այցելու լիակատար իրաւունք ունէր՝ ինչ պտղից էլ որդքան կամենար՝ ժողովել: Այս գէպքում փող ասածդ ով բերան կը բերէր: Ուրիշ գիւղերում տամնհինդ տարուայ ընթացքում պէտք է ջրես մի թուփ, որ ծառ գառնայ, ապա քրտնած գաս, ստուերումը նստես հովանաս: Բայց այստեղ ծառատունկը մի կողմից աճում, միւս կողմից

պլողաբերում էր՝ բնութեան հովանաւութեան տակ: Զքա-
ռոր ընտանիք գրեթէ չկար ալս գիւղում, բացի որբերից:
Առ Արքայականց:

ՆՈՅԱՆԻՇ.—Հպակա, գոռող, ամքարստաւան, —Պարարտ, գէր.
—պանդուխտ, օտարական:

ՀԱԿԱՆԻՇ.—Տարին ունի չորս եղանակ: —Այսօր շատ լաւ
եղանակ է: —Այս երգի եղանակը շատ քաղ-
ցրս է: —Քանի եղանակով են եփում փլաւը:
I. ա. —Առատու էն, ներդաշնակուէն, հանդարտո-
ւէն, կուբօւէն:

57. Գիւղացին Հարուսան Բաղաքացունի
Դու քընում ես կակուղ անկողնում, դայ
իսկ ես փափուկ՝ փափուկ խոտերում: Ժայս
իսկ ես մուսա դու քեզ տեսնում ես հայելումէջ, նայնձ
իսկ ես ինձ՝ լըստակ լըճի մէջ: Խորսոր ժած
Դու բնակում ես նեղ պատերում,
իսկ ես՝ արձակ ազատ դաշտում:
Քեզ նըկարում է նըկարիչը,
իսկ ինձ՝ ճարտար բնութիւնը: Այս պահանջանակը
Քեզ շաբժում է ամէն քամի, քայլը շիրու
Ես կանգնած եմ անշարժելի: Հայութիւն
Քեզ ճառայում է քո սպասաւորը, առ քան
ինձ՝ հաւատարիմ՝ իմ քաջ շունը: Եթիւնը
Դու խը նայ իմ ամուսնութեանը: Ին քան
իսկ ես՝ վրճիտ ջուրն աղբեւրի:

Քո աչքը միշտ տեսնում խաւար,
իմը պայծառ և լուսաւոր:

ՀԱԿԱՆԻՇ.—Այս աղբեւրի ջուրը շատ համեղ է: —Ես հաս
տատ աղբեւրի ց լսեցի, որ եղբայրս եկել է: —
Մէր եկեղեցին մէծ եկամուտների աղբեւր-
ներ ունի:

58. Բարեկիրթ Հայ աղջիկ.

Վարդի պէս ծաղկել, մանիշակի պէս մեծացել էր: Դեռ
նորա ոտքը քարի չէր գիտել. գեռ մատը մէկ փուշ չէր մը-
տել: Նորա ընկեր աղջկերքը գոներին ու տանիքներին
էին ման գալիս. իսկ նա ծունկը մօր ծնկանը կպցրած, կամ
կար էր անում, կամ քարգահ. կամ իրանց տանն ու դը-
ռանն էր նայում, կամ իրանց տաւարին: Թուչունը գլխի
վերայովը թուչելիս, կարմրատակած, շունչը կտրած, լեղա-
պատառ տուն էր ընկում, որ իւր ստուերն անդամ մէկ ոք-
մին չտեսնի: Մօր մէկ մատումը փուշ եղած ժամանակը
կամ մէկ տեղը ցաւելիս, ուզում էր՝ հոգին հանի, իրան
տակ. էլ քար, էլ խոտ չէր մնում, որ նա վերան չչոքէր
ու Աստծու ողորմութիւնը չխնդրէր: Աղքատ տեսնելիս, բե-
րանի պատառը, հանում, իրան էր տալիս, որ նորան օրհնի,
նոցա արևշատութիւն մաղթի: Ագին էլ այն ժամանակն
էր գնում, որ մութը գետինն առած, ոտքը քաշուած, խա-
ղաղուած էր լինում: Կարծես ծաղկներն էլ նորա ոտնա-
ձայնը լսելիս ուրախանում, ցնծում, բացւում, վչչում էին:
Թուչուններն էլ նորա երեսը տեսնելիս, համարեա, նոր հո-
գի էին ստանում, գլխըները թերների տակիցը բարձրա-
ցընում, ճիխում, ճչում, ծլվըլում, թևերին խփում, ծափ էին
տալիս:

Խ. Աբովյան.

ՀԱԿԱՆԻՇ. — Մարդու գլուխ, սարել գլուխ, գաւազանի
գլուխ, քորոցի գլուխ, վլաւել գլուխ:
Մի գլուխ շաքար, հարիւր գլուխ ոչխար, հինգ
գլուխ սոխ, գրքի առաջին գլուխը. գլուխ վար-
պետ, գլուխ գինի:
Քաղաքագլուխ, պարագլուխ, տարեգլուխ, ամ-
սագլուխ, դըսամագլուխ: — Կաթողիկոսը մեր հո-
գեոր գլուխն է:

Այնքան պէտք է աշխատենք, որ այս գործը
գլուխ հանենք (լաւ վերջացնենք).—Ո՞մանք
գլուխ բառձրացին (ընդդիմացան) այս
կարդադբութեան դէմ:

59. Բարեկերթ հայ տղայ.

Ա. զասի ջան՝ գլխիդ զուրբան՝
Դու ես մեր թագն ու պարծանքը:
Աշխարհքս որ բոլոր ման գան,
Ով կը լի հատդ, զու մեր կեանքը:
Գլխովդ միշտ պըտիտ կը գանք,
Ո՛ռ մեր հոգին, դու մեր հրեշտակ.
Թէ թաղես էլ մեզ՝ ձէն կը տանք,
Էլ քեզ կ'օրհնենք, քեզ զուրբան գնանք:
Երկընքին դու լիս ես տալիս,
Ծաղկըներին հոտ, համ, հոգի.
Դաշտ, սար ու ձոր քեզ տեսնելիս,
Գլուխ վէր բերում քո առաջի:

Ճեշտ, գունդ—գունտ, լսեղել—լսեղտել, սեպհական—սեփական, օրօրոց—օրօրոց, ածառանոց—ածառանոց, աժխոյժ—աշխոյժ, աստիճան—աշտիճան, կաթսաւ:—կատսաւ, աքաղաղ—աքաղաղ:

60. այ Կտրիճ

Արամը հեծած էր մի վեշապանման ձի, որ թռչում էր երկնքի ու երկրի մէջ և ահագին ասպարէզը մի ակնթարթում էր սլանում: Զին գիշերուայ պէս սև էր և պնչերը մի զոյտ հնոց էին: Նորա բոլոր սարքը մի պարզ սանձ էր, ահագին երկաթ բերանում, և մէջքին մի մաքուր թաղիք, գոտեպինդ կապուած. թաւ բաշն ու երկայն ագին սրսուռ սանրուած և սև սաթի պէս փալուն:

Ինքը Արամը օրինաւոր փաղաղուած, լմուած, քերուած ու կոկուած գոմշենին, հետևաբար բամբակի պէս կակուղ՝ իբրև կապայ մինչեւ բարձերի վերայ երկայն հագած, մաշկեայ սեղմ սոնապաններ և շիկամորիթ փափուկ ոտնամաններ,—այդ բոլորը ոտքերի, սրունքների ու բարձերի վերայ մարմնի ձեւերին հետևելով պատշաճապէս յարմարեցրած: Քաջի պարանոցը մերկ էր, մերկ նաև ճակատը, և գոռողիկ երկայն մազերը, շագանակագուն, դէպի ականջների ետևը սանրուած և ուսերի վերայ ծփուն: Կերպարանքը վեհ ու վսեմ, ինչպէս ամպերի մէջ գիզացած և անդնդի վերայ կախ նայող ժայռի տեսարան:

Երիտասարդ Արամը հաստ մականի ծալը աջ բարձի վերայ զետեղած և հզօր ձեռքով նորա մէջտեղից բռնած ու գլուխը կողմնակի փոքր ինչ դէպի այդ ձեռքը լեցուած և պարանոցը աջից դէպի ձախ թեթեակի ոլորած և պինչը քիչ հողմին տալով. իսկ սանձի փոկերը բռումը ժողովող ձախ ձեռքը մատների միջին կոճիկներով ձախ բարձի վերայ հանգըտացրած: Արամը ալդպէս, լայն ու շիտակ թիկունքով,

բերանի երկաթը ծամող փրփրերախ Սկի վերալ նստած, մի հրաշք էր, մի կախարդութիւն էր... Ու նույն պատճենը այս պատճենի մեջ առանձնահատ Ա. Եղիշեան.

61. Արտաւազդ

(Առասպել)

Լոյսը շողաց, ծագեց արև Թուխ թուխ ամպերի միջից. Միջուն անցու Մի ձիաւոր անցաւ շուտով զգծեծա յօն Սրարատալ կամուրջից:

Դինայ գետի ափերի մօտ Սև նըժողը վազում էր, Նա վազում էր որպէս սև ծուխ, Մըտքից արագ՝ թթռչում էր:

Ուսորդական իւր շըները Թափառում են սար ու ձոր, Հոտ քաշելով փընտռում են էրէ, թթռուուն նորսնոր:

Թըփի միջից յանկարծակի Վազեց կինջը սոսկալի, Սոսկալի էր ժանիքները, Աչքերը վառ, կրակով լի:

Տեսաւ նորան Արտաւազդը, Վերայ հասաւ ձիւնթաց, Նետեց նետը, վալրի կինջը Ահեղ ձայնով որոտաց: Օդը մըթնեց, փոշին պատեց, Բարձրացրաւ մի թռնդ մըրթիկ,

Նետեց նետը, վայրի կինջը
Ահեղ ձայնով որոտաց:

Օդը մըթնեց, փոշին պատեց,
Բարձրացաւ մի թունդ մըրըկ,

Եւ անդունդը խոր լատակից
Գոռաց ձայնով յոլժ սաստիկ:

Նորա առջև բաց է լինում
Լայնաբերան մի վեհ—փոս,
Ուր որսորդը իւր ձիու հետ
Ներս գլուրուեցաւ դիւրահոս:

Կորաւ արին՝ Արտաւազդը,
Կորաւ խորին անգրնդում,
Հօր անէծքը նորան պատժեց,
Որին նա շատ էր ատում:

Իսկ քաջքերը Մեծ Մասիսի
Դարբնեցին շէկ երկաթը,
Յափը տակած՝ Ալարատի
Տարան նորան՝ գագաթը:

Այնտեղ գըրին խոր ալրի մէջ,
Զեռքն ու ստքը շըզմայած,
Ու Արտաւազդ մինչ լաւիտեան
Մընակ այնտեղ բանտարկուած:

Զը հեռացան Արտաւազդից
Իւր շները հաւատարիմ,
Զոյք շըները որսորդական
Մնացին նորան մրտերիմ:

Նոքա այնտեղ ամբողջ տարին
Կրծոտում են հաստ շրդիթան,

Կըրծոտում են, որ որսորդին
Տան Հրնար ազատութեան:

Եւ մաշլում է ծանրը շըղթան,
Նա մաշլում է օրէցօր,

Փոքը է մընում, ող կորցընի
Զօրութիւնը իւ հառօք:

Հալոց երկրի դարբինները

Եթե առաջ կատարվի, անգամ ծանըը մուրճը

Հարկում են իրանց սալին

Նոյն ըռպէին ծանրանում են
Առաջակա առաջակա

Յ. Ա. Խաչատրյան, Հ. Վ. Մանուկյան
Ու չափատուի, չը կար-
գածեմ: Ճառապահութեան

62. **Թիրիտ** ու Խըմբը պահպան

Զատիկ կիւրակէ օրը, ճաշը որ թեքուեց, Աշտարակ
գիւղի ամուրի երիտասարդները գնացին հաւաքուե-
ցան Կաւահանքի գզումը՝ ջերիտ խաղալու։ Ո՞վ մի քիչ
շնորհք ունի, ում կռնումը ոյժ կալ, պէտք է բանեցնի.
Ճիաները թամքել են, մի մի ջիրիտ ձեռքբերնին բռնել, չու-
խաների կամ կապաների փեշերը գրպաններովը հանել, թևե-
րը ուսներին կապել, կարմիր զանաւուզի դոշլուզը զառ
բաւթով կարած կապել կրծքերին, ձիու վերալ այնպէս սար
քով նստել են, որ կ'ասես ամէն մէկը մի խանի որդի լինի.
մենակ մի բանի հոգս են քաշում. ալն է թէ ով պէտք է
քաջ դուրս դալ:

Սօսը այնպիսի օրը որ իւր շնորհքը ցոլց չտայ, ել ինչին է պէտք. վաղուց պատրաստուել շինուել, ջիրիտը ձեռքին ձիու վերալ նստած էր։ Փողն ու թմբուկը նշան տուեց Ջիրիտին (ձիարշաւի եղանակը) ածելու և Սօսը ընկաւ այս հրապարակի մէջը, երկու անգամ ձին այս ու այն

կողմը քշեց, տաքացրեց ու ջիրիտը ձեռքին չարխի պէս պտուտ տալով ընկաւ իւր թշնամիներից մէկի հետ, ու իւր ծիրանի փայտից չարխաքաշ ջիրիտը որպէս նետի պէս չգցեց, նորա միջքումը ալնպէտ կպցրեց, որ այն լաղթանդամ երիտասարդը 22մեց ու գլխի վերայ գետնին փուռեց. ձին էլ փախաւ: Սօսը, ուղիղ է պողպատի պէս պինդ սիրտ ունէր, սակայն գութիւն ունէր. հէնց որ տեսաւ երիտասարդին գունաթափուած գետնին փառւած, ուրախանալու փոխանակ իւր արածը զզջաց. նոյն բոպէին իջաւ ձիուցը, երիտասարդին գըկեց տարաւ կանանց մէջը, որ ջուր բերեն խմեցնեն, սիրտը կանգնի: Ամէն աչք էլ Սօսի վերայ մնաց. մէր ու մանուկ նորան էին նայում. բոլոր երիտասարդների խօսելու առարկան դարձաւ Սօսը. կէս ժամից աւելի ձիու վերայ նստած՝ հրապարակի մէջտեղը, ջիրիտը երկինքը գցելով ու բռնելով կանգնել էր ու կանչում, որ իւր ետևիցը գան, գցեն. բայց ոչ ոք սիրտ չէր անում նորան մօտենալ, նորա հետ հրապարակ դուրս դալ:

Պ. Պառշետոց:

Ա. ար.—Պառշտ գալ, ման գալ, պար գալ, կուճ գալ, շուր գալ:—Իմ ցանած բողիք ու ուրս է եկել:—Քո Խօսելն ինձ շատ է ուրս գալ իս:—Այս գլխարկը քեզ չարմար է գալիս (սազ գալ):—Իմ եղբօրեց մենամակ եկաւ:—Ճաշից յետոյ անձրե կը գայ:—Ես գրաւ կը գամ, որ գու կէս ժամում մի երես չես կարող գրել:—Այս հացը ենկու գրուանքա եկաւ:—Իմ եփած միսը շատ աղիէ եկել:—Խմոր եկել է:

63. Պիրիդ գցող Աղասին.

Բուն Բարեկենդանի օրերն էին: Արեգակն եկել՝ երկընքի մէջտեղը բռնել էր, օրուայ փուշը մի քիչ կոտրուել, տաքացել էր: Սար ու ձոր արծաթի պէս փայտում փալվում էին: Թանաքեռ գիւղում գիւղացիք մէծ ուրախութեան մէջ էին: Ո՞րը ձեռնաբռնուկ էին արել, պար գալիս, ո՞րը բոլորիշուրջ նստել զուարձանում էին, ո՞րը երգում էր, ո՞րը ձայն պահում: Այստեղ փողն էր փչում, այնտեղ ճժալախտի էին խաղում, միւս տեղը ըմբիշներն էին մենամարտում:

Աղասին էլ՝ քէֆն արել պըճել՝ իւր խումբը ետևից գցած՝ եկաւ մէկ տասը ձիաւորով գիւղի միջովն անց կակացաւ, որ գնալ կալերի գզումը, ջրադացների մօտ՝ իւր շնորհքը ցոյց տայ, ջիրիդ խաղայ, որովհետեւ գիւղամիջումը այնպիսի հարթ տեղ չկալ: Կարծես մի թագաւորի որդի է գալիս: Զիու ականջը մտած՝ այնպէս էր քշում, կրակին տալիս՝ որ կարծես թեւաւոր թռչուն լինէր: Նատ անգամ ջերիդը հեռու տեղից շպրտում, ձին չափ էր գցում, ու գետնիցը ծուլ լինելիս ձիու վերալից բըռնում էր, կրկին գցում: Նատ անգամ հէնց ուղիղ շպրտում էր, ու կրակի պէս ետևիցը հասնում, բռնում, կրկին ծուլ անում: Գետնին վայր ընկած տեղիցն էլ՝ այնպէս էր թամքի միջիցը կուանում, բարձրացնում, որ ջերիդն առաջին գողում էր. ընկերի վերալ էլ որ երեմն երեմն ջերիդ չէր գցնւմ, այնպէս էր ձին չափ գցում: Աչք պէտք է լինէր, որ նորա կտրճութիւնը, տղամարդութիւնը, շնորհքը տեսնէր ու զարմանար. «Ճանմա սան, ջանմ: Աղասի, մալրդ մէկ հատ է բերել քեզնից. հազար տարի անց կենայ, քեզ նման

մԵկն էլ չի ծնուի», ասում էին նայողներն ու խնդում,
ուրախանում, ծափ տալիս:

Խ. Աբովյան.

Ի. ա.—Հաց ու պանիր, տանձ ու խնձոր, չի՞ր ու չամիչ, սոխ ու
սխտոր, կաթն ու մածուն, մեղք ու կալագ:—Սաշ ու
ձոր, ծառ ու ծաղիկ, վարդ ու մեխակ, վուշ ու տա-
տասկ, արու և էգ, մայր ու ձագ, գառն ու ուլ, մարդ
ու կեն, ծեր ու մանուկ, հարս ու փեսայ:—Ճուն ու տեղ
բուրդ ու բամբակ, աչք ու յօնք, ձեռք ու ոտք:

բ.—Խօսք ու զբոյց, ուշք ու միտ, վարք ու բարք, սարք
ու կարգ, կարգ ու կանոն, թիւ ու համար, ահ ու գող
փառք ու պատիւ:

գ.—Մեծ ու պստիկ, հաստ ու բարակ, սև ու սպիտակ,
կանաչ կարմիր:

դ.—Տխուր տըտում, քաղցած ծարաւ, տմաւ ձմեռ,
գիշեր ցերեկ, ծանց ու բարակ:

ե.—Պօղոս Պետրոս, Յիսուս Քրիստոս:

64. Քաջի ձին:

Նժոյգիս լանջը, պոչնէ մետաքս.

Սմբակները քար ու երկաթ.

Թե ու թիկունքը առիւծի է, ճամաց լոյի միւ

Դեղին սրունքը ռոսկի պողպատ:

Նախշան ճակտիդ, ընձուակը քիդիդ

Քամին վլըչէ հովահարէ, որ նախաց ոչ սքա

Քթէդ, բերնէդ հանած փոխչդ զամաց պատր

Սար ու ձորեր թընդացնէ:

Ականջներդ ցից ցից կանես,

Աչքիդ բոցով դաշտեր կ'ալբես,

Վրինջ ու քալքիդ երբ զօր կ'անես

Գափ գրափով լեռներ ճեղքես:

Քրտինք կու տաս, քրտինք կ'առնես,
ծամբու կոշտերը կը թրջես.

Կեր իմ ալ ձիս, կուշտ գարի կեր,
Կեր որ ինձնից չը գանդատուես:

(Ժողովրդական) Յ. Գեղանեան:

ՆՈՅՆԱՆԻՇ.՝ Լանջ, կուրծք.

Լ.— Ջիու պոչ, առիւծի ձիտ, ձկան տուտ:

65. Մայր

Ես էլ վոքը ժամանակս մալր եմ ունեցել: Գիտէք՝
ինչ է նշանակում մալր ունենալ: Մալր ունէք դուք: Գի-
տէք ինչ է նշանակում երեխալ լինել. թոլլ, մերկ, թը-
շուառ, քաղցած ծարաւ, մենակ աշխարհումս: Եւ զգում
էք, որ ձեր մայրը ձեզ մօտ է, ձեր շուրջը. որ ման է գա-
լիս, երբ դուք ման էք գալիս. կանգնում է, երբ դուք
կանգնում էք. լալիս է, երբ դուք լալիս էք:

Ո՛չ, գեռ ոչ ոք չգիտէ, թէ՝ ինչ բան է կինը. նա մի
հրեշտակ է, որ նայում է ձեզ, որ սովորեցնում է ձեզ խօ-
սել, որ սովորեցնում է ձեզ ծիծաղել, որ ձեզ սովորեցնում
է սիրել, որ տաքացնում է ձեր մատները իւր ձեռքերում,
ձեր մարմինը՝ իւր ծնկներում, ձեր հոգին իւր սրտումը:
Որ ձեզ տալիս է իւր կաթը, երբ դուք փոքը էք, իւր հա-
ցը, երբ դուք մեծ էք և իւր կեանքը՝ յաւիտեան: Որին
դուք ասում էք «Մալրիկ» և, որ ձեզ ասում է Շնրդեակ»
մի այնպիսի քաղցը՝ ձախով, որ Աստուած էլ է ուրախա-
նում:

* * *

Ո՞վ աղօթք սովորցլեց քերնիս քնքուց,
Որ պաշտեմ Աստուած, լինեմ միշտ գգուշ,
Եւ խելքով շնորհքով կեանքս անց կացնեմ:

Մալրիկս:

Եւ կարող եմ ես մոռանալ քեզ, հոգիս,
Քեզ, որ սիրեցիր և ինձ հոգացիր,
Ու անչափ ցաւեր ոչինչ համարեցիր,

Մալրիկս:

Ո՛չ, այդպիսի բան մըտքովս չի անցնի,
Եւ դու, ով Աստուած, իմ արև պահէր,
Որ ես վարձատրեմ քո անչափ հոգսեր,

Մալրիկս:

Իսկ երբ կը դառնամ տըկարապառաւուկ,
Իմ հըզօր բազուկ քեզ կը լինի նեցուկ,
Եւ պէտք է սփոփեմ քո բոլոր ցաւերը,

Մալրիկս:

Եւսերբ որ տեսնեմ գըլուխդ ծըռի,
Ես պէտք է հըսկեմ մօտ քո սընարի,
Եւ սըրտիսախորքից պիտ' արցունք թափեմ,

Մալրիկս:

Յաջուն սիրողոյ իշ նորմ զըրաց Մալրիկս:

Յաջուն յմացմառզա ինչըրաց Մ. Մանուկեան.

I. ա.—Քնքաբար, բարեկամաբար, քաղցրաբար, երեսակար, սովորաբար, տարածադտաբար:
Բ.—Մուրացկանին հաց տալ—ի օսք տալ—խոստանալ, սիրոտ տալ—քաշալերել, շունչ տալ—կենդանացնել, ցաւ տալ—ցաւեցնել, հանգել տալ—կանչել, վերջ տալ—հանգստացնել, ձայն տալ—կանչել, վերջ տալ—վիրջացնել, ձեռք է տալիս—ձեռնոու է.
II. ա.—Զգայաբար, շնորհք տամ»—«Երես տան՝ աստառ կուղես»: Երես տալ:

II. ա.—Զգայաբար, կայաբան, վկայական, ներկայանալու գոյանալ, հուակատ:

բ.—Զգայուն, սկայուսակ, ծառայութեմ, քահանայութեմ, գոյութիմ:

գ.—(Ըզ)---Զգալ, զբաղութել, զրօսանք, զգոյշ, զմայլել:
(Զը)---Զմռուել, զննել, զտել, զրահ, զջջալ, զրկել:
(Զ)---Զաւակ, զանգակ, զոհել:

դ.—(Ըս)---Սկսել, սկսեր, ստանալ—ստեղծել, ստորագրել,
ստորակչա, ստուգել, ստրուկ, սքանչել, սթափուկ, ստանել, ստափուկ:
(Սը)---Սրել, սղոց, ստախօս:
(Ս)---Ստատիկ, սահել, սերուն, սէր, սուրբ:

68. Բառախաղ և Ծուտաժելուկ

Մի անգամ երեսունի չափ մանուկներ, Տից մինչ 15
տարեկան, ժողովուել էին մի տան պատի տակ, միմեանց
հրում էին և միմեանց վերալ ծիծաղում:

— Տօ, տղաւք, «Եկէք բառախաղ ասենք», ձայն տուեց
նոցանից մինը:

— Եկէք, եկէք, ձայն տուին միւսները:

Մէկը առաջարկեց. «Ասա՛ ցախաւելլ զցեմ մարաք»:
Միւսը պատասխանեց. «Ուտես կովի կարագ»:

Յաջողակ և շուտ պատասխանի վերալ մանուկներն
ուրախացան և իրեւ նշան գոհուսնակութեան, ամէն տեղից
կրկնեցին պատասխան տուողին. «Հայ ջան, հայ ջան»:

— Ասա՛ կոնք, առաջարկեց մի ուրիշը:

— Աչքիդ վերել յօնք, կրկնեց պատասխանը:

— Ասա՛ կանաչի:

— Գրողը քեզ կանչի:

— Հայ ջան, ձայն տուին շատերը, ծափ տուին ու ծիծաղեցան:

Բառախաղը երեխաների համար կենդանի զբաղմունք
գարձաւ, վասմուրոց ամենքը սկսեցին կարգով առաջարկութիւններ անել և լուծել առաջարկածը:

- Ասա՝ մէկ: քանութիւն առ պատրիարքութիւնը առ պատրիարքութիւնը
 — Երեսդ է շէկ, գլուխդ քաշեմ լէկ (մողթ):
 — Ասա՝ երկու:
 — Կերածդ է ձու: որ քարմար քառար (թ)
 — Ասա՝ երեք: ամսութիւն ամսութիւն (թ)
 — Կողքդ քերենք: արարա աշխարհա
 — Ասա՝ չորս:
 — Հաց կեր, գնա որս:
 — Ասա՝ հինգ:
 — Աչքդ մտնի քլինգ:
 — Ասա՝ վեց: 80
 — Մեծ նանը քեզ խտըտեց, գլխիդ ջուխտ բամբեց,
 ծվկոցդ վեր արեց:
 — Ասա՝ եօթը:
 — Առնես հօրդ բօթը, բերանդ թիու կոթը:
 — Հայ ասա՝ ութ:
 — Ուտես մի կողով թութ:
 — Ասա՝ տասը:
 — Դու ինքդ ես թարսը, ուտես թանէ ապասը, վատ
 մարդ է ձեր հարսը, վկայ է սուրբ Մասը:
 — Հայ ասա՝ հաց:
 — Բերանդ բաց, վազիր ջրաղաց:
 — Հայ ասա՝ բըինձ:
 Այս առաջարկութեանը ոչ ոք իսկոյն պատասխան չը
 գտաւ և ընդհանուր կարճ լուութիւնից լետոյ առաջարկողը,
 ինչպէս պահանջում է կարգը, նորից կըկնեց. «Հայ, ասա՝
 բըինձ»:
 — Մատաղ լինիս ինձ, պատասխանեց մինը և ամենքը
 ուրախ ուրախ ծիծաղեցան:
 — Հայ, ասա՝ պանիր:
 — Ոտքերդ հանիր, ճախրակը մանիր, ձեր տանը բանիր:
 — Հայ, ասա՝ երթանք ձեր տունը:

— Ուտենք մածունը, քանդենք ստի տունը, կրակ տանք
 սիւնը:

— Հայ, ասա՝ հաց էր:

— Դռները բաց էր, աչքերդ թաց էր, մարդու զուր
 ցած էր, մանուկ կը լացէր:

— Հայ, ասա՝ ձիւն կայ:

— Տներումը սիւն կայ, ճնճղուկի բոյն կայ, աչքերին
 քուն կայ:

Սյսպէս երկար ժամանակ մանուկները զուարճանում
 էին սուր առաջարկութիւններ անելով և պատասխաններ
 ստանալով: Բայց բառախաղը, որ սկզբումը սաստիկ գրաւել
 էր նոցա, փոքր առ փոքր թուլացաւ և մի ըոպէաչափ ամենքը
 լռեցին, կարծես ձանձրանալուց: Ընկերներից մէկի առա-
 ջարկութեամբ խաղի տեսակը փոխուեցաւ: Սկսուեցան շու-
 տասելուկներ:

— Տղէք, ով կարող է ձեզանից շուտ շուտ ասել չձուկ
 գցեմ, ձուկ կուլ տամ, մուկ գցեմ, ձուկ կուլ տամ: Նա-
 տերը սկսեցին կըկնել: Մանուկների կըկըչոցը երկինք էր
 հասնում, մանաւանդ, երբ շուտ ասելու ժամանակ ձուկ
 կուլ տալու փոխանակ մուկ էր կուլ տալիս ասողը:

Մէկն առաջարկեց կըկնել հետեւեալ պարբերութիւնը:

— Ուղն ելաւ ուռի ծառը, ուղի ձեռով ուռ ողորեց:

Միւսն առաջարկեց. «Տէր Կարապետենց տանձի ծա-
 ռին, երկու ծանը տանձ կայ ծէրին»:

Երբորդն ասաց. «Մեխովը թուչեմ՝ սեխ ուտեմ, ցե-
 խովը թուչեմ՝ սեխ ուտեմ»:

Գ. Յանշանիսեան.

զմառ թաղի, զմառ մազ ու ունան զմառ մի —
69. Օ ր օ ր

Նանիկ արա՝ մեծանաս,
Սլեռես՝ ծերանաս.
Եթ որ խելքիդ տէր դառնաս,
Պառաւ տատիդ չմոռանաս:

Տատը գլխովդ պըտուտ գալ,

Ի՞նչ ցաւ ունես՝ տատին գալ.

Երեսիս մի բուռը հոդ գրցես,
Իմ տէր ու տիրական բալայ:

Ի. աւ. — Մեծ տուն, մեծ մարդ, մեծ ձիւն, մեծ անձրեւ,
մեծ կարկուտ, մեծ պատիս, մեծ ամօթ, մեծ հա-
մարձակութիւն, մեծ սէր, մեծ պատիժ, մեծ գործ,
մեծ պաս, մեծ մալր:

բ. — Ծառը կար եւ. — Ճանապարհը կտրեց, խօսքը կտրեց,
խելքը կտրում է, անձը կտրեց. «Լեզուի կարածը
թուրը չի կտրեց»:

գ. — Նստել-կանգնել, գնալ-զալ, մտնել-դուրս գալ-բնել. զար-
թել, տանել-բերել, մօտենալ-հեռանալ, խօսել-
լուկ, խաղալ-պարապել, շնել-քանդել, սկսել-
վերջացնել, բաց անել-փակել, ատել-սիրել, տա-
քանալ-մսել, հանել-հագնել, դնել-վեր առնել,
կողցնել-գտնել, ծախել-գնել, ցանել-հնձել, մե-
ղաղը ել-պաշտպանել, օրհնել-անիծել, կռուիլ-
հաշուիլ, ուրախանալ-տրտմել, ծագել-մայր
մտնել, լաց լինել-ծիծաղել, ներշնչել-արտաշը-
շել:

70. Ա շ կ ըստամի
նորդան դի ու ուսչ զդանայախ մին

Թողեց վարուցանք, արօր և գութան,
Եւ պանդըխտութեան կըրեց գաւազան.
Դէպի հեռաւոր, դէպ՝ օտար աշխարհ
Տըլուր սըրտաբեկ ուղղեց ճանապարհ...

ԱՌ ԱՌ, Աստուած....» կոչեց, գնաց գիւղացին,

Զը նայեց կընոջ արտասուք-լացին.

Թողեց ընտանիք նօթի, կիսաշունչ,

Թողեց անխընամ, մերկ ու անտերունչ:

Երկար տարիներ նա թափառական

Ընդ ծով և ցամաք պըտաէր անսահման.

Երկըրէ երկիր շըրջէր գաղթ ի գաղթ,

Եւ յուսակըտուր որոնում էր բաղտ:

Եւ վերջ ի վերջոյ մի մեծ պանդոկում

Եղաւ նա համալ, բեռն էր շալակում.

Բեռն էր շալակում, որպէս մի գըրաստ,

Գործէր անասնոյ նա գործ չարաբաստ.

Լափչիքը հագած, փալանը մէջքին,

Մինչև կէս գիշեր քաղւում էր հոգին

Եւ նոյն փալանին գըլուխը դըրած,

Սառը գետնի վրայ քնում էր յոգնած:

Բայց և ալդ բաղտը ըլ տեսեց երկար.

Մի օր մի մեծ հակ տանում էր բազար,

Ծանը էր բեռը, ծանը ու ահագին,

Ոտքերը դողաց, աչքերը մըթնեց,

Յանկարծ գլորուեց իւր բեռան տակին...

Անշունչ, կիսամեռ վեր առան նորան

Եւ հիւանդանոց ընկերքը տարան:

Ծիծառը գարձաւ դէպ, իրանց բունը,

Կարգեց, նորոգեց աւերուած տունը.

Բայց մեր մըշակից դեռ չը կայ համբաւ,

Ընտանեաց վիշտը դառն էր, անբաւ:
Հին պարտատէրը շատ շատ էր տանջում,
Նորա կընոջից փող էր պահանջում:
Տանջուեց խեղճ կինը, տանջուեց անպալման,
Մանուկ հասակում, մաշուած, թառամած,
Անբախտ գրլուխը տարաւ գերեզման...:

Վայրաք բաժի պահանձ ու մարտամ ով Արքէ.
Ամիշայ-քառակուս ջնջի քիւու չը
Ամառանքի մեջու քիւառաց ըմբութ
Հաւաղման ու լիճն ևացոյն ըմբութ
Ամիշառիան ու զմանցատ զնից
Մանքան զնանցատ դասաց մ խօս քան
Երաք ու նարաք զնչցաց զնից մզցից
Խարաց ոչ նախուս զառացիառու ոչ
Նախորման ծնն ին լուցամի ու զնից ոչ
Նախորման ոչ ճանց ու ոնա ու ամ արց
Ասաղոք ին սերաց և առփայաց ոչ ճանց
Ասաղուուց նոր ու բանան իմնար
Ամիշ ջնի զնանցատ նարաք զնչցիք
Միքան ոչ նախուս զնից ոմք այսին
Նորոք զնանցատ մինայան մին ոչ
Նամքու ոչ նախուս բայի մանուք զնան
Զարից ոչ նախուս բայ ծնն ին ոչ ո՛ւ
Ամիքան ու դանձ զնուց ոչ զնուն
Զնինց ն զնանցատ պարոք զնանցատ
Ամիքան մանուք զնու զնանցատ նորման
Նորու մանուք զնի ունասիլ զնանցատ
Ամաղու զնանցից զնանքանի ո՛ւ
Զնանց բայի ամք անդար զնանցից
Զնանց նարու զնանցատ զնուուկ
Ամիքան բայ ու ամք զնանցն զնն ընաւ

Ապարի հայ գնանքը մույլը ով Ա—

Ա Մ Ե Ն Բ Վ Ե Պ Ե Ր

Հա գնադառան գնանքը մույլը ով Ա—
Չիւու ու նաք ցիւնայուսի զնն նուուի զն զնամբան
Ին գնանքը մույլը մանակ մանակ բանն
71. Երկու խօսակցութիւն

Գարնանալին պայծառ առաւօտ էր: Ես կանգնած էի
գիւղի խաչաձև ճանապարհի վերայ, որտեղից աջակողմեան
ճանապարհը դէպի ուսումնարանն է տանում: իսկ Ճախա-
կողմեան մեծ ճանապարհը՝ դէպի մարգագետինը: Ես այն-
տեղ տեսալ երկու երեխայ, որոնք ունեցան հետևեալ խօ-
սակցութիւնը: —

Բարի լուս, Արշակ:

Աստծու բարին, Բագրատ:

Ուր ես գնում:

Ուսումնարան:

Ե՛հ ուսումնարանումը վաս է. այնտեղ պէտք է նըս-
տես կարդաս: Բայց մէկ նալիք այն կանաչ մարգագետնին.
տես՝ ի՞նչ գեղեցիկ է: Արի գնանք խաղանք այնտեղ, Արշակ:

Երեկոյին կը խաղանք. այժմ ես գնում եմ սովորե-
լու: Մնաս բարով:

Լաւ, գնա. իսկ ես կը գնամ խաղալու: Մնաս բարով:
Քսան տարուց յետոյ ես կանգնած էի միւնուն գիւղում,
միւնուն ճանապարհի վերայ: Սաստիկ ցուըտ, ձմերտին օր
էր: Մի գունաթափ խեղճ մարդ, պատառուտած շորերով՝
բաղխում էր ուսումնարանի գուըր: Ուսուցիչը, որ մի ա-
ռողջակազմ մարդ էր, բաց արեց գուըր և ես լսեցի նոցա
մէջ հետևեալ խօսակցութիւնը:

Բարով, պարոն ուսուցիչ:

Բարով, սիրելի:

— Ա. իս, պարոն, խղճացէք ինձ վերաբ:

— Ի՞նչ էք կամենում:

— Գործ, պարոն: Նս կ'աւելեմ ձեր ուսումնարանի սե-
նեակները, կը վառեմ ձեր վառարանները. կամ մի ուրիշ
տեսակ ծառայութիւն կ'անեմ: Ընդունեցէք ինձ:

— Միթէ չէք կարող դորանից աւելի լաւ գործի կպչել:

— Ո՛չ, պարոն:

Դժ ճամփու աչ: Պօառա ասճար: միլամանդար
մամեց Որովհեակ ես ոչինչ չեմ սովորելու մնաշատ ջրադր
ի՞նչպէս է ձեր անունը: Յստումնուու զբար ցշաբանած
իմ անունը Բագրատ է:

— Ներս արի, Բագրատ, այսօր դուրսը վատ է, ուսում-
նարանումը լաւ է: Յոյս ունեցիր, որ այստեղ մի բան կը
սովորես:

Յետոյ երկուսն էլ ներս մտան և դուռը կրկին փա-
կուեցաւ:

: Առաջար ու զան:

: Առաջար ու զան:

Այս է զարդ բժումա: Է առի զեւսացանուու: Հիմա
ՆՈՅՆԱՆԻՇ.—Ուզել, կամենալ, ցանկանար:
Բ.—Ամրացաւ, մեծացաւ, հասկացաւ, փակու-
թացի մ, բժումա: Գլխացաւ, աչքացաւ, փորացաւ, կը ծ-
մախու և բացաւնելու: Համար ու մասնաւու:

Գ.—Ինչու որովհետեւ, այն պատճառով:

Որովհետեւ—Ուստի, այս պատճառով:

I. ա.—Փայտ տանել, լուր տանել—Հաղորդել, տանել
լոն ամք տանել—խնամել, չոք տանել—Հոգալ, լոել-
քը տանել—Հեացնել, կարծիք տանել—կասկածել,
իրզեց չամք տանել—Ճանճրացնել, ի խելամա:

II. ա.—Ենթացնել—Նեղութեան տիմանալ, ցաւեթ տանել—
ցաւեթ տանել—ցաւեթի դիմանալ:

72. Ստահակ որդին

Մի գիւղացի ունէր մի որդի Միքայէլ անունով: Նա
շատ ստահակ տղայ էր և ամենեւին ականջ չեր զնում հօր
խրաներին: Մի անգամ հայրը տարաւ նորան իրանց դրան
առաջեւն լնկած գերանը մօտ և ասաց. «Տես, Միքայէլ,
որքան դու ստահակութիւն անես, ես ալնքան բեկո պէտք
է ցցեմ այս գերանի վերայ. և որքան խելօք լինես, ալնքան
բեկո պէտք է հանեմ»:

Բայց Միքայէլը փոխանակ ուղղուելու աւելի շարունա-
կում էր իւր ստահակութիւնը, ալնպէս որ շուտով գերանը
բեկուներով լցուեցաւ: Անց կացաւ ժամանակ, և հայրը մի
անգամ որդուն խելօք տեսնելով մի բեկո հանեց գերանից:
Գորանից յետոյ որդին հետզհեաէ խելօքանում էր. հայրն էլ
հանում էր բեկուները:

Վերջապէս մի օր հայրը Միքայէլին ասաց.

Ուրախացիք, սիրելի որդեակ. ահա մի բեկո է մնա-
ցել, այն էլ հանում եմ: — Ասաց ու հանեց բեկոը: Բայց
Միքայէլը ուրախանալու փոխանակ՝ սկսեց լաց լինել:

— Ինչու ես լաց լինում, որդիս, հարցը հայրը. չէ որ
աւելի պէտք է ուրախանալու, որովհետեւ բոլոր բեկուները
հանուած են:

— Ո՛չ, հայրիկ, պատասխանեց օրդին. բեկոները հա-
նուել են, բայց նոցա տեղերը մնում են:

Ո. Մահարեան. Եղանակ ու մասնաւու ամենալավը ամառաւու
ու ամաշուր ամառաւու ամառաւու ամառաւու ամառաւու:

II. ա.—Միքայէլ, Ռափայէլ, Սամուէլ, Բէլ, Գնէլ, (Առաքէլ),
ու ամառաւու ամառաւու ամառաւու ամառաւու ամառաւու:
Ամառաւու ամառաւու ամառաւու ամառաւու ամառաւու:

* 73. Երկու ապտակ

Կոռանդնուպոլիս քաղաքում կար մի հարուստ մարդ՝
Յարութիւն Պեղճեան անունով, Սա մի կիւրակէ օրեկեղեցուց
դուրս գալով տուն էր վերադառնում:: Ճանապար.
Հին տեսաւ մի մուրաց կան. բարովեց նորան և իւր տուն
հրաւիրեց: Բայց ինքը առաջ անցնելով՝ շուտով տուն հա-
սաւ և ծառաներին պատուիրեց, որ նորան տուն բերեն:

Եթե ծերունի մուրացկանը մտաւ սենեակը, տան տէրը
ոտքի կանգնելով՝ համբուրեց նորա ձեռքը և իւր կողքին
նստեցնելով՝ ասաց.

—Հայրիկ, լիշում ես այն երկու ապտակները, որ երե-
սիս զարկեցիր:

Ծերունին որ մի նաւազար էր եղած, շուարեց և հա-
զիւ կարողացաւ այսպէս պատասխանել.

—Ի՞նչ ես ասում, պարոն. այդ ի՞նչ զրպարտութիւն
է, որ անում ես ինձ վերայ:

—Ո՞չ. զրպարտութիւն չէ արածս, պատասխանեց Պեղ-
ճեանը: Մանկութեանս ժամանակ շատ սէր ունենալով
ձկնորսութեան՝ ես ամէն կիւրակէ գալիս էի քո նաւը՝
ձուկ որսալու: Մի անգամ էլ, երկուշաբթի օր էր. շու-
կալ գնալ չուզեցի, և եկալ քո նաւը, որ ձուկ որսամ: Դու-
ինձ տեսնելով՝ ականջից բռնեցիր և երեսիս երկու ապտակ
հասցնելով՝ ասացիր. «Շուկալ գնա. այսօր գործի օր է»:
—Քո այդ խրատը այնպէս ազդեց ինձ, որ այն օրից ըսկը-
սած՝ ես պարապում էի իմ գործով և աշխատում էի: Եւ
եթէ ես այսօր հարուստ եմ, գորա պատճառը դու ես, ուս-
տի պարտական եմ քո երախտի քը ճանաչել և քեզ շնոր-
հակալութիւն անել:

Այս ասաց Պեղճեանը, հանեց քսանհինգ ոռոբլի, տուեց

ծերունուն և պատուիրեց նորան, որ ամէն ամիս գալ և
միւնոն գումարը ստանալ մինչև իւր (մուրացկանի) մահը:

Ո. Էլենչնեան.

I. ա. — Ուսումնական, հոգեստական, աշխարհական, պա-
ճառական, մուրացկան:

բ. — Վերադարձնալ, վերադարձնել, վերկանգնել, վերա-
նորոգել, վերաքննել:

II. ա. — Նաւազար, օրավար, արագավազ, հաստալիզ, քա-
ղաքավարել:

Ո. մի բառ չէ սկսում հետառով:

բ. — Երկուշաբթի, երեքշաբթի, չորեքշաբթի, հինգշաբթի,
ուրբաթ, շաբաթ:

ԱՐՀԵՍՏ ԵՒ ՊԱՇՏՈՆ

Մշակը բանում է ուրիշի համար և օրական վարձ է
ստանում: Հողագործը գետին է մշակում. հացթուխը
հաց է թխում. հիւսնը շինութեան փայտեղէնն է շի-
նում. ատաղագործը սեղան ու աթոռ է շինում. ակ-
նագործը թանկագին քարերի առուտուր է տնում. վա-
ճառականը ապրանք է գնում ու ծախում. ոսկերիչը
ոսկեղէն ու արծաթեղէն անօթներ է շինում. դարբինը
երկաթեղէն գործիքներ է շինում. որմնադիրը տան պա-
տերն է շինում. գերձակը հագուստներ է կարում. կօշ-
կակարը կօշիկ է կարում. խաղաղորդը կաշի է շինում.
պայտառը ձիաներ ու գոմեշներ է պայտում. գինեվա-
ճառը ոգելից ըմպելիքներ է վաճառում. գրավաճառը
գիրք է վաճառում:

Հովիւր ոչխարներ է արածեցնում. ջրաղացպանը
ցորեն է աղում. կառապանը կառք է շինում. բժիշկը
հիւանդութիւններ է բժշկում. հեղինակը գիրք է շա-
րադրում. ուսուցիչը մանուկներ է կրթում. խմբագիրը
լրագիր է հրատարակում:

Ա. Մահաբեան.

74. Աւագ սին մ74. Կեղծ բարեկամները և մոտեցեծ
դժուն (Ամայրագան) դայ աշխին խմառա զգանեաք միմայն

Մի ծերունի զգալով որ մահը մօտեցել է, կանչեց իւր
միակ որդուն, որ շատ շուալ կեանք էր անց կացնում, և
ասաց, լուսածութեա, մամույաձրո՞ւ, մայ ամառացի—ա.

—Որդի, ես լաւ զիտեմ, որ իմ մեռնելուց յետոյ դու
իմ բոլոր հարստութիւնը մի քանի օրում կը վատնես. ու
յետոյ պէտք է դռնէ դուռ ընկնես հաց մուրալու. Արի
ականջ դիր խրատիս. Երբ մի օր բոլոր ունեցածից զրկուես,
մտիր գոմը, պարանը ձգիր մեծ գերանի վերալով, կախուեր
ու խեղատիք, որ ցաւ երիցդ ազատուես:

Յիրաւի, հայրը երկու օրից յետոյ մեռաւ. Բայց նա դեռ
մի շաբաթ ուայ թալզուած էր, երբ որդին սկսեց ժողո-
վել իւր բոլոր բարեկամներին և նուագարանով ու երգով
անց էր կացնում եր օրը. Բարեկամներն էլ, որ փողի բա-
րեկամներ էին, հենց ալիք կուզէին. Եկան, լցուեցան
նորա տունը, շաբաթներով նստեցին, երբ ան ու խմեցին.
և երբ տեսան, որ տան տիրոջ բոլոր հարստութիւնը սպա-
ռուեցաւ, ոչնչացաւ, կամաց կամաց ամենքը իրանց տները
քաշուեցան, և այնպէս օտարացան նորանից, որ բարե տա-
լուց էլ հեռու էին փախչում։ Տա մշանածնա ա մի մասուն
իսկ տա բարեալտ ու թշշուտ որդին. թէ պէտ շատ
լաց եղաւ ու զղջաց իւր տրած անխելքութեան վերալ,
բայց արդէն ուշ էր, բանը բանից անց էր կացել. Ամբողջ
օրերով նա տուն չէր գնում, ալլ սար ու ձոր ընկած՝ թա-
փառում էր։

Վերջապէս, էլ չկարողանալով դիմանալ ալդ սկ օրե-
րին, նա մտածեց վերջ տալ իւր կեանքին; Նա մտարերեց
իւր հօր վերջին խրատը մտաւ իրանց գոմը, վեր առաւ մի
պարան և անց կացրեց հաստ գերանի վերալով. Պարանը
ձեռքին բուճած՝ նա անիծեց իւր օրը, օրհնեց հօր հոգին
ու երեսը խաչակնքեց. Բայց հենց որ մի փոքր ոլժ տուեց

պարանին, լանկարծ գերանի վերալոց մի փոքրիկ պարկ զը-
բընգալով վայր ընկաւ գետնին. Խսկուն բաց արեց պարկը և
բնչ տեսաւ. Անթիւ գեղին ու շոշապղուն ոսկիքու..

Հայ լուծած և նեմու զիյ ձուոս մասաց իջ. Սբուտաց.

ՀԱԿԱՆԻՇ. — Եկող շաբաթ շաբաթ ու տօն է, խմանքաբաց

ՆՈՅՆԱՆԻՇ. — Ազատել, փրկել. — ցաւ, վլշտ:

Ի. ա. — Գոնէ դուռ, պատէ պատ, կտրէ կտուր, տնէ տուն
զառաւայ զառ ծառէ ծառ, Քարէ քար, + օրէց օր ամքէ ամք,
զառ տարէց տարի:

բ. — Հաց ուտել, փող ուտել, ծեծ ուտել. ոյ ոտառար

Խոսքան գ. — Տ արաջտ, տարաֆամ, տարագնաց, տարափոխիկ:

դ. — Թէսէտ, թէսէտաց. Խոսքան չն զգմքէք արած
մատիդ զանա այսանի զգմուրաք սրա զգմքէք զն ուզն
նումա. Ցախոյաց զգմայոտ զգմայոտ ամբուն մատիդ չն

75. Ո՞ի հոգի երկու մարմնի մէջ. 75. Ո՞ի հոգի երկու մարմնի մէջ.

Ամբուն զգմայոտ զգմայոտ յունական և զանա զգմայոտ

Երուսաղէմը դեռ չշին ուտած մի մշակուած դաշտ

էր. և տաճարի տեղը պատկանում էր երկու եղբօր, որոն-
ցից մէկը ամուսնացած էր, միւսը՝ ամուրի. — Հնձի ժամա-
նակ նոքա իրանց խուրձերը կապեցին և երկու հաւասար

գէղ բարձրացնելով, թօղին, դաշտումը:

Գիշերը ամուրի եղբօրը մտածում էր. ա. 1

— Եղբալը կնոշ ու որդքերանց տէր է և նոցա պէտք
է կերակը. ուստի իրաւացի չէր լինի, որ նորա և իմ ու-
նեցածը հաւասար լինեն. Գնամ իմ բաժնից մի քանի խուրձ
վեր առնեմ և ծածուկ աւելացնեմ նորա բաժնի վերալ.
վերալը չի տեսնի և չի ընդդիմանալ ինձ. — Այս ասելով,

նա գնաց, իւր մտածածը կատարեց:

Նոյն գիշերը միւս եղբալը արթնանալով իւր կնոջն
ասաց.

Եղբայրս ինձնից փոքր է, և ամուսնացած չլինելով՝
ոչ ոք չունի, որ իրան օգնէ ու մխիթարէ. ուստի իրաւացի
չեր լինի, որ նորա և իմ ունեցածը հաւասար լինեն: Գնամ
իմ բաժնից մի քանի խուրձ վեր առնեմ և ծածուկ աւե-
լացնեմ նորա բաժնի վերայ. Եղբայրս չի տեսնի և չի
ընդդիմանալ ինձ:—Այս ասելով, նա էլ գնաց, իւր մտա-
ծածը կատարեց:

Հետեւեալ առաւոտը Եղբայրները դաշտը գնացին, և
որքան զարմացան, երբ տեսան, որ երկու դէզերը հաւասար
էին: Նոցանից ոչ մէկը չկարողացաւ իմանալ այս հրաշքի
պատճառը:

Միւս գիշերը դարձեալ նոյնպէս արին, և այսպիսով
նոցա դէզերը ոչ պակասում էին, ոչ՝ աւելանում: Վերջա-
պէս, մի գիշեր, այս գաղտնիքը իմանալու համար՝ երկուսն
էլ արթուն մնացին. և երբ խուրձերը շալակած՝ տանում
էին միմեանց դէզի վերալ գնելու, յանկարծ իրար տեսան:

Այս պատճառով մարդիկ օրհնեցին այս երկու Եղբայր-

ների դաշտը և Աստուծոյ տաճարը այնտեղ շինեցին:

*** *

ՆՈՅՆԱՆԻՇ-ՇԻՆԵԼ, Կառուցանել.—Ժշակել, հերկել.—Ճա-
ծուկ, գաղտուկ, անյատ.

I. ա.—Աւագ, միջնակ, կրտսեր.

Բ.—Աւագ եղբայր, աւագ քահանայ, աւագ ու-
սուցիչ, աւագ լուսան, աւագ պահան:
Աւագ (անուն), Աւագ շաբաթ:

76. Հին զրոյց

Շատ հին ժամանակ մի թագաւոր կար
Զօրեղ, իմաստուն և շատ էլ արդար:

Դա որ ծերացաւ, մօտեցաւ մահուան,
Չը գիտէր թէ ովկ կ'լաջորդէ իրան:
Թէպէտ նա ունէր տասներկու որդիի,
Բայց չեր իմանում, թէ որին ընտրի:
Մեծը ուժով էր, բայց անգութ ու չար,
Նորանից փոքրը թոյլ ու ցաւագար.

Երբորդը անհօգ ու խելքից պակաս,
Չորրորդը անմիտ, թէ անվնաս:
Այսպէս ոչ մէկը իւր սրտովը չեր,
Ոչ մէկն իւր հոգին, իւր խելքը չունէր:

Միւսն մի քիչ յոյս փոքրեկն էր տալիս,
Նա էլ հօրը մօտ շատ չէր գնում գալիս.
Այդ պատճառով էլ հալը չը գիտէր,
Թէ արդեօք նա ինչ շընորհքի տէր էր:

Բ.

Վերջապէս մի օր՝ տես ինչ հընարեց. . .
Իւր հաւատարիմ ծառալին կանչեց,
Թէ գընա մի լաւ ցախաւել քաղիր,
Երեք չորս տեղից պինդ ուռով կապիր:

Երբ որ ասածը ծառան կատարեց,
Բերեց ցախաւելն առջեւը դըրեց.
Նա կանչեց իւր մօտ բոլոր որդոցը
Եւ առաջարեց հընարած գործը:

«Սիրելիք, ասաց, ես ձեզ կանչել եմ,
Որ վերջին կամքը ամենքիդ յալտնեմ:
Ինչպէս տեսնում էք, ես ծերացել եմ,
Եւ բաւական է, որքան ապրել եմ:

Շուտով իմ նախնեաց ճանպովը կ'երթամ,
Նրանց պէս ես էլ սե հող կը դառնամ.

Բայց քանի ողջ եմ, շունչս բերնումըս,
Կ'ուզեմ ձեզ լայտնել՝ ինչ կայ մըտքումըս:

Ահա ձեր առջև մի նոր ցախաւել
Որ ես հէնց այսօր կապել եմ տըւել.
Ով որ ձեզանից կը կոտրէ սորան,
Իմ թագն ու գահը ես նորան կը տամ:
Դէհ, առաջ եկէք, ուժերդ փորձեցէք,
Տեսնեմ ձեզանից որբդ կը կոտրէք»:

Պ.

«Հայր, ես կը կոտրեմ», ասաց մեծ որդին,
Եւ վըստահութեամբ մօտեցաւ աւլին.
Վեցըրեց աւելը և ծունկը կալաւ,
Քաշեց, քաշքըշեց, ոչինչ չը եղաւ.

Շատ քըրտինք թափեց, շատ չարչարուեցաւ,
Դեղնեց, սըփըրթնեց, և յետ քաշուեցաւ:
Յետով երկըրդը եկաւ վեր առաւ,
Նա էլ իւր եղբօր դառն օրին հասաւ.

Երրորդն էլ եկաւ իւր ուժը փորձեց,
Բաւական տանջանք չորրորդն էլ կըրեց.
Միւսներն էլ իրանց բաղար փորձեցին,
Բայց ցախաւելը չի էլ ծրուեցին:

Ամենից վերջը փոքրը մօտեցաւ.
Եւ իւր հօր առջև տես ինչ խօսեցաւ:

Պ.

«Հայր, ես չեմ ուզում իմ ուժը փորձել,
Իմ եղբարց նըման ի զուր չարչարուել
Ես երեխալ չեմ, որ ձեռքըս մեկնեմ

Դէպի լուսինը, որ նորան բըռնեմ.

Զուրը կը խեղդէ, կրակը կ'ալրէ,
Ո'վ այս չը գիտէ, թող ինքը փորձէ:
Ես ուժ տեսնում եմ ամենալի բանում,
Թէ երկրիս վերալ և թէ երկրն քում:

Ա՛ռ մի բարակ ծեղ, մի մազ կամ մի թել,
Մեծ ուժ կը գտնես ամենքի մէջ էլ:
Շատ անգամ փոքրը յաղթում է մեծին,
Ինչպէս մոծակը գագան առիւծին:

Թէ փոքրիկ միջատ, թէ ուզտ ահագին,
Ամենքն էլ ուժից ուն բաժին ունին:
Կայ և խելքի ուժ, ինչպէս և սրտի,
Սչքի, ականջի, ձեռքի և ոտքի.

Ուսերն ու մէջքն էլ պակաս ուժով չեն,
Բայց գոքա թովլ են, թէ միացած չեն:
Ուժով չի լինի ոչ մի առարկալ,
Եթէ մասներում միութիւն չը կայ.

Մասներն իրար հետ, երբ սերտ կապ ունին,
Ալդպիսով միայն ուժով կը լինին:
Ալսպէս շատ անհատ երբ որ միանան,
Մեծ և չափազանց մեծ ուժ կը ստանան.

Մէջ լաւ օրինակ մըրջիմն ու մեղուն,
Թէ նոքա խըմբով ինչեր են անում.
Նոցա պէս եթէ մարզիկ միանան,
Լեռներ կը շըրջեն, եթէ կամենան:

Եւ ինչքան լրճեր, ինչքան ջըրանցքներ
Միացած ուժով կարող են շինել,
Եւ մեր թշնամուն ինչպէս կը յաղթենք,
Եթէ ամենքըս մէկ տեղ չը կռուենք:
Եթէ ես քո տեղը թագաւոր լինեմ,
Տես իմ թշնամուն ինչպէս կը յաղթեմ.—

Նորա միութեան կապը կը քանդեմ,
Ուժերն իրարից կը հեռացընեմ:
Յետոյ նախ մէկին և ապա միւսին,
Չոկ ջոկ ջարդելով կ'ընկճեմ ամենքին.
Իսկ իմ տէրութեան ցրուած ուժերը,
Խնչպէս ցախաւիր ճըկուն ճղները,

Ամուր կապերով կապած կը պահեմ.
Այս է քո միտքն էլ, ես ինչքան գիտեմ:
Բայց որ ասածս լաւ հասկացընեմ,
Տեսէք աւելլ ինչպէս կը կոտրեմ»:

Եւ այս ասելով՝ նա վեր է առնում
Աւլի կապերը քանդում, արձակում.
Ճըկուն ճղները մէկ մէկ վերցընում,
Ամենի առջև կտրատում ջարդում:

Ե.

«Սպրիս, իմ որդի, ասում է հայրը,
Քեզ արժանի է իմ թագն ու գահը:
Գըրկում է որդուն, ճակատին պաշում
Եւ թագն իւր ձեռքով գըլխին է դընում:
«Տեսէք, ասում է միւս եղբայրներին.
Դուք չը նախանձիք ձեր եղբօր փառքին.
Եթէ սորա հետ սերտ սիրով մընաք,
Աւելի մեծ ուժ և փառք կը ստանաք»:

Իսկ եթէ զատուիք և ջոկ լինիք,

Քանդուած աւլի պէս շուտ կը կոտրատուիք»:

Ղ. Աղայեանց.

ՆՈՅՆԱՆԻՇ. — Հաւասարիմ, մտերիմ:

II. ա. — Երկուրդ, երրորդ, չորրորդ. հինգ երրորդ...

ՀԱԿԱՆԻՇ. — Սմբատը օրենակելի տղայ է. ամենքու օրենակառանից: — Այս գրքից տպագրուած է 1200 օրինակ (Հատ):

77. Որդիական սէր

Թագաւորից հրաման դուրս եկաւ, որ ով մի որևէիցէ գողի կը մատնէ կառավարութեան ձեռքը, նորան մեծ վարձատրութիւն կը տան: — Մի այլի կին, որ ունէր երեք որդի, շատ թշուառ կեանք էր անց կացնում: Նորա որդիքը առանց իւր գիտութեան՝ խօսք տուին միմեանց, որ վիճակ ձգեն իրանց մէջ, և ումն ընկնի, նորան գող հրատարակեն: Նոքա կարծում էին, որ այս հնարքով կարող են իրանց մօրը պահել: Վիճակն ընկաւ կրտսեր եղբօրը: Նորան բռնեցին ու բանտարկել տուին. իսկ իրանք ստացան խոստացած պարգև:

Բայց շուտով նոքա խղճահարուեցան, գնացին, խրնդրեցին ու փող տուին բանտապահին, որ իրանց թոյլ տալ բանտը մտնելու: Բանտապահը համաձայն էց և նոքաներս մտան: Այստեղ նոքա սկսեցին լաց լինել. բայց չգիտէին, որ բանտապահը ամէն բան լսում է:

Եղբայրների դուրս գնալուց լետոյ նա ծածուկ գնաց մինչեւ նոցա տունը: Բայց որքան զարմացաւ, երբ տեսաւ, որ պառաւ մայրը սրտացաւութեամբ մի կողմը ձգեց իւր երկու որդիքերանց տուած փողը և լաց լինելով՝ ասաց. «Թող ես մեռնեմ քաղցածութիւնից. ես չեմ ուզում իմ որդուարիւնով կեանք գնել ինձ համար»:

Բանտապահը այս բանը լայտնեց գատաւորին. և եղբայրները պատմեցին նորան, թէ բանն ինչումն է: Բայց

երբ այս լուրը հասաւ թագաւորին, նաև կեղծ գողին ազատեց բանտից, և ցաւելով նոցա վերալ տարեկան ոռմիկ նշանակեց իւրաքանչիւր եղօրը:

* * *

ՆՈՅՆԱՆԻՇ. — Պարգև, ընծայ, նուէր: — Համբաւ, լուր:
ՀԱԿԱՆԻՇ. — Վ. Ե Ճ ա կ ձգելիս ինձ ասացին, որ Ես կը հարսուանամ և իմ թշուառ վեճակ ը կ'ուղղուի:
I. ա. — Հ ա մ ածային, համապատասխան, համեմատ,
համակարծիք, համանուն, համաքաղաքացի,
համացուեսու, համախօսական:

78. Մօր աչքերը

Մի երիտասարդ՝ փող վաստակելու համար ճանապարհութում էր: Նա անց կացաւ շատ քաղաքներ ու գիւղեր, որտեղ շատ բան էր տեսել ու շատ բանի վերալ զարմացել: Նա գեռ տաս տարեկան էր, երբ գուրս զնաց իրանց տնից: Օտար մարդկանց ընսաւորութիւնները և նոցա նիստ ու կացը տասն ամեալ ճանապարհութեան միջոցում նորան շատ էին փոխել: Նորա դէմքը սեացել էր, մօրուքը դուրս եկել. ինքն էլ այնպէս մեծացել ու փոխուել էր, որ դժուարութեամբ կարող էր ճանաչուիլ:

Վերջապէս նա վճռեց վերադառնալ իւր ծնողների մօտ, որովհետեւ շատ էր ցանկանում տեսնուիլ նոցա հետ: Փոշիով ծածկուած պարկը ուսին, գաւազանը ձեռքին՝ նա գնաց իւր հայրական գիւղը: «Տեսնենք, ո՞վ առաջ կը ճանաչէ ինձ, ասում էր նա ինքն իրան: Կարելի է, ոչ ոք էլ չճանաչի»: Այսպէս մտածելով՝ նա մօտեցաւ իրանց տանը:

Առաջին մարդը, որին նա հանդիպեց, իւր նախկին ուսուցիչն էր: Սա գեռ ես հեռուից տեսնելով անծանօթին՝ ձեռքը տարաւ գրպանը և փող էր որոնում, մտածե-

լով որ, կարելի է, ճանապարհորդը ողորմութիւն խնդրէ իրանից: Բայց երիտասարդը ողորմութիւն չխնդրեց, և ուսուցիչն էլ չճանաչեց նորան: Անց կացաւ իւր հօրաքրոջ տան առաջեկց. նորա պառաւ հօրաքուրը կանգնած էր դրան մօտ: Նա գլխարկը վեր առնելով՝ բարովեց նորան. բայց նա չճանաչեց: Երիտասարդը շարունակելով իւր ճանապարհը, տեսաւ որ մի մանկահաս աղջիկ դէպի իւր կողմն է գալիս, և ճանաչեց իսկոյն, որ նա իւր քոյրն է: «Սա կը փաթաթուի պարանոցով», ասաց երիտասարդն ինքն իրան և շտապեցրեց քայլերը: Բայց աղջիկը սառնասիրտ կերպով նալեց նորան, միմեանց բարովեցին ու հեռացան իրարից:

Վերջապէս նա հասաւ իրանց տուն: Մայրը պարտիզում կանաչեղէն էր քաղում: Նա լսեց, որ մեկը գալիս է և բարձրացաւ տեղից: Հենց որ նա տեսաւ ճանապարհորդի դէմքը, իսկոյն դէն ձգեց ձեռքի կանաչին և ընկաւ նորա պարանոցը, ասելով. «Մմբատ ջան, աչքիս լոլս». և անդադար փաթաթւում էր նորան ու համբուրում: Մօր սիրտն ու աչքերը իսկոյն ճանաչեցին որդուն:

* * *

ՆՈՅՆԱՆԻՇ. — Հանդիպել, պատահել:

I. ա. — Միամ ե ա յ, երկամեայ, տասնամեայ, հարիւրամիայ:

79. Հ ո վ ի ւ ր

Ժամանակով մի պարսից թագաւոր ճանապարհորդում էր իւր տէրութեան մէջ: Մի տաք օր, երեկոյեան դէմ, հասնելով մի անտառ, տեսաւ մի հովիւ, որ մի ծառի տակ նատած փջում էր իւր սրինգը: Դա մի համեստ ու վաելուչ դէմքով պատահի էր, անունը Աբդուլլահ: Թագաւորը մօ-

տեցաւ և յայտնեց նորան, որ ուզում է իրան ուսման տալ: դուլլահը ակամայ գնաց արքունիքը: Փոքը ժամանակից յետոյ ուսման մէջ այնչափ առաջ գնաց, որ ամենքին զարմանք էր պատճառում:

Թագաւորը մեծ պաշտօններ յանձնեց Աբգուլլահին և վերջապէս իւր գանձապետը շինեց: Այս ժամանակ նա շատ թշնամիներ ունեցաւ, որոնք սկսեցին հոր փորել նորան: Բայց ոչինչ չկարողացան անել: Երբ պարսից շահը մեռաւ, նորա տեղը նստեց իւր որդին: Այս թագաւորը քսան տարեկան էր ու անփորձ:

Աբգուլլահի թշնամիները յարմար առիթ գտան նորան ամբաստանելու թագաւորի առաջը: «Գանձապետ է, ասացին նորան, շատ հարուստ է. հօրդ թաղած գանձը կողոպտում է. ընտիր գոհարներ է գողացել. նորա տանը մի գաղտնի քարկիր սենեակ կայ, որ երեք փականք ունի. ամէն օր գնում է այդ սենեակը, փակում է և թաղած ոսկիները համարում»:

Նորատի գահակալը, որ դիւրահաւան էր, հաւատաց այս զբարտիչ խօսքերին. ուստի մի առաւօտ կանուխ, յանկարծ Աբգուլլահի տունը գնաց և նորան ասաց.

— Տնը ինձ քո գաղտնի սենեակի բանալիները. Բնչ գանձեր ունես նոցա մէջ:

Աբգուլլահը իսկոյն հասկացաւ որ իւր թշնամիները իրան զբարտել են, և ժպտալով բալանիները թագաւորին տուեց: Սենեակը բաց արին, և մէջը գտան մի հովուի մահակ, մի պարկ և մի սրինդ:

«Ահա, տես, Տէր իմ, ասաց Աբգուլլահը, սոքա իմ առաջին երջանիկ վիճակի նշաններն են: Այստեղ եմ պահել այդ մնացորդները. շատ անգամ գալիս էի տեսնելու, որպէս զի չմոռանամ այն խաղաղ օրերը, որ անց եմ կացրել իմ ոչխարների հետ: Ա՛ռ, յետ առ հօրդ բոլոր տուածները. բայց իմ հովուական զգեստս, մահակս ու սրինդս ինձ տուր»:

Նորատի շահի սիրտը շարժուեցաւ: Աբգուլլահի զըրպարտիչներին պատժեց և խօսք տուեց նորան որ աւելի բարձր պաշտօնների հասցնէ: Բայց Աբգուլլահը հանեց իւր ճոխ զգեստները, դէն ձգեց, իւր հովուական մահակն առաւ և թագաւորին մնաս բարեւ ասելով, գնաց դաշտերի ու անտառների մէջ խաղաղ կեանք անց կացրեց:

Մ. Մահմետինա:

80. Բարեխնամ թագաւորը
Պրուսիու թագաւոր Պրեգերիկոսը մի օր մի քանի անգամ զանգակ խփելուց յետոյ՝ տեսնելով որ ոչ ոք ներս չէ մտնում, դուրս է գնում տեսնում, որ իւր սենեկապանը մի աթոռի վերալ խորը քնած է: Մօտենում է նորան, որ արթնացնէ. բայց նորա գրալանից դուրս եկած մի թղթի ծալը տեսնելով՝ հետաքրքրութեամբ ուզում է նորա ինչ լինելը իմանալ: Այս պատճառով կամաց հանում է թուղթը և տեսնում է որ սենեկապանի մօրից ուղարկուած մի նամակ է: Մայրը չնորհակալ էր լինում զաւակից, որ իւր կարօտութեանը օգնելու համար՝ ստացած ամսականի կէսը իրան էր ուղարկում, և նամակը վերջացնում էր որդուն օրհնելով: Նամակը կարդալուց յետոյ թագաւորը առանց ձայն հանելու, իւր սենեակն է մտնում, ոսկով լի մի քսակ է վեր առնում և զգուշութեամբ նամակի հետ նորա գրալանն է գնում: Ապա սենեակն է վերադառնում, և զանգակը այնպէս սափտիկ է հնչեցնում, որ երթաւարդը քնից վեր ցատքելով՝ ներս է վագում:

— Քունդ անուշ, ասում է նորան թագաւորը:

Խեղճ սենեկապանը վախենալով՝ աշխատում է իրան արդարացնել, և իւր շփոթութեան մէջ յանկարծ ձեռքը

գրպանն է տանում, և մէջը մի քսակ շօշափելով՝ հանում է, և ոսկիները տեսնելով գունաթափւում է, թագաւորի ոտքերն է ընկնում, և առանց մի խօսք ասելու՝ սկսում է արտասուք թափել:

— Ահ, տէր իմ, պատասխանում է երիտասարդը. անշուշտ մի թշնամի ունիմ, որ իմ կորուստն է ցանկանում. որովհետեւ չգիտեմ ինչ է նշանակում այս գրպանիս մէջ գտած դրամս:

— Անհնգ եղիր, որդիս, պատասխանում է թագաւորը. Աստուած շատ անգամ իւր բարիքը քնած ժամանակներս է մեզ ուղարկում: Այդ քսակը մօրդ ուղարկիր, իմ կողմից էլ ողջունիր նորան և ասա, որ այսուհետեւ իրան և քեզ ես պէտք է խնամք տանեմ:

— Ա. ա. ու նց հացի, առանց ջրի, առանց գրքի, առանց խօսելու: Անհաց, անջուր, անգիր, անխօս:

81. Թե՛թե պակասութիւններ

Ամենեին մի ասի թէ՛սա մի թեթեւ պակասութիւններ կանամակով կանցնի. որովհետեւ թեթեւ պակասութիւնը կարող է մեծ պակասութիւն դառնալ:

Ա. տամի գերայ եղած սև բիծը ոչինչ է. բայց եթէ շնուռով տատամնաբութիւն ցոլց չտան, բոլոր տատամդ կը փշանայ:

Երկրագործի արտերին այնքան վնաս տուող կենդանիները ինչերն են. գղերն են. ոչ, այլ մորեխներն են, որ ուտում են հասկերը:

Ով կը կամենայ իւր օրը մթնեցնել մի ճանճի հետ, որ շարունակ բզ զում է իւր երեսին և չորս կողմը: Մինչ

անգամ առիւծը նորա բզզալուց կատաղում է: Քո թեթեւ պակասութիւնը այդ ճանճն է: Ինչո՞ւ չես քշում նորան:

Մի փտած տանձ ձգիր թարմ տանձերով լցրած կողովը. մի գիշերուայ մէջ բոլորն էլ կը փտեն: Մի կաթիլ ջուրը ոչինչ բան է. բայց կատաղի ծովը ջրի կաթիլներից է գոյացած:

Թեթեւ պակասութիւնը շուտ անցողական չէ: Փոքրիկ փուշը մեծ բան չէ. բայց երբ մտնում է առիւծի ոտքը, այդ ահարկու կենդանին էլ չէ կարողանում ման գալ. ինչպէս որ կօշկիդ մէջ ընկած աւազի հատիկը չէ թողնում որ հանգիստ ման գաս:

Ամենամեծ նաւն էլ կ'ընկլմուի, եթէ նորա կողքումը մի փոքր ծակ բացուի: Նատ թեթեւ պակասութիւն այն պատճառով է վտանգաւոր, որ փոքրիկ ու չնչին է երևում:

ՆՈՅՆԱԽԻԾ — Պակասութիւն, թերութիւն. պակաս, թերի, (թերահաւատ, թերակղզի, թերուաւում, թերպար)

— Ա. ա. կենդանու ատամ, սղոցի ատամ, սանրի արար, գեցում ըստամ, անիւթ ատամ:

ԿԵՆԴԱՆԵՐԻ ԼԵԶՈՒՆ

Կանամակունը հաջում է. քածը կազկանձում է. գալը ոռնում է. էշը զուռում է. ձին խրխնջում է. ոչխարը մայում է. կովը բառաչում է. փեղը գոչում է. խոզը խանչում է. արջը մըմուռում է. առիւծը մունչում է. եղնիկը խոր գում է. աղուէսը զօղանջում է. վագրը խռնչում է. ագռաւը գոգուռում է. արծիւը կը ուղնչում է. սագը ոնգում է. ագաղը երգում է. սիրամարդը ճշում է. հաւը կարկա-

չում է. սագը ոնդում է. օձը սուլում է. աղաւնին
մնչում է. տատրակը գուրգուրում է. թութակը խո-
սում է. ճնջուկը ճռուղում է. բուն աղաղա-
կում է. սոխակը գայլալում է. ճանճը բզզում է.
միան մարդն է, որ իւր միտքը յալտնում է խօսքով:

82. Ομρթեցնող ժամացոյց

Ես իմ սենեակում սւնեմ մի զարթեցնող ժամացոյց, որ
ամէն առաւօտ ժամի հնգին ալսպիսի աղմուկ է բարձրա-
ցընում, որ իսկոյն աչքերս բացւում են: Բայց մէկ առաւօտ,
երբ առաջին անգամ զարկեց, ես փոխանակ ակնողնից դուրս
գալու՝ ծուլացայ, շուր եկայ միւս կողքիս վերայ և կրկին
քնեցի: Աւաղ, հետեւեալ օրը ես՝ մինչ անգամ ժամացուցի
ձայնը չլսեցի. և մի քանի օրից յետոյ թէպէտ շատ էլ զար-
կեց ժամացոյցը, բայց ես չէի կարողանում զարթել:

Կարելի է՝ դուք զարթանում էք: Բայց կուզէք զար-
մացէք, կուզէք մէք զարմանալ. ես ճշմարիտ եմ ասում:
Որովհետեւ մի երկու անգամ բոշագրութիւն չդարձրի, ել
չէի կարողանում զարթել, երբ ժամացոյցը զարկում էր:

Մենք ամենքս ել ունինք մեր մէջ մի մի զարթեցնող
ժամացոյց: Այդ ժամացոյցը մէր խղճ մտանքն է: Խղճ-
մբտանքը մեզ զարթեցնում է, նա մեզ իմաց է անում, ինչ
որ պէտք է անենք և ինչ օր չպէտք է անենք: Բայց պէտք
է լսել և իսկոյն հնագանգել նորան: Եթէ մէկ անգամ
չլսենք նորան, միւս անգամ էլ չենք կարող լսել. և միշտ
կընկնենք մի սիալմունքից գէպի միւսը: Ահա մի օրինակ:

Մի երիտասարդ, Արմենակ անունով, առաջ միշտ ա-
կանջ էր դնում իւր խղճմտանքի ձայնին. բայց յետոյ փոքր

առ փոքր սկսեց շեղուկլ ուղիղ ճանապարհից: Փոքր բանե-
րում իւր խղճմտանքին չլսելը նա մեղք չէր համարում:
Խղճը նորան ասում էր. «Արմենակ, այդ վատ է. մի ա-
նի»: Բայց նա իզուր էր խօսում: Սովորելով մեղանչելը,
վերջապէս մի գիշեր նա մտաւ մի խանութ և այնտեղ փող
գողացաւ: Նորան բռնեցին, դատեցին և բանտարկեցին:

Ուրեմն բնչ պէտք է անել: Երկու բան: Ուշադրու-
թեամբ ականջ դնել խղճի ձայնին և իսկոյն հնագանդել
նորան:

ՆՈՅՆԱՆԻՇ. — Խղճ, Խղճմտանք:

83. Երջանիկ մարդը

Մի թագաւոր աստիկ հիւանդացաւ, և ժողովելով իւր
իմաստուն մարդկանց, խոստացաւ որ՝ ով Հնար կը
գտնի իրան բժշկելու, իւր թագաւորութեան կէսը նորան
կը առի: Իմաստուները սկսեցին առանձին առանձին մտածել
և ապա միասին խորհրդացել. բայց ոչ մի միջոց չէին գըտ-
նում: Յանկարծ նոցանից մէկն ասաց. «Եթէ գտնենք մի
երջանիկ մարդ, հանենք նորա շապիկը և հագնենք թա-
գաւորին, նա կ'առողջանալ»:

Այս բանի վերալ թագաւորը սաստիկ ուրախացաւ և
մարդիկ ուղարկեց մի երջանիկ մարդ գտնելու: Թագաւորի
խնդրակները երկար ժամանակ շրջեցան թագաւորութեան
մէջ, բայց երջանիկ մարդ չկարողացան գտնել: Գտած մարդ-
կանցից չգտնուեցաւ մի նպատակալարմար մարդ: Մէկը շատ
հարուստ էր, բայց առողջ չէր. միւսը քաջաւողջ էր, սակայն
աղքատ. երրորդը հարուստ էլ էր, առողջ էլ, բայց լաւ որ-
դեք չունէր. մի խօսքով ամէն մարդ մի բանից գանգատում
էր, ամէն մարդ մի բանից դժգոհ էր:

Մի անգամ կէս գիշերին, թագաւորի որդին անց է կենում մի խրճիթի մօտովը և լսում է. «Ե՞ն, փառք Աստուծոյ. աշխատեցի, կերայ, կշտացայ, հիմա կը պառկեմ կը քնեմ. էլ ի՞նչս է պակաս»: Թագաւորի որդին ուրախացաւ, որ վերջապէս գտաւ մի կատարեալ երջանիկ մարդ. հրամայեց որ հանեն նորա շապիկը և նորա փոխարէն հատուցանեն նորան ի՞նչ որ կամենայ: Սակայն, երբ մտան խրճիթը, տեսան, որ այն երջանիկ մարդը շապիկ էլ չունէր:

84. Ճգնաւորի Տացը

Մի քարայրում բնակում էին մի ճգնաւոր, իւր հաւատարիմ ծառան և պահապան ջունը: Տէր Աստուծը ուզեց փորձել այդ ճգնաւորի հաւատը, և մուրացկանի կերպարանք առնելով՝ կանգնեց նորա դրան առաջևը և հայ խնդրեց:

— Տնուր, ասաց ճգնաւորը ծառային, տնուր աղքատին իւր մասը:

— Տէր, ասաց ծառան, միայն մէկ հաց է մնացել. էլ ի՞նչ կը մնայ քեզ, ինձ ու մեր շանը: — Տնուր, ասաց ճգնաւորը, մի վախենար, Աստուծ կը հոգայ:

Ծառան առաւ դանակը, չափեց ու չորս հաւասար կը տոր քաֆանեց այն հացը. և մէկ կտարը մուրացկանին տալով՝ քրթմնջալով ու գժութեամբ ասաց:

— Մէկը քեզ, մէկն ինձ, մէկը ճգնաւորին, մէկն էլ մեր շանը:

Նատ չանցաւ և Տէրը աւելի թշուառ կերպով եկաւ հաց խնդրեց:

— Տնուր, ասաց ճգնաւորը, իմ կտորը. Աստուծ ողորմած է: — Ծառան տուեց:

Քիչ ժամանակից յետոյ աւելի սոված գէմքով եկաւ Տէրը ելքորդ անգամ և հաց խնդրեց:

— Տնուր, ասաց ճգնաւորը, տնուր քո մասը, Աստուծ ողորմած է:

Ծառան իւր մասն էլ տուեց:

Քիչ էլ անց կացաւ, և Տէրը կաղ, կոյր, մերկ ու ողորմելի մարդու կերպարանք առած՝ եկաւ չորքորդ անգամ և ողորմութիւն խնդրեց:

— Տնուր իրան շան համար պահած բաժինը, խեղճ է, ասաց ճգնաւորը. Աստուծ, որ ագռաւներին կերակրում է, մեզ համար էլ կը հոգայ: — Ծառան կատարեց հրամանը:

Մուրացկանը աներեւութացաւ: Ծառան դուրս գնաց և ի՞նչ տեսաւ: Չորս քարաւան էր գալիս՝ հացով, մրգով ու գինով բեռնաւորուած: Ծառան ուրախ ուրախ առաջ վագեց. նա ոչ ոքի չտեսաւ քարաւանների հետ. այլ իւրաքանչիւր քարաւանի մէջքին մի դրօշակ՝ տեսաւ, որոնց վերայ ոսկէ տառերով գրուած էր. «Նա, որ կերակրում է ագռաւներին, չորս քարաւան է ուղարկում ճգնաւորին, որ նրան այսօք չորս անգամ կերակրեց: Մէկը լինի ճգնաւորին, մէկը ծառային, մէկը շանը, իսկ չորրորդը թողմնայ Ուղարկողի աղքատ որդքերանցը»:

«Ն. և Հ. Ա.»

I. ա. — Դ ժողով, տ ժողով, դժբաղդ, դժողովն տղէտ, տղեղ, տհաս, տկար, տմարդ:

85. Աստուծ ամեն բան տեսնում է:

Մի մարդ, որ իւր օրը գողութիւնով էր անց կացնում, մի գիշեր իւր փոքը որդու հետ գնաց դրացու արագը՝ ցորենի խուրձեր գողանալու: Յանկանալով որ ամենքից ծածուկ լինի իւր տրածը՝ նա նայեց իւր չորս կողմը, որ իմանայ տեսնող կայ, թէ՝ ոչ: Երբ ոչ ոքի չտեսաւ, ուզում

Եր տհամ խուռձերը կապել. որ շալակէ: Այդ միջոցին սորա
փոքրիկ տղան զգուշացնելով հօրը՝ ասաց.
—Հայրիկ, մի տեղ մոռացար նայել:

Հայրը շտապով ցած դըեց ձեռքի կապը և հարցըեց.
— Ո՞րտեղ չեմ նալել:

Մանուկը ձեռքը բարձրացրեց դէպի երկինք և ասաց.
—Ահա, անտեղ մոռանար նախի:

Հայրը լսելով այս խօսքերը՝ թողեց իւր մտադրութիւնը իւր պահակ հետ առն մեջանակած:

Ե և որպէս համ առաք վարագարաւ:

b u p u u u 3

Գրել հետևեալ բառերը, պահպանելով տողադարձի կանոնները:

Բ.—Մատ—իտ, աթո—ռ, սեղ—ան, կ—աւելմ, երկ—ռ, փակ—
—ել, պատկ—եր; ծիս—եանց, Պե—տըռս, պատրա—ստ,
հանդ—արտ, կատ—ռ, մատն—եր, գիշ—եր, ցեր—եկ,
տա ծիս յա կ հանչ բեր

Գ.—Պատ—աս — խան, համ—ար—ձակ, ժամ—ա—գործ,
աստ—իճ—ան, աշ—ակ—երտ, առ—ար—կայ, եր—եւ—
այ, զաս—ատ—ուն, լուս—ամ—ուտ, հաս—ար—ակ, ժամ
—ան—ակ, Աս—տու—ած:

86. Կարեկցութիւն

Մի ուսուցիչ իւր աշակերտի հետ զբունում էր քաղաքից դուրս: Ճանապարհին նոքա նկատեցին մի զոյտ տրեխ, որ՝ ինչպէս երևում էր, պատկանում էր մօտիկ բանող գիւղացուն: Նա հանգստանալով իւր աշխատանքից՝ հանել էր տրեխները և ուզում էր ուտել իւր համեստ ճաշը:

Աշակերտն ասաց ուսուցչի

—Եկէք մի խաղ խաղանք սորա տիրոջ հետ։ Թագ-
լնենք նորա տրեխները, մենք էլ կանգնենք այս պարսպի
տևը, որ տեսնենք, թէ ո՞քան կը շփոթուի նա, եթե ո-
ոնի ու չգտնի իւր տրեխները։

— Ո՞չ, սիրելիս, ասաց նորան ուսուցիչը, չպէտք է իծաղել խեղճերի վերալ։ Ընդհակառակն՝ մէկ այնպիսի ան արա, ինչ որ կը վայելէ քեզ։ Մի մի քան կոպէկաց գիր տրեխների մէջ և մենք թագնուենք։

Աշակերտը փողը գըկց տրեխների մէջ և երկուսով
թագնուեցան:

Եկաւ գիւղացին, ոտքը դրեց իւր տրեխի մէջ և զգաց
որ ոտքի տակը մի կոշտ բան կայ. Նա խոնարհեցաւ և վեր
առաւ փողը: Նորա դէմքի վերայ մէծ զարմանք երևեցաւ:
Նա շուր ու մուր տուեց արծաթի դրամը, նայեց իւր շուր-
ջը, բայց ոչ ոքի չտեսաւ: Յետոյ փողը ձգեց գրպանը: Բայց
որքան զարմացաւ, երբ տեսաւ միւս դրամը:

Խեղճը ծունկ չոքեց, աչքերն ու ձեռքերը բալձրացըց
դէպի երկինք և ալազակեց.

— Ո՞հ, ողորմած Աստուած. ճշմարիտ է, որ Դու երբէք անտէր չես թողում նոցա, որոնք լոյսները դնում են Քեզ վերայ: Դու գիտէիր, Երկնալին Հալը, որ Կինս հիւ անդէ, երեխայքս հաց չունեն, ես էլ ուրիշ ապրուստի ճանապարհ չունեմ: Փառք Քեզ, Տէր, Դու չես կորցնում Քո ստեղծածին:

Աշակերտը սաստիկ սրտաշարժուել էր. և արտասուզը
թրջում էր նորա արտևանունքը:

ՆՈՅՆԱՆԻՇ.—Հեւանդ, տկար:

I. ա.—Ապրել-ապրուստ, հագնել-հագուստ, կորչել-կորուստ, ուտել-ուտեստ, պահել-պահեստ:

87. Ըստ պայլութեան փոխարէն Շարեգործութիւն.

Սի հարուստ վաճառական երեսուն հոգի նշանաւոր
մարդիկ հրաւիրեց իւր մօտ հացկերութիւն։ Այդ ժամանակ
ոսկեխալտ ձկներն ալնքան հազիւագիւտ էին, որ ամէն մէկը
մի ոսկի արժէր։

Նստեցին Հաց ուտելու: Երբ արդէն մի քանի տեսակ
կերակուր վայելել էին, սպասաւորը բերեց մի ծածկած աման
ու դրեց սեղանի վերալ:

—Պարոններ, ասաց վաճառականը, այս է ահա այն
ոսկէ ձկները, որ իմ կինը պատրաստել է ձեզ համար։ Յուս
ունեմ, որ կը հաւանէք։

Այս խօսքերն ասելով՝ նա բարձրացրեց ամանի խուփը. բայց ձկների փոխանակ՝ նորա մէջը դրած էր երեսուն հատ շողլշողուն ոսկի: Վաճառականը պատմեց հիւրերին, թէ ինքն ու իւր կինը մտածելով որ իրանց շրջակալիքում կան շատ աղքատներ, որոնք հազիւ են՝ կարողանում ցամաք հաց ճարել, ոսկեխայտ ձկները աւելորդ շուալլութիւն համարեցին և ցանկացան փոքր ինչ թեթևացնել նոցա թը-շուառ գրութիւնը: Յետոյ խնդրեց որ՝ հիւրերը այն ոսկի-ներից մի մի հատ վեր առնեն և նոցանով մխիթարեն մի մի աղքատի: Բայց նոքա այնքան հաւանեցան տան տիրոջ գեղեցիկ բարեգործութեանը, որ իրանք էլ մի մի ոսկի աւելացըին այն երեսուն ոսկու վերայ, որպէս զի աւելի շատ աղքատներ մասնակից լինեն իրանց սեղանին:

U. Նայական

88. Ազահութեան հետեանդր.

Երեք մարդ միասին ճանապարհորդելիս գանձ գտան ու
բաժանեցին իրանց մէջ։ Բայց որովհետեւ նոցա ճանապար-
հի պաշարը պակասել էր, ուստի իրանցից փոքրին ուղար-
կեցին քաղաք՝ կերակուր բերելու։ Նա գնաց, և ճանապար-
հին այսպէս էր մտածում ինքն իրան։ «Ես ալժմ հարուստ
եմ. բայց աւելի հարուստ կը լինեմ, եթէ ընկերներիս մասն
էլ Ես վեր առնեմ։ Եւ այս մի գժուար բան չէ։ Կը թու-
նաւորեմ այն կերակուրը, որ պէտք է գնեմ. իսկ իմ մասին
կ'ասեմ, որ արդէն ճաշել եմ»։

Բայց միւս ընկերները այսպէս էին խօսում. «Ինչու մենք բաժին տուինք այն մատաղահաս տղալին. եթէ նորա բաժինն էլ մենք վեր առնենք, աւելի կը հարստանանք: Ուրեմն հենց որ նա գալ, իսկոյն սպանենք»:

Պատանին տարաւ թունաւորած կերակուրը։ Ընկերները
իսկոյն հանեցին սրբը և սպանեցին նորան։ Իսկ լետոյ կե-
րակուրն ուտելով՝ իրանք էլ մեռան։ Գաձը մնաց տնտեր։

Ա. Նազարեանց.

Ա. — Ուսումնարան—գլեզար ցի, քաղաքացի—
Պատուցիչ, նկարիչ—հիւանդանոց, ազգանուանոց—ձիա-
ւոր, զօրաւոր—տնակ, նաւակ—ըլսորդ, հանապարհորդ
—հայրիկ, մայրիկ-Հայաստան, Վրաստան—ուսելիք, խմե-
լիք—ղասումնական, աշխարհական—զարմանալիք, սի-
րելիք—սոսեղէն, կանաչեղէն—ուժեղ, համեղ—փայ-
լուն, սիրուն—հոտաէտ, օգտաէտ—համաձայն, հա-
մապատասխան—արծաթեալ, երկաթեալ—ձմերալին,
անձրեալին—դպրուած, մազուտ—ջգէտ, տգեղ—տա-
րաբաղա, տարագնաց—անտուն, անտէռ:

Բ.—Գործ—գործել, երգ—երգել, գիր—գրել, ջուռ—ջրել,
շնչ—շնել, սէր—սերել.—Հնչել—հնչին, գուշել—գո-
ւին, խօսել—խօսք, հնարել—հնարք, թռչել—թռչիու-
տել, կտրել—կտրտել, վազել—վազվրդել, ծակել—
ծակիչկել, հանդաստոքէն—կուրոքէն, քաղցլաքառ-
բարելամարար:

89. ՎԵՀԱՆՃՆՈՒԹԻՒՆ

Մի շատ հարուստ մարդ ծերութեան օրերում ցանկա-
ցաւ իւր ունեցած կայքը բաժանել իւր երեք որդքերանց
մէջ: Իւրաքանչիւրին իւր մասը տալուց յետոյ՝ նա ասաց.
—Մնում է էլի մի թանկագին ադամանդ: Ես այն կը
տամ ձեզանից նորան, ով մի վեհանճնութիւն կ'անէ: Իսկ
դորա համար ես ձեզ երեք ամիս ժամանակ եմ տալիս:

Ծուտով որդիքը ցըռուեցան. և նշանակած ժամանակին
կրկին վերադարձն հալրական տունը: Նոքա սկսեցին պատ-
մել նորան իրանց արած վեհանճնութիւնները:

Անդրանիկ որդին ասաց.

—Իմ ճանապարհորդութեան ժամանակ մի օտարական
յանձնեց իւր բոլոր հարստութիւնը: և թէպէտ նա ինձ-
նից ոչ մի ստացական չառաւ, այսուամենայնիւ ես հաւա-
տարմութեամբ վերադարի նորան իւր գուքը:

—Որդեակ, պատախանեց հալրը, որւ արել ես այն,
թնչ որ պէտք է անէիր, և այն մարդը, որ ուրիշ տեսակ
կը վարուէր՝ տգէտ է. որովհետև ազնիւ լինելը մարդուս
համար մի պարտականութիւն է: Քո արածը բարեգործու-
թիւն է, ոչ թէ վեհանճնութիւն:

Յետոյ խօսեց միջնակ ոբղին.

—Իմ ճանապարհորդութեան միջոցին մէկ օր ես անց
էի կենում մի լճի եղերքովը. մի փոքրիկ երեխայ՝ քիչ էր

մնացել որ ջուրն ընկնէր: Բայց ես իսկովն օգնութեան հա-
սալ նորան ե, չխնայելով իմ կեանքը, ազատեցի նորանը:

—Ենորհաւորում եմ, ասաց հալրը. բայց դարձեալ այդ-
գործի մէջ վեհանճնութիւն չկալ, այդ միայն մեր մարդկու-
թիւնն է: Դու արել ես այն, ինչ որ մեզանից իւրաքան-
չիւրը պէտք է անի ուրիշներին:

Վերջապէս խօսեց կրտսեր որդին.

—Մէկ օր ես իմ արիւնարըու թշնամուն տեսալ իսորը
քնած մի անդունդի ծալրում: Ամենաթեթև քամին անգամ
կարող էր նորան անդունդը գլորել. բայց ես նորան զար-
թեցը մեղմարար և ազատեցի վտանգից:

—Ո՛չ, որդեակս, աղաղակեց բարի ծերունին, նալելով
նորա վերալ քնքշաբար. ադամանդը քո՞նն է: Ի՞նչ վեհանՃ-
նութիւն է. լաւութիւն անել իւր թշնամուն:

ՀԱՄԱՌՈՅ ԿՐԿՆՈՒԹԻՒՆ

II.

Գ.—(Ա) Աննա, Մարթա.—Սա, դա, նա.

(Բ) Սուրբ, երբ.—հինգշաբթի, ուրբաթ.

(Ե) Բերան, դերձակ.—մեզը, նեղ.—սեն եակ, Գը-
րիգորեանց.

(Ե) Բոպէ, կիւրակէ.—աղուէս, հանդէս, այսպէս.

(Ծ) Կանգնած, նստած.

(Հ) Ճանապարհ. աշխարհ.

(Զ) Արձակ, բարձ.

(Ց) Քահանայ, երկաթեալ.—նտյել, հրամայել.

—զգալ արանք, վկայական.—զգալուն, ծա-
ռալութիւն.

(Ո) Որդի, ոսկի.—բոլոր, խոշոր.—գող, գող.—բրդոտ,

մազոտ. — գրել ով, կով. — Յակով, Սիմէոն, —
Պետրոս. — Օգոստոս.

(ի) Խառնել, բռնել.

(վ) Վարդ, վեղար, վիճակ. — Նաւակար, արա-
գակազ:

(ի) Աւերել, խաւար. — Հիւանդ, հաշիւած, արիւն,
աղբիւր:

(իւ) Դժուար, ձգուիլջու և ու դո քան:

(եւ) Արև, տերեւ:

Դարձած ու բաց յաղոյք պամարձա մայում ոչ բայալ
ըմբառութեածք և բայանքն ոչ բայալ:

90. Բիւրապատիկ

Ա.

Մի գիւղում բնակում էին մի մարդ ու կին: Մարդը
շատ ժամասէր էր, Ամէն օր եկեղեցի էր գնում և օրը մի
գրոշ էր տալիս քահանաին: Քահանան էլ ամէն անդամ
նորան ասում էր.

— Օրհնուիս դու. Բիւրապատիկը քեզ մէկի փոխանակ
հազար տալ:

Նա էլ ուրախանում էր և ինքն իրան ասում. «Ալ
լաւ բան է. մէկ տալիս եմ հազար պէտք է տալ»:

Ալսպէս ամէն օր մի գրոշ տալով՝ իւր բոլոր ունեցածը
տուեց քահանաին. իսկ ինքը աղքատացաւ:

Մէկ օր կինը ասաց ամուսնուն.

— Վեր կաց, գնա քահանաի մօտ. մի հազարը քեր,
տանք հացի, մինչև որ մէկէլ հազարներն էլ կամաց կամաց
կը տալ:

Ամուսինը գնաց:

— Օրհնեա, տէր:

— Աստուած օրհնէ:

— Տէրտէր ջան, ես քեզ տուի, դու ինձ հազար հազար
խոստացար, հիմա բեր մէկ հազարը տուր՝ տանեմ, այն
միւսներն էլ՝ լետոյ կը գամ՝ կը տաս:

— Օրհնուած, ասաց քահանան. դու ինձ տուիր, որ
Բիւրապատիկը քեզ մէկին հազար տայ:

— Բիւրապատիկն ով է:

Քահանան նորան մի ճանապարհ ցոյց տուեց՝ ասելով.

— Ալս երկայն ճանապարհով կը գնաս, քեզ կը հան-
դիպի մի մեծ մարդ, որ նստած կը լինի ոսկէ աթոռի վե-
րայ: Բիւրապատիկը նա է, ասա նորան. «Ինձ տէրտէրն ու-
զարկեց. մէկ տուել եմ, հազար պէտք է տաս»:

Նա էլ գնաց այն երկալն ճանապարհով: Նորան հան-
դիպեց մի քարանձաւ. ներս մտաւ և ինչ տեսաւ: Քառա-
սուն երկելի գողեր շարուել են: Սորան պատիւ են տալիս,
տեղ են բաց անում և նստեցնում են իրանց մէջտեղը:

— Ո՞վ ես դու, հարցըին նորան. ալսքան ժամանակ է,
մեր ահից մարդ չէր եկած ալս կողմը. որտեղից ես գալիս
և ուր ես գնում:

— Գնում եմ Բիւրապատիկի մօտ, պատասխանեց նա.
մէկ տուել եմ, հազար պէտք է ստանամ:

Գողերն ասացին.

— Եղալը, ալդ ինելքը ինելք չէ. թո՞ղ ալդ: Արի ալստեղ,
մենք քեզ մի բուռը ոսկի կը տանք, վեր կաց. քո տունը
գնա:

— Ո՞չ, ասաց նա. ալդ փողը արդար վաստակ չէ:

— Եթէ ալդպէսէ, ասացին գողերը, դու արդար մարդ ես:
Երբ գնաս, Բիւրապատիկն հարցըն, թէ միւս աշխարհումը
մեզ համար էլ տեղ կալ:

— Աչքիս վերալ, ասաց նա ու գնաց:

Գնաց հանդիպեց մի ծերունու, որ նստած էր մի քա-
րի մօտ: Նա անդադար ասում էր. «Փառք քեզ, Աստուած,
փառք քեզ»: Եւ որքան ասում էր, այնքան ոսկի էր բըզ-
խում քարից:

ծերունին հարցըեց այս մարդուն. ասած զվազձ
 —Եղբայր, ուրա ես գնում: Ի՞ն դժոյ անիշ զարտունու
 —Բիւրապատիկի մօտ, պատասխանեց նա, մէկ տղւել եմ,
 հազար պէտք է ստանամ: Ասաց ասաւ, ծն. ամուսի
 —Արի այս ոսկուց երկու բուռը տամ, լետ գնա,
 ասաց ծերունին:
 —Ոչ, ասաց նա. այդ ոչ իմ տուածն է, ոչ իմ աշխա-
 տածը. ես դորան արժանի չեմ:
 —Եթէ ալգպէս է, ասաց ծերունին, երբ գնաս Բիւրա-
 պատիկի մօտ, հարցըն, թէ ոսկին երբ պէտք է կտրուի
 այս քարից:
 —Աչքիս վերալ, ասաց նա ու գնաց:
 ծանապարհին տեսաւ մի ալգետէր, որ հարցըեց.
 —Հնածին, ուր ես գնում:
 —Գնում եմ Բիւրապատիկի մօտ, պատասխանեց նա,
 մէկ տուել եմ, հազար պէտք է ստանամ:
 —Երբ գնաս, ասաց ալգետէրը, Բիւրապատիկին հար-
 ցըըն, թէ ինչու, երբ իմ ալգու պատը շինում եմ, բոլոր
 կանաչ պտուղները չորանում են. իսկ երբ պատը քանդում
 եմ՝ կանաչում են:
 —Գլխիս վերալ, ասաց նա ու գնաց:
 ծանապարհին տեսաւ մի քահանալ, որի մէջքին պատ
 էր շարուած և ինքը տակը տնքտընքում էր:
 —Որդի, հարցըեց քահանան, ուր ես գնում:
 —Գնում եմ Բիւրապատիկի մօտ, պատասխանեց նա.
 մէկ տուել եմ, հազար պէտք է ստանամ:
 Քահանան ասաց.
 —Գնա Բիւրապատիկին հարցըն, թէ ես այս պատից
 երբ պէտք է ազատուեմ:

ար ցի զարտունու բնութագի մաս որպան անիշ Ս
 ա ուրին մրաց զարտ զարտ զարտ զարտ զարտ
 Գնաց, տեսաւ, որ մէկ մեծ մարդ նստած է ոսկի աթո-
 ռի վերալ: ասաւ արու և զարտունու զարտ արտ ան
 նա հարցըեց.
 —Ուր ես գնում:
 —Բիւրապատիկը դու ես, հարցըեց ճանապարհորդը:
 —Ալո՛, ես եմ, պատասխանեց, ինչ ես ուզում:
 —Մեր քահանան ուղարկեց ինձ, ասաց նա: Ես քեզ
 մէկ տուել եմ, դու ինձ հազար պէտք է տաս:
 Բիւրապատիկն ասաց,
 —Կը գնաս տունդ, բակիդ մէջ մի թթենի կայ. փո-
 քիք նորա տակը, մի կարս լիք ոսկի դուրս կը գալ. վեր
 առ քո մէկի փոխանակ հազարանոց:
 ծանապարհորդը բացի դորանից՝ ինչ որ իրան պատուի-
 րել էին ասելու, ամէն բան ասաց Բիւրապատիկին և ամե-
 նի պատասխանն էլ ստանալով՝ վերադարձաւ:
 Հասնելով պատի մէջ տնքող քահանալին՝ ասաց.
 —Փու այդ տեղից այն ժամանակ կ'ազատուես, երբ
 Աստծուն մեղալ կը գաս:
 —Ես ինչպէս մեղալ գամ Աստծուն, ասաց քահանան,
 և խօսքը բերանից հանեց թէ չէ՝ իսկոյն պատի հետ միա-
 սին գետինը մտաւ:
 Նա լետու գնաց հասաւ ալգետիրոջը և ասաց.
 —Եթէ ալգուդ պատերը քանդես, որ անց ու դարձ ա-
 նողները ուտեն պտուղներից, ալգիդ կը կանաչի:
 Դեռ խօսքը բերանումն էր. նա իսկոյն գնաց, պատերը
 քանդեց և ալգին կանաչեց:
 ծանապարհորդը գնալով ծերունու մօտ, ասաց.
 —Քանի որ դու բերանիցդ Աստծունը չես պա-
 կասեցնի, քարից էլ ոսկին չի պակասի:
 Ծերունին ասաց.

— Միթէ մարդ իւր բերանից Աստուծոյ անունը կը պակասեցնի. փառք Աստուծոյ:—Ասաց չասաց՝ քարի միւս երեսից էլ ոսկի դուրս թափուեցաւ. առաջուանից շատ:

Նա եկաւ գողերի քարանձաւը և նոցա ասաց.

—Եթէ ձեր գողութիւնը թողնէք, միւս աշխարհումը տեղ ունէք:

Գողերը թողին քարանձաւը, գնացին իրանց յանցանքը ապաշխարեցին ու փրկուեցան:

Վերջապէս մեր ճանապարհորդը եկաւ իրանց տուն. կանչեց կնոջն ու ասաց.

—Ա! կին, բահ ու թի բեր:

Մարդ ու կին վեր առանց բահն ու թին, փորեցին թթենու տակը և մի կարաս գտան՝ ոսկով լիք: Օրը մթնեց

և կարասը թողին, որ առաւօտը հանեն:

Դիշերով դրացիները իմացան, եկան կարասը գողանալու. բայց տեսնելով, որ մէջը գեղին հող է, շուր տուրն տան տիրոջ այգիումը: Կարասը կոտրուեցաւ ու հողը ցըրուեցաւ:

Առաւօտը զարթեցան. Ի՞նչ տեսան: Այգու չորս կողմը ոսկի էր փոռուել: Ամուսինը գոռաց.

—Քա, կնիկ, ցախաւելը բեր. բոլոր այգին ոսկի է բուսել:

Աւելեցին շողշողուն ու զրբնգզրբնգան ոսկիքը. մէկի փոխանակ ոչ թէ հազար, այլ անթիւ. հազարներ ստացան, հարստացան և Աստծուն փառք տուին:

Գ. Վ. Արուանչուելուն:

Առաջամատ մերս և զերմակ

այս ոչ բնումա բնասամ բնիւմակ այս ոչ իմադ—

բնույս ոչ մերս չի սիսաց միշտամակ

բայս միշտոյնք

55	(Առաջամատ) — Զարդն ծկոյսել	51
56	(Ճամփար)	51
57	(Ճամփար)	51
58	8 Ա (Յ Ա Ա) — Ապրիլուցամ	52
59	(Առաջամատառը յ. թ.) — Աղջ վարդանիշ	52
60	I. ՀԱՅԿԱԿԱՆ ԿԵԸՆՔ	52
61	(Առաջամատ)	52
62	C. ԲՆԱՌԹԵԱՆ պատկերներ	52
63	(Առաջամատ)	52
64	(Առաջամատ)	52
65	Հայութական միջանելեր երես	52

1. Առաւօտեան արշալուսը — (Բաֆֆի)
2. Արշալուս — (Մ. Մուշեղեանց)
3. Առաւօտը Վանալ գիւղերում — (Պ. Վ. Արուանձտեանց)
4. Մալիս. — Ա., Բ., Գ., (Պ. Պոռշեանց)
5. Անտառ — (Թարգմ. Գ. Բարխուդարեանց)
6. Մալիս — (Հ. Ղ. Ալիշան)
7. Մալիսուալ առաւօտ — (Ս. Շահազիզեանց)
8. Գարնանալին առաւօտ — (Բաֆֆի)
9. Գարուն — (Ընծալացի)
10. Գարուն — (Ս. Սափարեանց)
11. Վանալ այգեստանքը — (Գ. Վ. Արուանձտեանց)
12. Մարգագեանի տեսքը — (Ա. Թոտինեանց)
13. Գարնան ջրերը — (Պ. Պոռշեանց)
14. Հօրուտ — Մօրուտ — (Ս. Գիւղատեանց)
15. Ամարալին առաւօտ — (Բաֆֆի)
16. Ամպեր — (Կ. Կ. Մ. Շահազարեանց)

17.	Ամարալին միջօրէ — (Շահվերդեանց)	.	.	35
18.	Ջրերը — (Ա. Եղեկեան)	.	.	36
19.	Յուլիսի շոգը — (Բաֆֆի)	.	.	36
20.	Պարտիզան — (Ղ. Աղալեանց)	.	.	37
21.	Շինականի երգ — (Գ. Վ. Սրուանձտեանց)	.	.	38
22.	Աշուն — (Ա. Արարատեանց)	.	.	38
23.	Աշուն — (Ա. Փանոսեան)	.	.	39
24.	Աշնան պատկերը — (Պ. Պոռշեանց)	.	.	41
25.	Աշնան տերևներ — (Կ. Մ. Շահնազարեանց)	.	.	42
26.	Փոթորիկ — (Խ. Աբովեանց)	.	.	42
27.	Փոթորիկը անտառային ձորում — (Ա. Ռոտինեանց.)	.	.	43
28.	Փոթորկից յետոյ — (Ա. Եղեկեան)	.	.	44
29.	Մըրիկը — (Թարգմ. Մ. Նալբանդեանց)	.	.	45
30.	Ջմեռը գիւղում — (Ա. Արարատեանց)	.	.	46
31.	Ջմերալին առաւօտ — (Խ. Աբովեանց)	.	.	47
32.	Ջմերալին գիշեր — (Պ. Պոռշեանց)	.	.	48
33.	Ջիւն — (Դամառ. Քաթիպա)	.	.	49
34.	Ջմերալին գիշեր — (Ա. Սափարեանց)	.	.	50
35.	Տարուալ չորս եղանակները — (Բաֆֆի)	.	.	51
36.	Տասերկու ամիսները — (* — *)	.	.	53
37.	Օջալ — (Ա. Արարատեանց)	.	.	58
38.	Պրիջակ — (Պ. Պոռշեանց)	.	.	59

Բ. Տուն և Բնուանիք

39.	Մարաք — (Ա. Արարատեանց)	.	.	61
40.	Երկրագործական գործիքներ — (Ա. Ռոտինեանց)	.	.	62
41.	Բաբկենի հունձը — (Մ. Պալեան)	.	.	63
42.	Կալոցը — (Յ. Գեղամեան)	.	.	65
43.	Կալի երգ — (Ա. Արարատեանց)	.	.	66
44.	Երկրագործ — (Կ. Մ. Շահնազարեանց)	.	.	67
45.	Հովուական կեանք — (Հ. Ղ. Ալիշան)	.	.	69
46.	Հովուի երգը — (Բաֆֆի)	.	.	70
47.	Երկրագործի երգ — (Սըմնդ)	.	.	71
48.	Ջների մասին — (Եղ. Պետուց)	.	.	72
49.	Ճաշի սովորութիւն — (Խ. Աբովեանց)	.	.	73
50.	Հացթուխ Մըրոն — (Յ. Գեղամեանց)	.	.	74
51.	Առաւօտեան աշխատանք — (Բաֆֆի)	.	.	76
52.	Աստղերը իբրև ժամանակի չափ — (Պ. Պոռշեանց)	.	.	77
53.	Աստղեր — (Թարգմ. Գ. Բարխուդարեանց)	.	.	78
54.	Առաւօտեան երգ շինականաց — (Գամառ. Քաթիպա)	.	.	80
55.	Փողի նշանակութիւնը — (Խ. Աբովեանց)	.	.	82
56.	Հողը փող, փողը հող. — (Ա. Արարատեանց)	.	.	83
57.	Գիւղացին հարուստ Քաղաքացուն — (Ուհլանդ)	.	.	84
58.	Բարեկիրթ հայ աղջիկ — (Խ. Աբովեանց)	.	.	85
59.	Բարեկիրթ հայ տղայ — (Նոյն)	.	.	86
60.	Հայ կտրիճ — (Ա. Եղեկեան)	.	.	88
61.	Արտաւազդ — (Բաֆֆի)	.	.	89
62.	Ջիրիտ — (Պ. Պոռշեանց)	.	.	91
63.	Ջերեդ գցող Աղասին — (Խ. Աբովեանց)	.	.	93
64.	Քաջի ձին — (Յ. Գեղամեանց)	.	.	94
65.	Մալը — (Վ. Հիւգոյ)	.	.	95
66.	Պառաւի օրհնանքը — (Ղ. Աղալեանց)	.	.	96

67. Մայրիկս—(Մ. Մամուրեան) 97
 68. Բառախաղ և Շուտասելուկ—(Գ. Յովհաննիսեան) 99
 69. Օրօր—(Պ. Պոռշեանց) 102
 70. Մշակ—(Բաֆֆի) 103
 71. Երկու խօսակցութիւն—(Ուհանակ) 105
 72. Ստահակ որդին—(Մ. Մամուրեան) 107
 73. Երկու ապտակ—Մ. Եթմեքեան) 108
 74. Կեղծ բարեկամները—(Խ. Աբովեանց) 110
 75. Մի հոգի երկու մարմնի մէջ.—(***) 111
 76. Հեն զրոյց—(Լ. Աղալեանց) 112
 77. Որդիական սէր—(***) 117
 78. Մօր աչքերը—(Նոյն) 118
 79. Հովիւր—(Մ. Մամուրեան) 119
 80. Բարեխնամ թագաւորը—(***) 121
 81. Թեթև պակասութիւններ—(Մ. Մամուրեան) 122
 82. Զարթեցնող ժամացոյց—(***) 124
 83. Երջանիկ մարդը—(Տոլստոյի) 125
 84. Ճգնաւորի հացը—(Ս. Մանդինեան) 126
 85. Աստուած ամէն բան տեսնում է:—(***) 127
 86. Կարեկցութիւն—(Նոյն) 128

- | | | |
|--|--|-----------|
| 87. Շռալութեան փոխանակ Բարեգործութիւն—(Ս. Նազարեանց) | | 130 |
| 88. Աղահութեան հետևանքը—(Նոյն) | | 131 |
| 89. Վեհանձնութիւն—(***) | | 132 |
| 90. Բիւրապատիկ—(Գ. Վ. Սրուճնձտեանց) | | 134 |
| | վառն | վառն |
| | մերժութ | մերժութ |
| | պատմութ | պատմութ |
| | զանցուց | զանցուց |
| | նորունի | նորունի |
| | միջաշ զամ | մակաշ զամ |
| | ելովչան | ելովչան |
| | նուռի | նուռի |
| | ինչունի | ինչունի |
| | մայուն | լուսն |
| | լուսաց վեն (ինը դմուռ բար 01 իյուրածուն) | — 08 |
| | մաս քղ Ծ վաճ է զածի (նոց լացմատոցք | — 26 |
| | ացմատոցք | ացմատոցք |
| | զիւրսիսի | զիւրսիսի |
| | շամալորդը | շամալորդը |
| | լուս լու | լուս լու |

Է	Հ	ՍԱԿԱԿԱՆԱԼԱՆԻ ԵՐԱՐՔԻ ԲՆԵԱ(Ք)	88
13	13 կ	բուսած (բնամահարող Ո . ի . բուսած	(*—մ. թ ելամարք Յ. Յ. 68
14	11 կ	մագի	մագի
36	13 կ	հըեղեն	հըեղէն
38	4	լուսնակը	լուսնակը
44	6 կ	շուղանը	շուշանը
47	3 կ	կսպում	կապում
57	2 կ	նար Տարին	նոր Տարին
66	2	աջիսոյժ	աշխոյժ
82	11 կ	թւում	թուում
83	3	մտ ուկ	մտրուկ
89	—	Ոտանաւորի 10-րդ տունը (մի քանի գըր-քում) պէտք է լինի 3-րդ տուն:	
92	3 կ	գըուանքա	գըուանքայ
110	9	կախուեր	կախուէր
120	2	դուլլահը	Աբդուլլահը
125	14 կ	կը առլ	կը տալ

*.) «Վ» նշանակում է էջի վարելց է հաշուած:

Ա. Ը.

1986

ՀՀ Ազգային գրադարան



NL0337431

